

ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ
АКАДЕМИЯ ПРОБЛЕМ ГУМАНИЗМА

АННА АСАТРЯН

СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ

-85-

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2017

INSTITUTE OF ARTS NAS RA
COMPOSERS UNION OF ARMENIA
HUMANISM PROBLEMS ACADEMY

ANNA ASATRYAN

COMPOSERS UNIUN OF ARMENIA

-85-

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2017

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

-85-

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ԳՄԴ 78(091)
ՀՏԴ 85.31
Ա 732

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի
նախագահության որոշմամբ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ
Ա 732 «Հայաստանի կոմպոզիտորների միություն – 85». - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017. - 96 էջ:

Ընթերցողին ներկայացվող աշխատության մեջ առաջին անգամ ի մի է բերվում Հայաստանի կոմպոզիտորների միության պատմությունը: Հեղինակը թերթում է ՀԿՄ ստեղծման պատմության էջերը, հետամուտ լինում նրա անցած պատմական ուղու ելևէջներին, համառոտ շարադրում 85-ամյա գործունեության ընթացքում արձանագրված ձեռքբերումները:

Հասցեագրված է կոմպոզիտորներին, երաժշտագետներին, երաժիշտ-կատարողներին և ընթերցող լայն շրջաններին:

ISBN 978-5-8080-1301-8
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017
© Ա. Ասատրյան, 2017

Սիրով նվիրում եմ
հայ երաժշտության անխոնջ մշակներին՝
հայ կոմպոզիտորներին ու երաժշտագետներին,
ովքեր ստեղծագործական ու կազմակերպական
անդուլ աշխատանքով ու անմնացորդ նվիրումով
նպաստել ու նպաստում են
հայ երաժշտարվեստի զարգացմանը,
իրենց հարազատ օջախի՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
առաջընթացին:

Հեղինակի մասին

Ծնվել է 1968թ. սեպտեմբերի 1-ին Երևանում՝ Խորհրդային Հայաստանի հայտնի քաղաքական ու պետական գործիչ Գրիգոր Ասատրյանի ընտանիքում: 1983թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ն.Կ. Կրուպսկայայի անվան N 19 հայկական միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և Երևանի մանկական ձայնի պահպանման երաժշտական դպրոցը: 1987թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը, եղել է Լենինյան կրթաթոշակառու: 1992թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը, եղել է Կոմիտասի անվան կրթաթոշակառու, ընտրվել է Կոնսերվատորիայի գիտական խորհրդի անդամ:

1991-2003թթ. դասավանդել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 2000-2002թթ. Հայկական բաց համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի դեկանն էր, ընտրվել է համալսարանի գիտական խորհրդի անդամ:

2001թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել ատենախոսություն «Տիգրան Չուխաճյանի օպերաները» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (Ա N 01537):

2002թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, 2003-ին նշանակվել է ինստիտուտի գիտական քարտուղար, ընտրվել գիտական խորհրդի անդամ: 2004-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է: ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտության որակավորման մասնագիտական քննական հանձնաժողովի նախագահն է:

2005-ից մինչ օրս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալն է:

2005-2007թթ. ղեկավարել է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը», իսկ 2008-2010թթ.՝ «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործական ժառանգությունը» թեմաները:

2008թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հայ երաժշտական թատրոնը ԺԹ դարի երկրորդ կեսին. սկզբնավորումը և զարգացումը» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2012թ. ստացել է արվեստագիտություն մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: Ա.Ասատրյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն:

2009-2016թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի նորաստեղծ (ներկայումս՝ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի) բաժինը:

2016-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչն է:

Հեղինակ է 10 մենագրության և ավելի քան 160 գիտական հոդվածների՝ տպագրված Հայաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, Լիբանանում, Իսրայելում լույս ընծայված գիտական ժողովածուներում և հանդեսներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: Ա.Ասատրյանի գիտական խմբագրությամբ լույս են տեսել շուրջ 40 գիրք և գիտական հոդվածների ժողովածու:

2014-ից «Կանթեղ» գիտական պարբերականի գլխավոր խմբագիրն է: «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ է:

Մասնակցել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված «Արդյունավետ աշխատող 2014» և «Արդյունավետ աշխատող 2016» մրցույթներին և հաղթող ճանաչվել «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» անվանակարգում:

Տիգրան Չուխաճյան հիմնադրամի հիմնադիր նախագահն է (2002-ից):

Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահի տեղակալն է:

Հայաստանի կոմպոզիտորների միության (2013) և Հայաստանի թատերական գործիչների միության (2013), Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի (2015) և Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի աջակցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ 2009թ. նշանակվել է Հանրային խորհրդի անդամ:

2009թ. մայիսի 31-ին Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի առաջին գումարման ավագանու անդամ և կատարել Ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պարտականությունները:

2013թ. մայիսի 5-ին Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի երկրորդ գումարման ավագանու անդամ, կատարել Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամի պարտականությունները:

2017թ. մայիսի 14-ին Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի երրորդ գումարման ավագանու անդամ: Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է (2013-ից):

2014թ. և 2017թ. ընտրվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական ներկայացուցչական ժողովների պատգամավոր՝ Արարատյան Հայրապետական թեմից:

Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Գովեստագրով (2003), ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2005) և Ֆրիտյոֆ Նանսենի մեդալով (2014):

«Կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանի կապակցությամբ» պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ «Ոսկե հուշամեդալով» (2008):

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. հոկտեմբերի 14-ի ՆՀ-259-Ա հրամանագրով ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ Ա.Ասատրյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում (Վկայական 00102):

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի որոշմամբ՝ «Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, Երևան քաղաքի Ավագանու աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար» 2016թ. պարգևատրվել է Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալով (N 352):

ՆԱԽԵՐԳԱՆՔ

«Աշխարհում պետք է իշխի հումանիզմը:
Իսկ հումանիզմն ու երաժշտության արվեստն անբաժան են»
Արամ ԽԱՉԱՏՐՅԱՆ[1]

Սիրելի՛ ընթերցող:

Ճիշտ 180 տարի առաջ՝ 1837-ին, Կ.Պոլսում ծնվեց հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանը (1837-1898), ում երաժշտությունը նշանավորեց մի ամբողջ պատմական դարաշրջան և խոր հետք թողեց հայ դասական երաժշտության պատմության մեջ:

Ինչ իմանար Տ.Չուխաճյանը, որ իր ծննդյան օրից 95 տարի անց՝ 1932 թվականին, իր հայրենիքում, որտեղ նա այդպես էլ չեկավ, պիտի ստեղծվի Հայաստանի կոմպոզիտորների միություն, որը, անցնելով տասնամյակների միջով, իր շուրջը պիտի համախմբեր հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին և երաժշտագետներին և այսօր բոլորեր իր ծննդյան 85-ամյակը:

*Անցած 85 տարիների ընթացքում Հայաստանի կոմպոզիտորների միության աշխատանքները հաջողությամբ ղեկավարեցին հայ մշակույթի երախտավորներ **Արտաշես Կարապետի Ոսկերչյանը** (1908-1993), **Մուշեղ Ղազարոսի Աղայանը** (1883-1966), **Հարո Լևոնի Ստեփանյանը** (1897-1966), **Աշոտ Մովսեսի Սաթյանը** (1906-1958), **Գրիգոր Եղիազարի Եղիազարյանը** (1908-1988), **Ղազարոս Մարտիրոսի Սարյանը** (1920-1998), **Էդվարդ Միքայելի Միրզոյանը** (1921-2012), **Լևոն Ալեքսանդրի Զաուշյանը** (ծնվ. 1946) և **Ռոբերտ Բաբկենի Ամիրխանյանը** (ծնվ. 1939):*

*2013-ից Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահն է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ հիմնի հեղինակ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր **Արամ Արամի Սաթյանը**:*

Անցած տասնամյակների ընթացքում Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած համագումարները, պլենումները, հայ երաժշտության տասնօրյակները, փառատոները, մրցանակաբաշխությունները, ստեղծագործական երեկոները, նոր ստեղծագործությունների քննարկումները և մի շարք այլ միջոցառումներ, ինչպես նաև Հայաստանի կոմպոզիտորների միության «Դիլիջան»

---

[1] *Армянские композиторы об искусстве (Сост. Я.Хачикян), Ереван, 2007, стр. 262.*

ստեղծագործական տան Բեթհովենի անվան համերգային դահլիճը (1984) նպաստեցին հանրապետության երաժշտական կյանքի զարգացմանը և ժամանակակից հայ երաժշտության պրոպագանդմանը: Հայաստանի կոմպոզիտորների միությունը սերտորեն համագործակցել է հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվների և մենակատարների հետ:

Կապեր հաստատվեցին Մոսկվայի ու միութենական հանրապետությունների և արտասահմանյան երկրների կոմպոզիտորական կազմակերպությունների հետ. կազմակերպվեցին փոխադարձ համերգներ, երաժշտության օրեր, հեղինակային համերգ-հանդիպումներ: Միության անդամները մասնակցեցին արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների՝ փառատոների, կոնֆերանսների, հեղինակային համերգների, կոնգրեսների, կոլոկվիումների, մշակույթի օրերի, փոխադարձ հանդիպումների, հյուրախաղերի, մրցույթների են: Հայ կոմպոզիտորների գործերը հնչեցին աշխարհի տարբեր երկրներում. դրա շնորհիվ հայ երաժշտությունը ձեռք բերեց միջազգային լայն ճանաչում: Հայաստանի կոմպոզիտորների միությունը հյուրընկալեց իր արտասահմանցի գործընկերներին:

Հայաստանի կոմպոզիտորների միությունը կարևորել է երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունը: Դրան են նվիրվել Հայաստանի կոմպոզիտորների միության 4-րդ (1966), 6-րդ (1979) և վերջին պլենումները (1990): Նշելի են երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների փառատոները (2014, 2015, 2016, 2017): Իսկ ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի աջակցությամբ իրականացվող Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթները (2014, 2015, 2016, 2017) նպատակ ունեն բացահայտելու և սատարելու պատանի տաղանդներին:

Բեղմնավոր էր Միության երաժշտագիտական գործունեությունը. ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության արդյունքում գումարվել են գիտական նստաշրջաններ, կազմակերպվել հանրապետական և միջազգային գիտաժողովներ:

Կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին Կոմպոզիտորների միության առաջին և երկրորդ շենքերն ու «Դիլիջան» ստեղծագործական տունը, որն այսօր կրում է Էդվարդ Միրզոյանի անունը:

Հայաստանի կոմպոզիտորների միությունը դարձավ ՍՍՀՄ կոմպոզիտորների առաջատար ջոկատներից մեկը. Սովետական Միությունում ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում է շնորհվել ընդամենը 98 կոմպոզիտորի, որոնցից 10-ը հայեր են: Աճեց Միության հեղինակությունը և նրա կշիռը հանրապետության

մշակութային կյանքի առանց բացառության բոլոր ոլորտներում, երկրի առաջընթացի բազմաթիվ պրոբլեմների լուծման գործում:

Հայաստանի կոմպոզիտորների միության մասին, ցավոք, դեռևս չի ստեղծվել ամփոփ աշխատություն, որը ներկայացներ նրա ամբողջական պատմությունը: Չկան անգամ առանձին հոդվածներ:

Մինչդեռ Հայաստանի կոմպոզիտորների միության՝ այդ ինքնատիպ կառույցի, պատմության ստեղծումը չափազանց կարևոր է: Այն կներկայացներ բնագավառում ձեռք բերված նվաճումներն ու հաջողությունները, ինչպես նաև կնախանշեր այն խնդիրներն ու անելիքները, որոնք ծառացած են այսօր այդ օջախի առջև: Առանձնապես կարևոր է Միության անցյալի աշխատանքի հարուստ ու արժեքավոր փորձի ուսումնասիրությունը, իմաստավորումն ու ընդհանրացումը: Դա ակնհայտ կդարձնի նրա զարգացման ուղին, ինչը թույլ կտա հետագա սերունդներին ևս պահպանել նվիրյալ կոմպոզիտորների և երաժշտագետների մի քանի սերունդների ջանքերով ստեղծված ու մեր երկրի երաժշտական կյանքում իր կարևոր դերն ու նշանակությունն ունեցած օջախի բարի ավանդույթներն ու ապահովել նրա անշեղ վերելքը:

Սիրելի՛ ընթերցող:

Դե ուրեմն միասին թերթենք Հայաստանի կոմպոզիտորների միության պատմության էջերը...

1 հոկտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Ամեն ինչ սկսվեց 85 տարի առաջ՝ 1932 թվականին, երբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» պատմական որոշմամբ ստեղծվեց ՍՍՀՄ կոմպոզիտորների միությունը[2], հասարակական կազմակերպություն, որը միավորում էր ՍՍՀՄ կոմպոզիտորներին և երաժշտագետներին: «Այդ որոշումը դարձավ ստեղծագործական զարգացման կարևորագույն լծակ խորհրդային կոմպոզիտորների և ողջ երաժշտական ֆրոնտի համար»[3]:

Ստեղծված հասարակական կազմակերպությունն իր առջև դրեց հետևյալ հիմնական խնդիրները՝ միավորել իր անդամներին գաղափարապես բարձր, գեղարվեստորեն նշանակալից այնպիսի երկեր ստեղծելու նպատակով, որոնք հաստատում են սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները, զարգացնում ՍՍՀՄ ժողովուրդների ազգային մշակույթի ավանդույթները, կոմպոզիտորներին ու երաժշտագետներին դաստիարակել կոմունիստական գաղափարախոսության ոգով, նպաստել նրանց ստեղծագործական աճին ու պրոֆեսիոնալ վարպետության բարձրացմանը:

1932-40թթ. ՍՍՀՄ կոմպոզիտորների միության կազմակերպություններ են ստեղծվում Մոսկվայում և Լենինգրադում, միութենական և ինքնավար հանրապետությունների մայրաքաղաքներում, մի քանի մարզային կենտրոններում:

1932թ. մայիսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունում է «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը, համաձայն որի վերացվում է Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան, և Խորհրդային Հայաստանի երաժիշտների միասնական միության կազմակերպման համար ձևավորվում է հանձնաժողով հետևյալ կազմով՝ Արտաշես Ոսկերչյան (նախագահ), Կարո Զաքարյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Հարո Ստեփանյան, Հ.Եղիազարյան, Սամսոն Գասպարյան, Ռոմանոս Մելիքյան, Մուշեղ Աղայան[4]:

Հունիսի 3-ին Երևանում տեղի է ունենում Երաժիշտների հա-

---

[2] *1932-57-ին՝ Սովետական կոմպոզիտորների միություն:*

[3] ***Վոսկերչյան Արտաշես**, Ցերաժշտական հարցեր, Ցերևան, Պետական հրատարակչություն, 1937, էջ 3:*

[4] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12 մայիսի, 1932, N 111:*

մաքաղաքային ժողովը՝ նվիրված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշմանը. ներածական խոսքով հանդես է գալիս Ա.Ոսկերչյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Մ.Քրիչյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Վ.Բունին, Հ.Եղիազարյանը, Օվս. Տեր-Գրիգորյանը, Մ.Միրզոյանը, Մ.Ավետիսյանը, Խ.Թոռչյանը, Դ.Լեկդերը, Հ.Վարդանյանը, Ս.Գասպարյանը[5]:

24-ամյա **Արտաշես Կարապետի Ոսկերչյանը** (1908-1993), ով 1931թ. ավարտել էր Երևանի կոնսերվատորիան, ղեկավարեց Կոմպոզիտորների միության աշխատանքները մինչև 1935թ.: Նրա անունն այսօր զարմանալիորեն ոչինչ չի ասում մեր երիտասարդ սերնդի երաժիշտներին, քանի որ եթե չհաշվենք երաժշտագիտական նրա մի քանի հոդվածներն ու «Ցերաժշտական հարցեր» հոդվածների ժողովածուն[6], նրա վաստակը գրականագիտության ոլորտում է. հայ մշակույթի պատմության մեջ նա իր հետքը թողեց որպես գրականագետ, գրաքննադատ, բանասիրական գիտությունների դոկտոր (1966), պրոֆեսոր (1967), հայ և ռուս գրականության ու հասարակական մտքի պատմության, մարքս-լենինյան գեղագիտության հարցերի մասնագետ:

1935-ին Ա.Ոսկերչյանն ավարտելու էր (էքստեռն) Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1939-ից դասախոսական աշխատանքով էր զբաղվելու Երևանի բուհերում, մասնակցելու էր Հայրենական մեծ պատերազմին, իսկ 1969-ից ռուս գրականություն էր դասավանդելու Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում: Նրա հեղինակությամբ լույս էին տեսնելու «Ստ. Շահումյանի գրական հայացքները» (1947), «Սովետահայ գրականության և գրական ժառանգության հարցեր» (1954), «Ռուս մեծ քննադատներ և հրապարակախոսներ» (1957), "Степан Шаумян и вопросы литературы" (1959), «Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները» (1962), «Քննադատություն և հրապարակախոսություն» (1968), «Ավ. Մյասնիկյանը և գրական հարցերը» (1974), «Ռուս գրականություն: Ակնարկներ» (1977),

---

[5] Տե՛ս Մինչև վերջն ուղղել սխալներն ու վերակառուցել երաժշտական ֆրոնտը, «Գրական թերթ», 10 հունիսի, 1932, N 11:

[6] **Վոսկերչյան Արտաշես**, Ցերաժշտական հարցեր, Ցերեվան, Պետական հրատարակչություն, 1937, 184 էջ:

“Сурен Спандарян – публицист и критик” (1979), «Ռուս և Հայ գրականության հարցեր» (1982) գրքերը[7]*:*

Այդ ամենը՝ հետագայում: Իսկ մինչ այդ...

Մինչ այդ Ա.Ոսկերչյանի ջանքերով նորաստեղծ Միությունն առաջին, սակայն հաստատուն քայլերն է անում, աստիճանաբար իր ուրույն ու կարևոր տեղը զբաղեցնում հանրապետության երաժշտական կյանքում:

Նորաստեղծ Միության ակունքներում կանգնած գործիչները պարզորոշ գիտակցում էին, որ Միությունը պետք է ակտիվորեն համագործակցի հանրապետության երաժշտական կոլեկտիվների հետ՝ որոշակիորեն ուղղորդելով նրանց աշխատանքները: Այս իմաստով ծրագրային կարելի է համարել Ա.Ոսկերչյանի՝ «Խորհրդային արվեստի» 1933թ. մայիսյան համարում լույս տեսած «Արդյունքներ յեվ խնդիրներ (խորհրդային կոմպոզիտորների համագումարի առթիվ)» հոդվածը: Ըստ հոդվածի հեղինակի՝ Միության նպատակն էր համախմբել կոմպոզիտորներին սոցիալիստական շինարարության շուրջ և նպաստել նրանց ստեղծագործական զարգացմանը[8]*. «Ստեղծագործական խնդիրներին նվիրված դիսպուտների, յերեկոների կազմակերպումը և այլն, հետապնդել են այդ նպատակը»*[9]*: Կոմպոզիտորները զբաղված էին ստեղծագործական լուրջ աշխատանքով, մինչդեռ կատարողական կադրերի սակավությունը խոչընդոտում էր նրանց ստեղծագործությունների կատարումն ու մասսայականացումը: «Այս բանում,- նկատում է Ա.Ոսկերչյանը,- խորհրդային կոմպոզիտորներին պետք է օժանդակեն այն կազմակերպությունները (ռադիո, օպերա, կոնսերվատորիա և այլն), որոնց ձեռքումն են կենտրոնացած կատարողական ուժերը»*[10]*:*

Հեղինակն իրավացիորեն ընդգծում է երաժշտական քննադատության կարևոր դերն ու նշանակությունը, որն այդ տարիներին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով գտնվում էր ցածր մակարդակի վրա, և կարևորում է բարձրորակ քննադատության անհրաժեշտությունը: Նա երաժշտական ճակատի նշանակալի բնագավառ է համարում նաև մասսայական երաժշտական աշխատանքներն ու կադրերի պատրաստումը՝ ընդգծելով դրա հրատապությունը:

---

[7] *Տե՛ս Ոսկերչյան Արտաշես, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան, 1982, էջ 631:*

[8] *Տե՛ս* **Վոսկերչյան Ա.,** *Արդյունքներ յեվ խնդիրներ (խորհրդային կոմպոզիտորների համագումարի առթիվ), «Խորհրդային արվեստ», 1933, N 5, մայիս, էջ 3:*

[9] *Նույն տեղում:*

[10] *Նույն տեղում:*

Դրա հետ մեկտեղ նա գտնում է, որ «Ռադիո-երաժշտական հաղորդումների մեջ մեծ տեղ պետք է տալ նոր ստեղծվող խորհրդային երաժշտության մասսայականացմանը»[11]:

1934թ. ապրիլի 21-ին կազմակերպվում է Պետօպերային թատրոնի «Կարմեն» բեմադրության քննարկումը: Զեկուցումով հանդես է գալիս Ռ.Թերլեմեզյանը, ապա ելույթ են ունենում Ա.Բուրջալյանը, Ռ.Հովհաննիսյանը, Ա.Հովհաննիսյանը, Ս.Լիսիցյանը, Ս.Գասպարյանը, Ա.Ոսկերչյանը[12]: Սա հետագայում պետք է դառնար Կոմպոզիտորների միության գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Իսկ Հայկինոյում 1936թ. մարտի 4-ին տեղի ունեցած կինոնկարների երաժշտական ձևավորմանը նվիրված խորհրդակցության արդյունքում, որին մասնակցում էին կինոաշխատողները և երաժիշտները, Հայկինոյին կից կազմակերպվում է երաժշտական բաժին[13]: Սրանով իսկ դրվեցին հայկական կինոերաժշտության հիմքերը. այսուհետև ֆիլմերի համար երաժշտություն են գրում պրոֆեսիոնալ կոմպոզիտորները. նախաձեռնություն, որը պիտի շարունակվեր, և կինոերաժշտությունը պետք է դառնար բազմաթիվ ֆիլմերի հաջողությունը մեծապես պայմանավորող գործոն: Այսպես՝ Սարգիս Բարխուդարյանը երաժշտություն է գրում «Շունն ու կատուն» մուլտիպլիկացիոն (1936), «Կարո» (1937) և «Քաջ Նազար» (1940) գեղարվեստական կինոնկարների համար, Աշոտ Սաթյանը՝ «Վեց համազարկ» (1937), «Լեռնային արշավ» (1939), «Գվարդիական կինը» (1942), «Դուստրը» (1943) և «Դավիթ-Բեկ» (1944) գեղարվեստական կինոնկարների համար են: 1938թ. Արամ Խաչատրյանը երաժշտություն է գրում «Զանգեզուր», իսկ 1939թ. Հարո Ստեփանյանը՝ «Լեռնային հեղեղ» գեղարվեստական ֆիլմերի համար:

1935թ. Միության ղեկավարությունն ստանձնում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում Մակար Եկմալյանին աշակերտած, ապա Պետերբուրգի (1907-1911) և Մոսկվայի (1925-1930) կոնսերվատորիաներում երաժշտական կրթություն ստացած, որպես երաժիշտ-մանկավարժ և երգիչ (բարիտոն) աշխատած, ինչպես նաև Երևանում, Թիֆլիսում և Մոսկվայում համերգներով հանդես եկած, իսկ

---

[11] *Նույն տեղում, էջ 4:*

[12] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945), պատ. խմբ.՝ Մ.Մուրադյան, Երևան, 1979, էջ 128: «Խորհրդային Հայաստան», N 4, 1934, էջ 32:*

[13] *Երաժշտական բաժին Հայկինոյում, «Խորհրդային Հայաստան», 5 մարտի, 1936, N 53:*

*1930թ. Երևան տեղափոխված երաժշտագետ և կոմպոզիտոր **Մուշեղ Ղազարոսի Աղայանը** (1883-1966)[14]:*

1936թ. մարտի 8-15-ը տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործական խորհրդակցությունը՝ նվիրված «Պրավդայում» տպագրված երաժշտական հարցերի վերաբերյալ հոդվածների քննարկմանը. ելույթ են ունենում Կ.Զաքարյանը, Օվս.Տեր-Գրիգորյանը, Ք.Քուշնարյանը, Ա.Մայիլյանը, Հ.Ստեփանյանը, Մ.Միրզոյանը, Մ.Մազմանյանը, Ռ.Թերլեմեզյանը, Տ.Հախումյանը, Վ.Սամվելյանը, Հ.Պողոսյանը[15]:

Հայ կոմպոզիտորների մասնագիտական աճի համար կարևոր էին ստեղծագործական շփումները և նրանց երաժշտության պրոպագանդան Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես Մոսկվայում: 1937թ. ապրիլի 19-ին Մոսկվայի Միությունների տան Սյունազարդ դահլիճում բացվում է Սովետական կոմպոզիտորների միության առաջին համամիութենական համագումարը[16], իսկ մայիսի 10-ին տեղի ունեցած ԽՍՀՄ կոմպոզիտորների համամիութենական խորհրդակցության մասնակիցները դիտում են Կարո Զաքարյանի «Մարջան» օպերան[17]:

1939թ. հունվարի 11-12-ը տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների հանրապետական առաջին կոնֆերանսը, որտեղ զեկուցումով հանդես է գալիս Մուշեղ Աղայանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Հ.Ստեփանյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Գ.Եղիազարյանը, Մ.Միրզոյանը, Ա.Աղաբաբյանը, Ա.Շահինյանը, Կ.Սարաջևը, Դ.Դեմիրճյանը, Զ.Վարդանյանը, Ռ.Թերլեմեզյանը, Ս.Գասպարյանը, Ա.Կարատովը, Էդ.Կզարթմյանը:

Ընտրվում է Հայաստանի սովետական կոմպոզիտորների միու-

---

[14] *Տե՛ս Աղայան Մուշեղ, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1, Երևան, 1974, էջ 244:*

[15] *Տե՛ս **Մազմանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 185: Հանուն ռեալիստական խորհրդային երաժշտության, «Խորհրդային Հայաստան», 17 մարտի, 1936, N 63: **Джан-ян Г.** Творческое совещание композиторов, "Коммунист", 14 марта, 1936, N 63. Против формализма, сумбура и хаоса в музыке, "Коммунист", 18 марта, 1936, N 64:*

[16] ***Մազմանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 182: **Захаров В.** Развивать и совершенствовать советскую музыку, "Правда", 19 апреля, 1937, N 110. Открытие первого Всесоюзного съезда советских композиторов, "Правда", 20 апреля, 1937, N 111. Всесоюзный съезд советских композиторов, "Правда", 22 апреля, 1937, N 113. На первом Всесоюзном съезде советских композиторов, "Правда", 23 апреля, 1937, N 114:*

[17] ***Մազմանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 182: **Мелик-Вртанесян К.** Успех оперы "Марджан", "Коммунист", 14 мая, 1937, N 108:*

թյան վարչություն հետևյալ կազմով՝ Հարո Ստեփանյան (նախագահ), Կ.Զաքարյան, Մ.Մազմանյան (տեղակալ), Ա.Տեր-Ղևոնդյան, Մ.Աղայան[18]:

Մ.Աղայանին, այսպիսով, փոխարինում է 1923-1926 թվականներին Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական տեխնիկումում ուսանած, 1930թ. Լենինգրադի կոնսերվատորիայի՝ Վ.Վ.Շչերբաչյովի[19] ստեղծագործական դասարանի շրջանավարտ **Հարո Լևոնի Ստեփանյանը** (1897-1966), ով պիտի դառնար «Սովետական Հայաստանի երաժշտական մշակույթի զարգացման գործի ակտիվ կազմակերպիչներից» մեկը[20]: Նա Երևանի կոնսերվատորիայում 1930թ. հիմնադրված ստեղծագործական դասարանի առաջին դասատուներից էր՝ Սարգիս Բարխուդարյանի և Վարդգես Տալյանի հետ, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր՝ ընտրված 1938թ. հունիսի 12-ին[21], հետագայում՝ ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր (1951), ՀՍՍՀ ժողովրդական արտիստ (1960)...[22]

Միությունը թևակոխում է իր գործունեության նոր ու արգասաբեր փուլ: Աստիճանաբար բարձրանում են կոմպոզիտորների դերն ու նշանակությունը հանրապետության մշակութային ու հասարակական կյանքում:

Կոմպոզիտորների հետագա անելիքների մասին էր 1941թ. հունվարի 30-ին Հայաստանի կոմպոզիտորների միությունում հրավիրված խորհրդակցությունում Հ.Ստեփանյանի զեկուցումը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ա.Տեր-Ղևոնդյանը, Գ.Եղիազարյանը, Մ.Մազմանյանը, Մ.Քրիշչյանը, Խ.Թոռջյանը, Կ.Մելիք-

---

[18] **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 212-213: **Թերլեմեզյան Ռ.,** Երաժշտագետների կոնֆերանսի արդյունքները, «Խորհրդային Հայաստան», 15 հունվարի, 1939, N 12: К открытию 1-ой республиканской конференции композиторов Армении, "Коммунист", 11 января, 1939, N 9. **Закарян К.** Задачи нашей конференции, там же. **Сатян А.** Радостно жить и творить, там же. **Б-ян С.** На конференции композиторов Армении, "Коммунист", 14 января, 1939, N 11. Конференция композиторов Армении, "Сталинец", 15 января, 1939, N 6:

[19] Ի դեպ Վլադիմիր Վլադիմիրովիչ Շչերբաչյովը (1887-1952) 1935-1937թթ. և 1944-1946թթ. ՌՍՖՍՀ կոմպոզիտորների միության նախագահն էր:

[20] **Տիգրանյան Գ.,** Ստեփանյան Հարո Լևոնի, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 11, Երևան, 1985, էջ 129:

[21] **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 200: Հարո Ստեփանյան, «Խորհրդային արվեստ», 1938, N 1, էջ 7: **Թերլեմեզյան Ռ.,** Հ.Ստեփանյան, Հ.Դանիելյան, Շ.Տալյան, «Գրական թերթ», 12 հունիսի, 1938, N 27:

[22] Հ.Ստեփանյանի մասին տե՛ս **Տիգրանյան Գ.,** Ստեփանյան Հարո Լևոնի, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 11, Երևան, 1985, էջ 129: **Քացախյան Մ.,** Հարո Ստեփանյան, Երևան, 1962: **Тигранов Г.** Аро Степанян (1897-1966). Очерк жизни и творчества, Москва, 1967:

Վրթանեսյանը, Կ.Զաքարյանը, Ա.Մանուկյանը, Լ.Սաֆարյանը, Զ.Վարդանյանը, Ա.Շահինյանը, Ս.Գասպարյանը[23]:

Հ.Ստեփանյանի ղեկավարության տարիներին Միության գործունեությունը ծավալվում է մի քանի ուղղություններով:

Ա. Հ.Ստեփանյանի ընտրությունից երկու ամիս անց՝ 1939թ. մարտի 7-ին, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով արվեստի վաստակավոր գործչի կոչում է շնորհվում կոմպոզիտորներ Կարո Զաքարյանին, Միքայել Միրզոյանին և Մուշեղ Աղայանին[24], իսկ մարտի 9-ի հրամանագրով Երևանի օպերայի և բալետի պետթատրոնն անվանակոչվում է կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի անունով, և այդ առիթով թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ[25]:

Բ. Կարևորվում է երաժշտագիտական գործունեությունը, կատարվում են առաջին քայլերն այդ ասպարեզում: Նկատենք, որ Երևանի կոնսերվատորիայում երաժշտագիտական բաժանմունքը բացվել էր ընդամենը 1937թ.՝ Զավեն Վարդանյանի, Սամսոն Գասպարյանի և Կոնստանդին Մելիք-Վրթանեսյանի ջանքերով: Գումարվում են գիտական անդրանիկ նստաշրջանները, կազմակերպվում դասախոսություններ ու գիտական զեկուցումներ, որոնք էլ հետագայում դառնալու էին Միության երաժշտագիտական գործունեության հիմնական ուղղությունները:

Այսպես, 1940թ. մայիսի 17-27-ը Միությունը գումարում է գիտական սեսիա՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու ծննդյան 100-ամյակին, որի ընթացքում կարդացվում են հետևյալ զեկուցումները՝ Ռ.Թերլեմեզյան. «Չայկովսկու կյանքը և գործունեությունը», Ս.Գասպարյան. «Ռուսաստանի երաժշտական կյանքը XIX դարի երկրորդ կեսում և Չայկովսկու դերը ռուսական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում», Զ.Վարդանյան. «Չայկովսկու ստեղծագործական մեթոդի հիմնական սկզբունքները», Կ.Մելիք-Վրթանեսյան. «Չայկովսկու երգերն ու ռոմանսները», Ա.Տոնիկյան. «Չայկովսկու օպերաները»[26]:

Նույն՝ 1940 թվականի դեկտեմբերի 28-ին Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում տեղի է ունենում Կոնստանդին Մելիք-Վրթանեսյանի դասախոսությունը՝ «Սինթետիկ ժանրերը

---

[23] Տե՛ս **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 242: На совещании в Союзе композиторов, “Коммунист”, 1 февраля, 1941, N 26:

[24] **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 214-215: “Коммунист”, 15 марта, 1939, N 60:

[25] **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 215: В Государственном театре оперы и балета, “Коммунист”, 11 марта, 1939, N 57:

[26] Տե՛ս **Մազմանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 231:

երաժշտության մեջ», իսկ 1941թ. փետրվարի 22-ին՝ Մուշեղ Աղայանի զեկուցումը՝ «Վրացական ժողովրդական երգ-երաժշտությունը» թեմաներով:

Գ. *1940թ. սեպտեմբերի 26-ին կազմակերպվում է կոմպոզիտոր Ալեքսանդր Դոլուխանյանի ստեղծագործական երեկոն, որի ընթացքում կոմպոզիտորի ստեղծագործությունների քննարկմանը մասնակցում են Հ.Ստեփանյանը, Զ.Վարդանյանը և Գ.Եղիազարյանը[27]. ստեղծագործական երեկոների ու համերգների կազմակերպումը հետագայում դառնալու էր ՀԿՄ գործունեության կարևոր ուղղություններից մեկը:*

Դ. *Մեկնարկում է երաժշտության պրոպագանդան Հայաստանից դուրս. 1940թ. հոկտեմբերի 26-ին Մոսկվայի կոմպոզիտորների տանը տեղի է ունենում Կոմիտասի մահվան 5-րդ տարելիցին նվիրված երեկո, որտեղ ներածական խոսքով հանդես է գալիս Ալ.Շահվերդյանը: Ելույթ են ունենում երգիչ Լ.Խաչատրյանը, դաշնակահարուհի Ն.Մուսինյանը, երգչուհի Թ.Բեջանյանը և Կոմիտասի անվան պետկվարտետը՝ Ա.Գաբրիելյան, Ն.Բալաբանյան, Մ.Տերյան, Ս.Ասլամազյան կազմով[28]:*

1941թ. մարտի 15-ին Արամ Խաչատրյանին շնորհվում է ՍՍՀՄ Պետական մրցանակ Ջութակի կոնցերտի համար[29]:

Հայ երաժշտության զարգացման բնականոն ընթացքը խաթարեց Հայրենական մեծ պատերազմը՝ ֆաշիստական Գերմանիան «սրբագրեց» հայ կոմպոզիտորներից շատերի կյանքն ու ստեղծագործությունը: Նրանց մի մասը զոհվեց՝ անավարտ թողնելով իրենց ծրագրերը, իսկ հայ երաժշտությունը զրկվեց այդպես էլ չստեղծված բազմաթիվ ստեղծագործություններից: Ռազմի դաշտում ընկան 33-ամյա Թունիկ Հովհաննիսյանը (1908-1941), Սպիրիդոն Մելիքյանի որդին՝ 28-ամյա Հրաչիկ Մելիքյանը (1913-1941), 35-ամյա Միքայել Զաղալյանը (1907-1942), 36-ամյա Կոնստանդին Շլդյանը (1905-1941), 37-ամյա Ստեփան Տերտերյանը (1906-1943), 34-ամյա Հովհաննես Նաղիրյանը (1907-1941)...[30] Հավերժ փառք Հայրենիքի պաշտպան հերոսներին:

---

[27] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *նշվ. աշխ., էջ 234: Творческий отчет композитора Долуханяна, "Коммунист", 29 сентября, 1940, N 228:*

[28] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 235:* ***Габриелян А., Балабанян Н., Териан М., Асламазян С.*** *Памяти учителя, "Коммунист", 23 октября, 1940, N 247:*

[29] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 243:*

[30] *Տե՛ս* ***Գրիգորյան Ս.,*** *Մուսաները չլռեցին, Երևան, 1989, էջ 7, 25-52:*

Հայ կոմպոզիտորներից ոմանք էլ՝ Արամ Սաթունցը, Գևորգ Արմենյանը, Ղազարոս Սարյանը, Էդուարդ Փաշինյանը և այլք, անցնելով պատերազմի արհավիրքների միջով, բարեբախտաբար, հաղթանակած վերադարձան և իրենց տաղանդով ծառայեցին հարազատ ժողովրդին:

«Գրական թերթի» 1941թ. նոյեմբերի 20-ի համարում տպագրվում է Ռ.Թերլեմեզյանի՝ «Ցաշիզմը կործանում է երաժշտական կուլտուրան» հոդվածը[31]: Մեծ հայրենականին արձագանքում է նաև Ալեքսանդր Շահվերդյանը[32]:

Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիներին հայ երաժշտության մեջ, բնականաբար, մեծ տեղ են գրավում Հայրենիքի պաշտպանության, նրա հերոսական անցյալի, հայրենասիրության թեմաները, ինչպես նաև հանուն հայրենիքի միասնական ընտանիքով ոտքի ելած ժողովուրդների բարեկամության թեման:

Ինտենսիվ ու արդյունավետ էր հայ կոմպոզիտորների գործունեությունը: «Այդ տարիները դարձան կոմպոզիտորների ստեղծագործական ուժերի գաղափարական հասունության, ժողովրդի պահանջներին արժանի պատասխան տալու և կյանքի կողմից առաջադրված խնդիրները լուծելու ունակության լուրջ ստուգատես»[33]: Միանգամայն օրինաչափ էր ու բնական ձգտումը դեպի խոշոր ձևերը:

Մեծ հայրենականի հերոսների կերպարներն իրենց արտացոլումը գտան հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում: Այսպես, Լենինգրադի պաշտպանության մասին էր Մեծ հայրենականի տարիներին գրված Լ.Խոջա-Էյնաթյանի «Երեք հանդիպում» օպերան, որը բեմադրվեց 1954թ. Ստալինաբադի օպերայի և բալետի թատրոնում:

Աճում է հերոսական-հայրենասիրական, ազգային-ազատագրական և պատմական թեմատիկայով ստեղծագործությունների թիվը: Արմեն Տիգրանյանն սկսում է աշխատանքները «Դավիթ-Բեկ» օպերայի վրա: Երևանի օպերային թատրոնը ձեռնամուխ է լինում հայկական առաջին օպերայի՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդի» բեմադրությանը: Ստեղծվում են սիմֆոնիաներ, կոնցերտներ, ծրագրային սիմֆոնիկ պոեմներ, նախերգանքներ, սյուիտ-

---

[31] ***Թերլեմեզյան Ռ.,*** *Ցաշիզմը կործանում է երաժշտական կուլտուրան, «Գրական թերթ», 20 նոյեմբերի, 1941, N 32:*

[32] ***Шавердян А.*** *Песни о священной войне, "Известия", 29 июня, 1941, N 152.*

[33] ***Коптев С., Тэрьян М., Рухкян М.*** *Симфоническая музыка и инструменыальный концерт // Музыклальная культура Армянской ССР, сб. статей, Москва, 1985, стр. 165.*

ներ, այդ թվում՝ Ալեքսանդր Հարությունյանի Սիմֆոնիկ նախերգանքը, Առնո Բաբաջանյանի Դաշնամուրային կոնցերտը, Սերգեյ Բալասանյանի «Հայկական ռապսոդիան», Գրիգոր Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, Հարո Ստեփանյանի Առաջին սիմֆոնիան, Անուշավան Տեր-Ղևոնդյանի Պարային սյուիտը, Արամ Սաթունցի «Զանգեզուր» պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար և, իհարկե, Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան: Վոկալ-սիմֆոնիկ երաժշտության մեջ առանձնանում են Ռոբերտ Աթայանի «Ազատության գանգ» վոկալ-սիմֆոնիկ պատկերը՝ Ավ.Իսահակյանի խոսքերով, Ադամ Խուդոյանի «Բալլադը» բասի և նվագախմբի համար, Կարո Զաքարյանի «Երկիր իմ հայրենի» կանտատը՝ Հովհաննես Շիրազի խոսքերով, Վարդան Տիգրանյանի «Հանդիսավոր կանտատը»՝ Գեղամ Սարյանի խոսքերով և այլն:

1944թ. Արամ Խաչատրյանն ստեղծում է Հայկական ԽՍՀ պետական հիմնը՝ երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը (բանաստեղծական տեքստը՝ Սարմենի, ռուսերեն թարգմանությունը՝ Ա.Տեր-Հակոբյանի):

Արժեքավոր գործեր են ստեղծվում կամերային երաժշտության բնագավառում, այդ թվում՝ Հարո Ստեփանյանի Ջութակի և Թավջութակի սոնատները (1943), Ն.Զեմբերջիի Երրորդ կվարտետը (1943, ՍՍՀՄ Պետական մրցանակ՝ 1946), Լ.Խոջա-Էյնաթյանի Տրիոն՝ նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի հիշատակին (1943), Ա.Բաբաջանյանի Լարային N 1 կվարտետը (1943) և «Վաղարշապատի պարը» (1944), Գայանե Զերոտարյանի Սոնատը (1943), բազմաթիվ երգեր, որոնցից ուզում եմ առանձնացնել Աշոտ Սաթյանի «Մարտիկի երգը»՝ Գեղամ Սարյանի խոսքերով, որը գտավ իր անզուգական ու անկրկնելի մեկնաբանին՝ Ավագ Պետրոսյանին. 1944-ին երգը, տակավին 32 տարեկան երգչի կողմից ստանալով կյանքի ուղեգիր, հետագայում թևածեց աշխարհի տարբեր բեմերում: «Այդ երգը երկու առումով հիշարժան է իմ կյանքում,- տասնամյակներ անց կխոստովանի Ա.Պետրոսյանը,- առաջինը, որ անձամբ մարշալ Բաղրամյանի, օպերային թատրոնի լեփ-լեցուն դահլիճի որոտընդոստ ծափերի տակ երեք անգամ երգը կրկնելուց հետո ինձ անդրանիկ պատվավոր կոչումը շնորհվեց՝ հանրապետության վաստակավոր արտիստ, և երկրորդ, որ այսօր նույն դահլիճի կամարների տակ ինձ շնորհ է արվում Մեծ հաղթանակի փառապանծ 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի գեղարվեստական բաժնում, արդեն 84-ամյա հասակում, նորից հանդես գալու այդ ծանր ժամանակները ընութագրող հիասքանչ երգի կատարմամբ»: «Մարտիկի երգը» մեծ ժողովրդականություն վայելեց պատերազմի տա-

րիներին և պատերազմից հետո՝ մինչ օրս: Ասում են, թե «մարշալ Բաղրամյանի և Անաստաս Միկոյանի Հայաստան պաշտոնական այցերի առթիվ տեղի ունեցող «գալա» համերգների ժամանակ նրանց միակ ու անփոփոխ ցանկությունը Ավագ Պետրոսյանի կատարմամբ «Մարտիկի երգը» և «Բարձր սարերը» լսելն էր: Ու ամեն անգամ արցունքի կաթիլները հոսել են Բաղրամյանի այտերով[34]*:*

Մեծ հայրենականի օրերին Պերմ տեղափոխված՝ Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնի առաջարկությամբ Ա.Խաչատրյանը շարունակում է «Գայանե» բալետի ստեղծումը, որի լիբրետոն նախքան պատերազմը կոմպոզիտորի հետ սերտ համագործակցությամբ ստեղծել էր Կ.Դերժավինը: 1942թ. դեկտեմբերի 9-ին Պերմում տեղի է ունենում Լենինգրադի օպերայի և բալետի թատրոնի՝ «Գայանե» բալետի բեմադրությունը (բալետմայստեր՝ Ն.Անիսիմովա)[35]*: «Գայանեի» համար հեղինակին 1943թ. երկրորդ անգամ շնորհվում է ՍՍՀՄ՝ Պետական մրցանակ: 1943թ. հոկտեմբերի 3-ին Մոսկվայի Միությունների տան Սյունագարդ դահլիճում Համամիութենական ռադիոկոմիտեի Մեծ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Նիկոլայ Գոլովանովի ղեկավարությամբ առաջին անգամ հնչում է «Գայանե» բալետից առաջին սյուիտը:*

1943թ. հուլիսին Ա.Խաչատրյանը սկսում է Երկրորդ սիմֆոնիան (e-moll)[36]*, որի կլավիրն ավարտում է նույն թվականի սեպտեմբերի 10-ին, իսկ գործիքավորումը՝ աշնանը: Կոմպոզիտորի խոսքերով Սիմֆոնիայի գաղափարը կապված է Հայրենական մեծ պատերազմի ահեղ իրադարձությունների հետ: «Ես ուզեցի արտահայտել ցասման, վրեժի զգացումն ընդդեմ չարիքի, որ մեզ պատճառեց գերմանական ֆաշիզմը: Մյուս կողմից՝ Սիմֆոնիայում արտահայտված են վշտի տրամադրությունն ու մեր վերջնական հաղթա-*

---

[34] *Տե՛ս* ***Պետրոսյան Արա,*** *Նրա համար ամենաթանկը ժողովրդի սերն էր, «Վասն հայության», թիւ 9, 30.03.2003, էջ 12:*

[35] *Երևանի օպերայի և բալետի թատրոնում «Գայանեի» պրեմիերան տեղի ունեցավ 1947թ. հուլիսի 26-ին (բալետմայստեր՝ Նինա Անիսիմովա): 1952թ. «Գայանեն» բեմ է բարձրանում Լենինգրադի Կիրովի անվան թատրոնում, իսկ 1957թ. մայիսի 22-ին «Գայանեի» երկար սպասված պրեմիերան է Մոսկվայի Մեծ թատրոնում (նոր խմբագրությամբ, լիբրետոյի հեղինակ՝ Բորիս Պլետնյով, բալետմայստեր՝ Վասիլի Վայնոնեն): Շուտով «Գայանեն» իր տեղն է գրավում Երևանի, Կիևի, Սվերդլովսկի, Բեռլինի, Լայպցիգի, Վայմարի, Բուդապեշտի, Բրատիսլավայի, Սոֆիայի, Ուլան-Ուդեի, Տալլինի, Վորոնեժի, Զեյլաբինսկի, Նովոսիբիրսկի, Վիսբադենի, Ռիգայի օպերային թատրոնների խաղացանկերում:*

[36] *Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 2, Симфония N 2, N 3, партитура, Москва, 1984.*

նակի հանդեպ խոր հավատը»[37]:

1943թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում ՍՍՀՄ Պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Բորիս Խայկինի ղեկավարությամբ հնչում է Երկրորդ սիմֆոնիան[38]: Պրեմիերայից օրեր անց Խաչատրյանը գրեց. «Իմ Երկրորդ սիմֆոնիան չունի գրական ծրագիր. ընդհանրացված երաժշտական կերպարներում ես ձգտել եմ մարմնավորել այն մտքերն ու զգացմունքները, որոնցով այսօր ապրում է մեր ժողովուրդը... Սիմֆոնիայի առաջին մասը խտացնում է պայքարի առավել լարվածությունը, դաժանությունն ու դրամատիզմը: Նախաբանում զանգերի հարվածները (հանդիպում են նաև սիմֆոնիայի վերջում) ընդգծում են կատարվածի նշանակալիությունը, ստիպում կենտրոնանալ»[39]:

Շուտով Ա.Խաչատրյանն իրականացնում է Սիմֆոնիայի նոր խմբագրությունը, որտեղ տեղերով փոխում է երկրորդ և երրորդ մասերը: Նոր խմբագրությամբ Սիմֆոնիան հնչում է 1944թ. մարտի 6-ին Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, ՍՍՀՄ Պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Ալեքսանդր Գաուկի ղեկավարությամբ: Երկրորդ սիմֆոնիայի համար Ա.Խաչատրյանը 1946թ. արժանանում է ՍՍՀՄ Պետական մրցանակի:

Ի դեպ, 1944թ. հուլիսի 8-ին Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան կատարում են դաշնակահարներ Է.Ապրեսովան և Ա.Դոլուխանյանը: Քննարկմանը մասնակցում են Հ.Դանիելյանը, Գ.Տիգրանովը, Զ.Վարդանյանը, Ք.Քուշնարյանը, Ա.Ադամյանը, Տ.Տեր-Մարտիրոսյանը, Մ.Մազմանյանը, Է.Միրզոյանը, Գ.Դոմբաևը և Հ.Ստեփանյանը[40]:

1942թ. մարտի 18-ին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 25-ամյակի առթիվ, ՀՍՍՀ ժողկոմխորհին կից արվեստի գործերի վարչությունը հայտարարում է մրցանակաբաշխություն սիմֆոնիկ լավագույն ստեղծագործությունների, մասսայական, էստրադային երգերի և փողային նվագախմբի քայլերգերի համար[41]: Նոյեմբերի 17-ին ամփոփվում են մրցանակաբաշխության

---

[37] Беседа с композитором Арамом Хачатуряном, "Коммунист", 1944, 7 июля.

[38] Սիմֆոնիան տևում է 50 րոպե: Առաջին անգամ պարտիտուրը հրատարակվել է 1946-ին:

[39] Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 2, стр. 8.

[40] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 277: 2-я симфония Арама Хачатуряна, "Коммунист", 9 июля, 1944, N 135:

[41] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 253: "Коммунист", 18 марта, 1942, N 65:

արդյունքները: Առաջին մրցանակը շնորհվում է Ռ.Աթայանի «Ազատության զանգ» ստեղծագործությանը (խոսք՝ Ավ.Իսահակյանի), երեք երրորդ մրցանակները շնորհվում են Ա.Տեր-Ղևոնդյանին՝ «Հեծելազորների քայլերգի», Ա.Դոլուխանյանին՝ «Պատերազմի երգեր» վոկալ շարքի (խոսք՝ Հովհ. Շիրազի) և Ա.Մերանգուլյանին՝ «Հայրենիք» երգի (խոսք՝ Ա.Վշտունու) համար: Պատվոգրերով պարգևատրվում են Ծ.Համբարձումյանը՝ «Հեծելազորների քայլերգի» և Մ.Միրզոյանը՝ «Հերոսական» երգի (խոսք՝ Ավ.Իսահակյանի)[42] համար:

Նույն՝ 1942թ. դեկտեմբերի 7-12-ը Հայաստանի կոմպոզիտորների միությունը գումարում է Երաժշտագիտական սեսիա՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 25-ամյակին: Ներածական խոսքով հանդես են գալիս Հ.Ստեփանյանն ու Գ.Տիգրանովը: Կարդացվում են հետևյալ զեկուցումները՝ Ա.Գայամով. «Սովետական երաժշտական կուլտուրայի 25 տարին», Գ.Տիգրանով. «Սովետական Հայաստանի կոմպոզիտորների օպերային ստեղծագործությունները», Մ.Աղայան. «Հայաստանի երաժշտական ֆոլկլորը Հայրենական մեծ պատերազմի օրերին», Ս.Լիսիցյան. «Հայկական ժողովրդական ռազմատենչ պարերի մասին», Ա.Շահվերդյան. «Հայկական սովետական երաժշտական կուլտուրայի զարգացման հիմնական ճանապարհները և պրոբլեմները»[43]:

Հայ երաժշտության պրոպագանդման գործում կարևոր դեր է կատարում 1944թ. դեկտեմբերի 17-26-ը Թբիլիսիում կայացած Անդրկովկասյան հանրապետությունների սովետական երաժշտությանը նվիրված տասնօրյակը: Ներածական խոսքով հանդես է գալիս Գ.Տիգրանովը: Ելույթ են ունենում Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկավարներ՝ Ա.Մերանգուլյան, Գ.Միրզոյան), Սայաթ-Նովայի անվան հայկական դուսանական երգի անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Վ.Սահակյան), Հայկական ժողովրդական երգի-պարի պետանսամբլը (ղեկավար՝ Թ.Ալթունյան) և Հայկական պետական ջազ-նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Ա.Այվազյան)[44]:

---

[42] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 260: "Коммунист", 18 ноября, 1942, N 272:

[43] Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 260: Музыковедческая сессия, "Коммунист", 9 декабря, 1942, N 288:

[44] Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 281: **Երաժշտագետ,** Անդրկովկասյան ռեսպուբլիկաների սովետական երաժշտության տասնօրյակը, «Սովետական գրականություն և արվեստ», 1944, N 12, էջ 92-96:

Դեկտեմբերի 18-ի համերգը նվիրված էր հայկական կամերային-գործիքային երաժշտությանը: Գ.Զեբոտարյանի, Մ.Միրզոյանի, Ա.Տեր-Ղևոնդյանի, Կ.Զաքարյանի, Հ.Ստեփանյանի, Ա.Մանուկյանի, Լ.Խոջա-Էյնաթյանի, Է.Միրզոյանի, Ա.Հարությունյանի և Ա.Բաբաջանյանի կամերային երկերը կատարում են Գ.Զեբոտարյանը, Ա.Պետրոսյանը, Գ.Գաբրիելյանը, Տ.Սազանդարյանը, Թ.Խաչատրյանը, Ա.Սպենդիարյանի անվան պետկվարտետը (Հ.Բոգդանյան, Հ.Աբաջյան, Ա.Ազատյան, Գ.Ադամյան) և Կոմիտասի անվան պետկվարտետը (Ա.Գաբրիելյան, Ն.Բալաբանյան, Մ.Տերյան, Ս.Ասլամազյան)[45]:

Դեկտեմբերի 19-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնի սիմֆոնիկ նվագախմբի համերգին (դիրիժորներ՝ Ս.Զարեքյան, Գ.Բուդաղյան, Ռ.Ստեփանյան, մենակատար-դաշնակահար՝ Առնո Բաբաջանյան) հնչում են Հ.Ստեփանյանի, Ա.Հարությունյանի, Ա.Տեր-Ղևոնդյանի, Կ.Զաքարյանի, Ա.Բաբաջանյանի և Է.Միրզոյանի ստեղծագործությունները[46]:

Եզրափակիչ՝ սիմֆոնիկ համերգը տեղի է ունենում դեկտեմբերի 20-ին: Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժորներ՝ Ռ.Ստեփանյան, Մ.Թավրիզյան), ջութակահար Ա.Գաբրիելյանի և երգչուհի Տ.Սազանդարյանի կատարմամբ հնչում են Գ.Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, Կոնցերտը ջութակի և նվագախմբի համար, Ա.Սաթյանի՝ «Դավիթ-Բեկ» կինոնկարի համար գրված երաժշտությունից Գայանեի արիան և Ա.Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան[47]:

1945թ. հունվարի 12-13-ը Երևանում գումարվում է Հայաստանի կոմպոզիտորների միության առաջին համագումարը: Հաշվետու զեկուցումով հանդես է գալիս Կոմպոզիտորների միության նախագահ Հարո Ստեփանյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ա.Տեր-Ղևոնդյանը, Գ.Դոմբաևը, Ռ.Ստեփանյանը, Հ.Դանիելյանը, Գ.Բուդաղյանը, Ս.Կոպտևը, Տ.Տեր-Մարտիրոսյանը, Ք.Քուշնարյանը, Մ.Աղայանը, Գ.Եղիազարյանը, Է.Միրզոյանը,

---

[45] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 281: Декада музыки Закавказских республик, "Коммунист", 22 декабря, 1944, N 252:*

[46] ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 281:* ***Тигранов Г.*** *Композиторы Советской Армении в годы войны, "Коммунист", 31 декабря, 1944, N 259:*

[47] ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 281-282:* ***Рабинович Р.*** *Рождение армянского симфонизма, "Коммунист", 31 декабря, 1944, N 259:*

Էդ.Կզարթմյանը, Ա.Ծառուկյանը (Բարսամյան), Զ.Վարդանյանը, Ա.Այվազյանը, Շ.Տալյանը, Խ.Թոռջյանը, Գ.Տիգրանովը, Յ.Բրուտյանը, Վ.Տալյանը, Վ.Բունին, Ա.Քոչարյանը, Ա.Բաբաջանյանը, Հ.Պողոսյանը, Ս.Կարապետյանը և Զ.Գրիգորյանը[48]:

1945թ. ապրիլի 5-ին կազմակերպվում է Ռուբեն Ստեփանյանի, Առնո Բաբաջանյանի և Ջիվան Կիրակոսյանի[49] ստեղծագործական երեկոն:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո Հայաստանի կոմպոզիտորների միությունը շարունակում է ստեղծագործական երեկոների շարքը: 1945թ. հուլիսի 4-ին տեղի է ունենում կոմպոզիտորներ Ադամ Խուդոյանի, Սերգեյ Քյոսայանի և Ծովակ Համբարձումյանի ստեղծագործական հաշվետու երեկոն[50], 1945թ. սեպտեմբերի 30-ին՝ Հարո Ստեփանյանի ստեղծագործական երեկոն, որի ընթացքում ելույթ են ունենում Հ.Բոգդանյանը, Մ.Մխիթարյանը, Լ.Մամաջանյանը, Գ.Ադամյանը, Է.Ոսկանյանը[51]:

1946թ. հուլիսի 25-ին կազմակերպվում է Արտաշես Խաչատրյանի ստեղծագործական երեկոն[52], իսկ հուլիսի 27-ին կոմպոզիտորների միության դահլիճում տեղի ունեցած համերգին մասնակցում են Ա.Տեր-Աբրահամյանը, Դ.Ղազարյանը և Ա.Գյուլզադյանը[53]:

Սովետական Հայաստանի 25-ամյակին է նվիրվում 1945թ. նոյեմբերի 15-17-ը գումարված Հոբելյանական երաժշտագիտական սեսիան, որի ընթացքում ներկայացվում են հետևյալ զեկուցումները՝ Ս.Գասպարյան. «Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրան 25 տարում», Ա.Շահվերդյան. «Երաժշտագիտությունը Սովետական Հայաստանում», Ե.Գիլինա. «Սովետական Հայաստանի կոմպոզիտորների կամերային-գործիքային ստեղծագործությունները», Մ.Աղայան. «Ժողովրդայնության մոտիվները Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ», Գ.Տիգրանով.

---

[48] Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 284: Первый съезд советских композиторов Армении, "Коммунист", 14 января, 1945, N 9:

[49] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 286: «Սովետական Հայաստան», 6 ապրիլի, 1945, N 67:

[50] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 289: «Սովետական Հայաստան», 4 հուլիսի, 1945, N 133:

[51] Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 292: «Սովետական Հայաստան», 2 հոկտեմբերի, 1945, N 208:

[52] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 15: «Սովետական Հայաստան», 25 հուլիսի, 1946, N 173:

[53] **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 15: «Սովետական Հայաստան», 27 հուլիսի, 1946, N 175:

«Սովետական Հայաստանի երաժշտական թատրոնը»[54]:

Սամսոն Գասպարյանն ի մի է բերում Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրայի անցած ուղին և նվաճումները[55]:

1945թ. հոկտեմբերի 22-ին Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Կոմիտասի մահվան 10-ամյակին: Բացման խոսքով հանդես է գալիս Ս.Գասպարյանը, իսկ զեկուցումով՝ Ա.Շահվերդյանը: Կոմիտասի ստեղծագործություններից կազմված համերգին ելույթ են ունենում երգիչներ Հ.Դանիելյանը, Ա.Տեր-Աբրահամյանը, դաշնակահարուհի Օ.Պետրոսյանը[56]:

Կոմիտասի ծննդյան 75-ամյակի առթիվ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչությունը 1946թ. մարտի 2-ին հայտարարում է մրցանակաբաշխություն խմբական և մենակատարային ստեղծագործությունների ստեղծման և ժողովրդական երգերի մշակման համար[57]: Մրցանակաբաշխության արդյունքներն ամփոփվում են հուլիսի 5-ին: Խմբական ստեղծագործությունների համար առաջին և երկրորդ մրցանակները շնորհվում են Մ.Մազմանյանին՝ «Հայկո ջան» և Արտ.Խաչատրյանին՝ «Հոյ նար» երգերի համար, երկրորդ և երրորդ մրցանակները՝ Կ.Զաքարյանին՝ «Ջան, յարո ջան» և Ե.Սահակունուն՝ «Ես ելա, գնացի» երգերի համար: Երրորդ մրցանակը շնորհվում է Գ.Զեբոտարյանին՝ «Ես քեզ տեսա» երգի համար: Մենակատարային ստեղծագործությունների համար երկրորդ մրցանակին է արժանանում Հ.Ստեփանյանը «Ալ ու ալվան» երգի և երրորդ մրցանակին՝ Արտ.Խաչատրյանը «Խանում Եվա ջան» և «Պարոն աղվես» երգերի համար[58]:

Հայ կոմպոզիտորական արվեստի առաջընթացին էին նպաստում Միության կազմակերպած մրցանակաբաշխությունները[59]:

---

[54] Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 294: Երաժշտագիտական հոբելյանական սեսիա, «Սովետական Հայաստան», 27 նոյեմբերի, 1945, N 255: Юбилейная музыковедческая сессия, "Коммунист", 23 ноября, 1945, N 251:

[55] **Գասպարյան Ս.**, Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրայի նվաճումները 25 տարում, «Սովետական գրականություն և արվեստ», 1945, N 10-11, էջ 132-136: **Գասպարյան Ս.**, Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրայի նվաճումները 25 տարում, «Սովետական Հայաստան», 23 նոյեմբերի, 1945, N 251:

[56] Вечер памяти Комитаса, "Коммунист", 23 октября, 1945, N 226:

[57] «Սովետական Հայաստան», 1946, N 3, էջ 48:

[58] Տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ», 1946, N 6-7, էջ 193:

[59] Այս առումով բացառություն չէր 1946թ. հոկտեմբերի 15-ին Երևանում տեղի ունեցած մրցանակաբաշխությունը՝ նվիրված Հայաստանում սովետական կար-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1947թ. դեկտեմբերի 29-30-ը Կոմպոզիտորների միության տան դահլիճում տեղի է ունենում Հայաստանի սովետական կոմպոզիտորների II համագումարը: Բացման խոսքով հանդես է գալիս Սամսոն Գասպարյանը: Առաջին և երկրորդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում վարչության կատարած աշխատանքների մասին զեկուցում է վարչության նախագահ Հարո Ստեփանյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ա.Ադամյանը, Վ.Բունին, Վ.Արարատյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Խ.Թոռջյանը, Է.Միրզոյանը, Մ.Մուրադյանը, Հ.Դանիելյանը, Ծ.Համբարձումյանը, Զ.Վարդանյանը, Գ.Դոմբաևը, Տ.Տեր-Մարտիրոսյանը, Գ.Տիգրանովը, Ե.Սարգսյանը, Գ.Եղիազարյանը և Կ.Զաքարյանը: Համագումարն ընտրում է Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության վարչության նոր կազմ՝ բաղկացած 11 հոգուց. նախագահ՝ Աշոտ Սաթյան, տեղակալ՝ Կարո Զաքարյան, պատասխանատու քարտուղար՝ Ալեքսանդր Թադևոսյան[60]: Կարևորվում է երաժշտագիտության դերը Կոմպոզիտորների միության գործունեության մեջ. կազմակերպության պատմության մեջ առաջին անգամ Միության պատասխանատու քարտուղար է ընտրվում երաժշտագետ, տվյալ դեպքում՝ Ալ.Թադևոսյանը. այս օրինաչափությունը պիտի շարունակվեր տասնամյակներ և խզվեր 1990-ականներին և խզված էլ մնար մինչ օրս...

Եվ այսպես, Հարո Ստեփանյանից հետո Կոմպոզիտորների 15 տարեկան միության ղեկը ստանձնում է նրա սանը՝ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր և դիրիժոր ***Աշոտ Մովսեսի Սաթյանը*** *(1906-1958)[61], ով պիտի շարունակեր ու զարգացներ իր Ուսուցչի ավանդույթները: Ի դեպ, Ա.Սաթյանը 1930թ. ավարտել*

գերի հաստատման 25-ամյակին, լավագույն սիմֆոնիկ ստեղծագործություններ համար: Երկրորդ մրցանակը շնորհվում է Ա.Բաբաջանյանին՝ Դաշնամուրային կոնցերտի համար: Առաջին և երրորդ մրցանակներ չեն շնորհվում ոչ ոքի: ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 17: "Советская музыка", 1946, N 11, стр. 110:*

[60] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 37: Հայաստանի սովետական կոմպոզիտորների երկրորդ համագումարը, «Գրական թերթ», 10 հունվարի, 1948, N 1: Съезд композиторов Армении, "Коммунист", 3 января, 1948, N 2:*

[61] *Տե՛ս Սաթյան Աշոտ, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 10, Երևան, 1984, էջ 113-114:* ***Թաշչյան Ս.,*** *Աշոտ Սաթյան, Երևան, 1965: Աշոտ Սաթյան. ծննդյան 100-ամյակի առթիվ, Երևան, 2007:*

էր Երևանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական՝ Հ.Ստեփանյանի, ապա՝ Ս.Բարխուդարյանի ղեկավարությամբ և դիրիժորական՝ Կ.Սարաջևի ղեկավարությամբ դասարանները:

Ինչ իմանար Աշոտ Սաթյանը, որ տասնամյակներ անց իր գործը պիտի շարունակի հենց նույն՝ 1947 թվականի մայիսի 23-ին լույս աշխարհ եկած իր եղբորորդին՝ Արամ Արամի Սաթյանը... Բայց այդ մասին՝ հետագա շարադրանքում:

Զգալի է Աշոտ Սաթյանի դերը Կոմպոզիտորների միության առաջընթացի գործում: Շարունակելով և խորացնելով Հ.Ստեփանյանի ավանդույթները. նա հանդես է գալիս մի շարք նախաձեռնություններով, որոնք Միության տարեգրության մեջ են մտնում «առաջին անգամ» խորագրով:

1948թ. հունվարի 13-14-ը անց է կացվում Հայաստանի կոմպոզիտորների միության ստեղծագործական **պլենումը,** որի ընթացքում կարդացվում են հետևյալ զեկուցումները՝ Գ.Տիգրանով. «Սովետահայ երաժշտության արդի խնդիրները», Ս.Գասպարյան. «Սովետահայ երաժշտության ներկա վիճակը», Ե.Գիլինա. «Վերջին ժամանակաշրջանում ստեղծված գործիքային-կամերային ստեղծագործությունները», Ա.Տոնիկյան. «Մասսայական նոր երգերը»: Մոքերի փոխանակությանը մասնակցում են Մ.Աղայանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Եղիազարյանը, Զ.Վարդանյանը, Ա.Հարությունյանը, Ա.Ադամյանը, Ա.Քոչարյանը, Կ.Զաքարյանը, Ա.Շահվերդյանը և Ա.Սաթյանը[62]:

Նույն թվականի ապրիլի 19-25-ը Մոսկվայում կայանալիք ՍՍՀՄ կոմպոզիտորների միության I համամիութենական համագումարին[63] ընդառաջ՝ «Գրական թերթի» 1948թ. մարտի 17-ի հա-

---

[62] Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 42: Հայաստանի կոմպոզիտորների միության ստեղծագործական պլենումը, «Սովետական Հայաստան», 16 հունվարի, 1948, N 13: На пленуме Союза советских композиторов Армении, "Коммунист", 14 января, 1948, N 11:

[63] Ապրիլի 26-27-ը ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության առաջին պլենումի նիստում Սովետական կոմպոզիտորների միության նախագահ է ընտրվում Բ.Ասաֆիևը, գլխավոր քարտուղար՝ Տ.Խրեննիկովը, քարտուղարներ՝ Մ.Կովալը, Վ.Զախարովը, Մ.Զուլակին, Ա.Շտոգարենտոն: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 47: Доклад Б.В.Асафьева на первом Всесоюзном съезде советских композиторов, "Советское искусство", 24 апреля, 1948, N 17. Первый Всесоюзный съезд советских композиторов. Содоклады представителей союзных республик, там же. Доклад Т.Н.Хренникова на первом Всесоюзном съезде советских композиторов, там же. Закончился первый Всесоюзный съезд, "Известия", 27 апреля, 1948, N 99. Սովետական կոմպոզիտորների համամիութենական առաջին համա-

մարում տպագրվում է Աշոտ Սաթյանի «Սովետահայ կոմպոզիտորների առաջնահերթ խնդիրները» ծրագրային հոդվածը[64]:

Շուտով անցկացվում են Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության V (7 հոկտեմբերի, 1950)[65] և VI (21-23 ապրիլի, 1952)[66] պլենումները: 1952թ. հոկտեմբերի 27-ին և 30-ին տեղի են ունենում VI պլենումի սիմֆոնիկ համերգները: Առաջին սիմֆոնիկ համերգի ընթացքում Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Ռ.Ստեփանյան), Հայաստանի պետերգեցիկ կապելլայի (դիրիժոր՝ Ա.Աբգարյան), մենակատարներ Ա.Պետրոսյանի և Ա.Թուխունջյանի կատարմամբ հնչում են Ռ.Ստեփանյանի Երկրորդ սիմֆոնիան, Գ.Եղիազարյանի Ռապսոդիան, Գ.Զեբոտարյանի «Սիմֆոնիկ պատկերները» և Է.Միրզոյանի «Կանտատը»[67]: Իսկ երկրորդ համերգին Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի պետերգեցիկ կապելլան (դիրիժոր՝ Ա.Աբգարյան) կատարում են Հ.Ստեփանյանի Սիմֆոնիան, Է.Աբրահամյանի «Պարային սյուիտը», Ղ.Սարյանի «Վոկալ սիմֆոնիկ պոեմը» և Վ.Կոտոյանի «Աշ-

---

գումարը, «Սովետական Հայաստան», 28 ապրիլի, 1948, N 100: Տե՛ս նաև Всесоюзный съезд советских композиторов (изложение выступлений), "Правда", 22 апреля, 1948, N 113. Всесоюзный съезд советских композиторов (изложение выступлений), "Известия", 22-25 апреля, 1948, N 95-98. Всесоюзный съезд советских композиторов (изложение выступлений), "Правда", 23-26 апреля, 1948, N 114-117. **Խրենննիկով Տ.,** Սովետական երաժշտությունը նոր էտապում, «Սովետական գրականություն և արվեստ», 1948, N 12, էջ 110-114: "Советская музыка", 1948, N 2, стр. 76:

64 **Սաթյան Ա.,** Սովետահայ կոմպոզիտորների առաջնահերթ խնդիրները, «Գրական թերթ», 17 մարտի, 1948, N 10: Տե՛ս նաև **Սաթյան Ա.,** Դեպի սովետահայ երաժշտության նոր վերելքը, «Սովետական գրականություն և արվեստ», 1949, N 3, էջ 116-122: **Сатян А.** К новому подъему советской армянской музыки, "Коммунист", 10 февраля, 1949, N 33. **Սաթյան Ա.,** Նոր տարվա, նոր հաջողությունների համար, «Սովետական Հայաստան», 1950, N 1, էջ 25: **Սաթյան Ա.,** Սովետահայ երաժշտության նոր նվաճումների համար, «Սովետական Հայաստան», 26 նոյեմբերի, 1950, N 279:

65 **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 94: «Սովետական Հայաստան», 7 հոկտեմբերի, 1950, N 238: V пленум Союза композиторов Армении, "Коммунист", 11 октября, 1950, N 242:

66 **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 132: **Саркисян А.** VI пленум правления Союза композиторов Армении, "Коммунист", 29 апреля, 1952, N 103:

67 Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 138: **Թաշչյան Ս.,** Սովետահայ կոմպոզիտորների նոր սիմֆոնիկ ստեղծագործությունները, «Սովետական Հայաստան», 3 հոկտեմբերի, 1952, N 285:

խարհի կառուցողը» վոկալ-սիմֆոնիկ պոեմը[68]*:*

Ա.Սաթյանի օրոք սկիզբ են առնում, իսկ հետագայում՝ ավելի բազմակողմանի ու բազմաբնույթ դառնում հայ կոմպոզիտորների հանդիպումները զինվորականների և աշխատավորների հետ: 1948թ. հունիսի 20-ին N զորամասի անձնակազմի հետ տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում են Ա.Սաթյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Կ.Զաքարյանը, Գ.Եղիազարյանը, Մ.Միրզոյանը: Ս.Գասպարյանի ներածական խոսքից հետո ելույթ են ունենում Հայաստանի ռադիոկոմիտեի երգեցիկ խումբը (ղեկավար՝ Կ.Զաքարյան) և ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկավար՝ Ա.Մերանգուլյան)[69]*:*

Իսկ 1952թ. մարտի 27-ին՝ «Հայքաղչին» տրեստի չինմասերի գործարանի կոլեկտիվի հետ հանդիպման ժամանակ, բացման խոսքով հանդես է գալիս Ա.Սաթյանը: Խ.Թոռջյանի զեկուցումից հետո ելույթ են ունենում Ա.Պետրոսյանը, Հ.Թալալյանը, Ռ.Դանիելյանը և Ն.Խաչատրյանը[70]*:*

Ամրապնդվում են կապերը խորհրդային կոմպոզիտորների հետ: Հայաստանի կոմպոզիտորների նոր ստեղծագործություններին ծանոթանալու նպատակով 1949թ. հոկտեմբերի 17-ին Երևան է ժամանում Դմիտրի Շոստակովիչը[71]*:*

1949թ. հոկտեմբերի 8-ին Բաքվում մեկնարկած՝ Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտական տասնօրյակի ընթացքում հնչում են Գ.Միրզոյանի, Ա.Հարությունյանի, Ա.Սաթյանի, Ա.Տեր-Ղևոնդյանի, Ա.Տիգրանյանի և Գ.Եղիազարյանի ստեղծագործությունները[72]*, իսկ նոյեմբերի 26-ին Մոսկվայի Պ.Ի.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում տեղի ունեցած ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության III պլենումի շրջանակներում կատարվում են Ա.Հարությունյանի «Տոնա-*

---

[68] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 138:* ***Егиазарян Г****. За высокую идейность, мастерство, "Коммунист", 12 ноября, 1952, N 267:*

[69] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 50: «Գրական թերթ», 24 հունիսի, 1948, N 23:*

[70] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 130: Встреча производственников с композиторами, "Коммунист", 29 марта, 1952, N 76:*

[71] ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 74: Д.Д.Шостакович в Ереване, "Коммунист", 20 октября, 1949, N 248:*

[72] ***Մազմանյան Ռ.****, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 73: «Գրական թերթ», 17 հոկտեմբերի, 1949, N 38:*

կան նախերգանքը» և Ա.Բաբաջանյանի Ջութակի կոնցերտը[73]:

1949թ. սեպտեմբերի 26-ին լրանում է Կոմիտասի ծննդյան 80-ամյակը, որը նշվում է ըստ արժանվույն. հանդիսավոր նիստ՝ Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում՝ սեպտեմբերի 26-ին, երեկո՝ Երևանի արվեստի աշխատողների տանը՝ սեպտեմբերի 28-ին, հանդիսավոր երեկո՝ Երևանի պահածոների գործարանի ակումբում. բոլոր տեղերում զեկուցողը Ս.Գասպարյանն է: Սեպտեմբերի 28-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության և տեսության սեկտորի երաժշտության բաժինը կազմակերպում է ցուցահանդես՝ նվիրված Կոմիտասի կյանքին և գործունեությանը: Սեպտեմբերի 30-ին տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 80-ամյակին Լենինականի ֆիլհարմոնիայի դահլիճում (ղեկավար՝ Վ.Ումր-Շատ), իսկ հոկտեմբերի 2-ին՝ երեկո՝ նվիրված Կոմիտասի հիշատակին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում (ներածական խոսք՝ Ա.Տեր-Ղևոնդյանի): Հոկտեմբերի 2-ին՝ Կոմիտասի գերեզմանին այցելության ընթացքում, ելույթ են ունենում Գ.Բորյանը, Հ.Դանիելյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Մ.Աղայանը և Գ.Գյոդակյանը. հաջորդում է համերգը՝ Շ.Տալյանի, Տ.Սազանդարյանի և Հայաստանի ռադիոկոմիտեի երգեցիկ խմբի կատարմամբ[74]:

Ի դեպ Հայաստանում Կոմիտասի հոբելյանական միջոցառումների մեկնարկն ազդարարում է Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական սեկցիան՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակին էր նվիրված 1949թ. սեպտեմբերի 21-ի գիտական նիստը, որի ընթացքում կարդացվեցին հետևյալ զեկուցումները՝ Ս.Գասպարյան. «Նյութեր Կոմիտասի կենսագրության և երաժշտական գործունեության վերաբերյալ», Մ.Աղայան. «Կոմիտասը որպես երաժիշտ կատարող»[75]:

Սկիզբ է առնում համագործակցությունը Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի միջև: 1951թ. նոյեմբերի 5-ին՝ Կոնսերվատորիայի հետ համատեղ կազմակերպվում է գիտական նստաշրջան՝

---

[73] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 75: Завоевать всенародное признание, "Советское искусство", 10 декабря, 1949, N 50:*

[74] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 73: «Սովետական Հայաստան», 28 սեպտեմբերի, 1949, N 230:*

[75] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 72: «Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի, 1949, N 225:*

նվիրված Ալ.Սպենդիարյանի ծննդյան 80-ամյակին:

1949թ. երաժշտական տարին եզրափակում է ***Հայ երաժշտության տասնօրյակը****, որը կազմակերպվում էր* ***առաջին անգամ*** *և դառնալու էր շարունակական՝ հայ երաժշտության դրոշի ներքո համախմբելով ոչ միայն կոմպոզիտորներին, այլև հանրապետության կատարողական լավագույն կոլեկտիվներին ու մենակատարներին: Դրանով իսկ սկիզբ է առնում կատարողական և կոմպոզիտորական պրակտիկայի սերտ կապ, որը պիտի տարիների ընթացքում շարունակվեր ու էլ ավելի ամրապնդվեր: Կազմակերպվում են 3 սիմֆոնիկ, 2 կամերային և 2 խմբերգային երաժշտության համերգներ, ինչպես նաև՝ քննարկում:*

Դեկտեմբերի 22-ին Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժորներ՝ Ս.Զարեքյան, Մ.Մալունցյան) համերգի ընթացքում, որտեղ ներածական խոսքով հանդես է գալիս Ա.Սաթյանը, Հայաստանի ռադիոկոմիտեի, Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի և Հայաստանի պետերգչախմբերի (ղեկավարներ՝ Կ.Զաքարյան և Լ.Տումաշև) ու մենակատարներ Ա.Պետրոսյանի, Ա.Թուքունջյանի, Ս.Վանիկյանի և Լ.Գեոխլանյանի մասնակցությամբ հնչում են Է.Հովհաննիսյանի, Է.Բաղդասարյանի, Է.Միրզոյանի և Ա.Հարությունյանի գործերը[76]*, իսկ դեկտեմբերի 24-ին՝ Ա.Խուդոյանի «Մեծ պատանեկություն» պոեմը, Ա.Այվազյանի Թավջութակի կոնցերտը և Սիմֆոնիկ սյուիտը, Զ.Կիրակոսյանի Ջութակի կոնցերտը և Է.Միրզոյանի «Հայաստան» կանտատը*[77]*:*

Դեկտեմբերի 23-ին՝ կամերային համերգի ընթացքում, որին մասնակցում են Սպենդիարյանի անվան կվարտետը, Շ.Տալյանը, Տ.Սազանդարյանը, Գ.Ադամյանը, Կ.Մալխասյանը և հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը, կատարվում են Գ.Միրզոյանի, Կ.Զաքարյանի, Ա.Տիգրանյանի, Հ.Ստեփանյանի, Գ.Ադամյանի, Ղ.Սարյանի, Ս.Ջրբաշյանի, Մ.Մազմանյանի, Արտ.Խաչատրյանի, Ե.Սահառունու և գուսան Շահենի գործերը[78]*, իսկ դեկտեմբերի 27-ի կամերային համերգին մասնակցում են Ալ.Սպենդիարյանի անվան կվարտետը, Ս.Գալստյանը, Ա.Պետրոսյանը, Տ.Սազանդարյանը,*

---

[76] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76: Декада армянской музыки, "Коммунист", 24 декабря, 1949, N 302:*

[77] *Մենակատարներ՝ Ա.Այվազյան, Հ.Բոգդանյան, Ս.Վանիկյան: Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76:* ***Мовсесян Н****. Декада армянской музыки, "Коммунист", 28 декабря, 1949, N 305:*

[78] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76: "Коммунист", 25 декабря, 1949, N 303:*

Շ.Տալյանը և Սայաթ-Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Վ.Սահակյան)[79]:

Դեկտեմբերի 26-ին՝ Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցած համերգի ընթացքում Երևանի երաժշտական ուսումնարանի երգչախմբի (ղեկավար՝ Մ.Մազմանյան) և դաշնակահարուհի Կ.Մալխասյանի կատարմամբ հնչում են Է.Խաղագործյանի, Ս.Զրբաշյանի, Վ.Կոտոյանի, Է.Հովհաննիսյանի, Է.Բաղդասարյանի, Գ.Զթչյանի, Ս.Սամվելյանի և Գ.Խաչատրյանի (Արմենյան) խմբերգային ստեղծագործությունները[80], իսկ դեկտեմբերի 28-ի համերգին իրենց մասնակցությունն են բերում Հայաստանի պետական երգեցիկ կապելլան և Ռադիոկոմիտեի երգեցիկ խումբը (ղեկավար՝ Կ.Զաքարյան), ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկավար՝ Ա.Մերանդուլյան)[81]:

Տասնօրյակին է նվիրվում Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության դեկտեմբերի 29-ի ընդլայնված նիստը՝ Վրաստանի և Ադրբեջանի կոմպոզիտորների մասնակցությամբ: Տասնօրյակի մասին իրենց տպավորություններով հանդես են գալիս Ս.Ռուստամովը, Ա.Բալանչիվաձեն, Ֆ.Ամիրովը, Գ.Տիգրանովը և Պ.Խուչուան[82]: Հաջորդում է Տասնօրյակի եզրափակիչ համերգը. 1950թ. հունվարի 5-ին Հայաստանի պետերգեցիկ կապելլայի, Ռադիոկոմիտեի և Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի երգեցիկ խմբերի և Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժորներ՝ Մ.Մալունցյան, Ս.Զարեքյան, խմբավարներ՝ Կ.Զաքարյան, Լ.Տումաչև) կատարմամբ հնչում են Ա.Խաչատրյանի, Գ.Զեբոտարյանի, Ա.Այվազյանի, Ա.Հարությունյանի և Հ.Ստեփանյանի ստեղծագործությունները[83]:

---

[79] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76: «Սովետական Հայաստան», 27 դեկտեմբերի, 1949, N 304:

[80] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76: **Мовсесян Н**. Декада армянской музыки, "Коммунист", 28 декабря, 1949, N 305:

[81] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 76-77: "Коммунист", 28 декабря, 1949, N 305:

[82] Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 77: **Сатян А.** Декада армянской музыки, "Коммунист", 4 января, 1950, N 3:

[83] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 81: **Թաղևոսյան Ալ.,** Սովետահայ երաժշտության հետագա զարգացման համար, «Սովետական Հայաստան», 5 հունվարի, 1950, N 4: **Թաղևոսյան Ալ.,** Սովետահայ երաժշտության տասնօրյակը, «Սովետական գրականություն և արվեստ», 1950, N 1, էջ 131-134: **Рустамов С.** Чувство глубо-

1950թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 9-ը տեղի է ունենում Հայաստանի արվեստի աշխատողների ստեղծագործական հաշվետվության տասնօրյակը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակին: Բացման խոսքով հանդես է գալիս Ա.Սաթյանը, ներածական խոսքով՝ Գ.Տիգրանովը: Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Մ.Մալունցյան), երգեցիկ խմբի (խմբավար՝ Լ.Ն.Տումաշև), դաշնակահար Վ.Սարգսյանի, երգչուհի Տ.Սազանդարյանի, երգիչներ Ս.Շախիջանյանի և Ա.Սամվելյանի կատարմամբ հնչում են Ա.Հարությունյանի և Է.Միրզոյանի Կանտատը Լենինի մասին, Է.Բաղդասարյանի «Սիմֆոնիկ պոեմը», Է.Հովհաննիսյանի «Խաղաղություն աշխարհին» կանտատը, Գ.Եղիազարյանի «Բալետային սյուիտը», Ա.Սաթյանի «Կոնցերտային վալսը» և Վ.Կոտոյանի Դաշնամուրային կոնցերտի առաջին մասը[84]: Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի նոյեմբերի 30-ի համերգի (դիրիժոր՝ Ս.Զարեքյան)[85] ծրագրում ընդգրկվում են Է.Աբրահամյանի, Ա.Բաբաջանյանի, Կ.Զաքարյանի, Վ.Տիգրանյանի, Գ.Արմենյանի, Գ.Զեբոտարյանի[86], իսկ դեկտեմբերի 2-ի համերգի ծրագրում[87] Է.Աբրահամյանի, Ա.Բաբաջանյանի, Ա.Սաթյանի, Վ.Տիգրանյանի, Գ.Խաչատրյանի (Արմենյան) և Գ.Զեբոտարյանի գործերը[88]:

Կամերային համերգների ընթացքում հնչում են Ա.Այվազյանի Կվարտետը, Է.Միրզոյանի Կվարտետը, Ա.Հարությունյանի Կոնցերտը փողի համար, Ա.Քոչարյանի Ջութակի մանրանվագները, Մ.Միրզոյանի, Վ.Տիգրանյանի և Վ.Կոտոյանի երգերը (24 նոյեմբերի)[89] և Ա.Խաչատրյանի, Ա.Հարությունյանի, Ա.Սաթյանի,

---

кой радости, "Коммунист", 4 января, 1950, N 3. ***Гаспарян С., Тигранов Г.*** *Смотр армянской музыки, "Советская музыка", 1950, N 2, стр. 42-47.* ***Гилина Е.*** *За дальнейший подъем творчества композиторов Армении, "Коммунист", 2 февраля, 1950, N 28:*

[84] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 97: Առաջին համերգը, «Գրական թերթ», 25 նոյեմբերի, 1950, N 43:* ***Варданов Р.*** *Симфонический концерт, "Коммунист", 26 ноября, 1950, N 279:*

[85] *Մասնակցում էին երգիչներ Գ.Գասպարյանը, Ս.Գալստյանը, Վ.Գրիգորյանը:*

[86] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 98: «Սովետական Հայաստան», 30 նոյեմբերի, 1950, N 282:*

[87] *Մենակատարներ՝ Գ.Գասպարյան, Ս.Գալստյան և Վ.Գրիգորյան:*

[88] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 98-99: «Սովետական Հայաստան», 2 դեկտեմբերի, 1950, N 284:*

[89] *Ելույթ են ունենում Շ.Տալյանը, Հ.Աբաջյանը, Ռ.Դանիելյանը, Հ.Մնսիայանը և Կոմիտասի անվան կվարտետը, ներածական խոսքով հանդես է գալիս Ե.Գիլինան: Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն*

Գ.Միրզոյանի, Արտ.Խաչատրյանի, Ս.Զրբաշյանի, Ս.Նաղդյանի, Է.Բաղդասարյանի և Է.Հովհաննիսյանի երկերը (27 նոյեմբերի)[90]:

Տասնօրյակի արդյունքների՝ դեկտեմբերի 19-ին կազմակերպված քննարկմանը ելույթ են ունենում Ա.Խոլոդիլինը, Ա.Շահվերդյանը, Գ.Բերնանդտը (Մոսկվա), Ա.Շտոգարենկոն (Կիև), Գ.Տիգրանովը, Ա.Սաթյանը և Գ.Զեբոտարյանը[91]:

1950թ. սեպտեմբերի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների միությունում տեղի է ունենում Ա.Բաբաջանյանի «Հերոսական բալլադի» և Է.Բաղդասարյանի «Տուրուխանյան պոեմ» սիմֆոնիկ պոեմի ունկնդրումը[92]: 1951թ. ապրիլի 12-ին Հայաստանի կոմպոզիտորների միությունը կազմակերպում է «Հայկական ժողովրդական երգը և նրա օգտագործման ձևերը» թեմայով ստեղծագործական բանավեճ[93], իսկ ապրիլի 22-ին հրավիրվում է սովետական օպերային ստեղծագործության հարցերին նվիրված խորհրդակցություն, որտեղ ներածական խոսքով հանդես է գալիս Ա.Սաթյանը, իսկ զեկուցումով՝ Ս.Գասպարյանը[94]:

Կազմակերպվում են հայ կոմպոզիտորներին նվիրված հուշերեկոներ:

Ռոմանոս Մելիքյանի մահվան 15-ամյակին նվիրված հուշերեկոյի (1 ապրիլի, 1950) ընթացքում բացման խոսքով հանդես է գալիս Ա.Սաթյանը, իսկ զեկուցումով՝ Ա.Քոչարյանը: Հուշեր են

(1946-1960), էջ 97: Камерный концерт, «Советская Армения», 26 ноября, 1950, N 279: **Гилина Е.** Камерный концерт, "Коммунист", 26 ноября, 1950, N 279:

90 Ելույթ է ունենում Ա.Սպենդիարյանի անվան կվարտետը՝ հետևյալ կազմով՝ Հ.Բոզդանյան, Բ.Քեչեջյան, Ս.Խաչատրյան, Գ.Ադամյան, երգիչներ Ա.Պետրոսյանը, Ս.Շախիջանյանը և Ս.Գալստյանը: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 98: **Тер-Гевондян А.** Концерт квартета имени Спендиарова, "Коммунист", 1 декабря, 1950, N 283:

91 **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 99: Обсуждение декады армянской советской музыки, "Коммунист", 10 декабря, 1950, N 290:

92 Քննարկմանը մասնակցում են Ա.Տեր-Ղևոնդյանը, Հ.Ստեփանյանը, Է.Միրզոյանը, Ղ.Սարյանը և Ե.Գիլինան: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 93: **Саркисян А.** Композиторы – к 30-летию Советской Армении, "Коммунист", 20 сентября, 1950, N 223:

93 Զեկուցող՝ Մ.Աղայան: Ելույթ են ունենում Ա.Տեր-Ղևոնդյանը, Ա.Մերանդուլյանը, Ա.Քոչարյանը և Թ.Ալթունյանը: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 110: Творческая дискуссия, "Коммунист", 13 апреля, 1951, N 86:

94 **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 111:

պատմում Հ.Դանիելյանը, Մ.Սարյանը, Դ.Դեմիրճյանը, Ստ.Զորյանը և Ա.Մանուկյանը: Ավ.Իսահակյանի հուշերը կարդում է երաժշտագետ Ալ.Թադևոսյանը: Հաջորդում է Ռ.Մելիքյանի ստեղծագործություններից կազմված համերգը[95]:

Արմեն Տիգրանյանի մահվան տարելիցին նվիրված երեկոյի (9 փետրվարի, 1951) ժամանակ զեկուցումով հանդես է գալիս Ս.Գասպարյանը, որից հետո իրենց հուշերն են պատմում Մ.Միրզոյանը, Ա.Մանուկյանը, Ավ.Իսահակյանը և Շ.Տալյանը: Երգիչներ Գ.Գասպարյանը, Ա.Պետրոսյանը և Շ.Տալյանը կատարում են հատվածներ «Անուշ» և «Դավիթ-Բեկ» օպերաներից, կոմպոզիտորի ռոմանսներն ու երգերը[96]:

Նիկողայոս Տիգրանյանի մահվան տարելիցին նվիրված երեկոյի (19 փետրվարի, 1952) ընթացքում զեկուցումով հանդես է գալիս Ա.Տեր-Ղևոնդյանը, այնուհետև կոմպոզիտորի մասին հիշողություններ են պատմում Ա.Մանուկյանը և Դ.Ղազարյանը[97]:

Միությունը կազմակերպում է ստեղծագործական երեկոներ:

1951թ. ապրիլի 17-ին Հարո Ստեփանյանի ստեղծագործական երեկոյի ժամանակ բացման խոսքով հանդես է գալիս Աշոտ Սաթյանը: Սամսոն Գասպարյանի զեկուցմանը հաջորդում է կոմպոզիտորի ստեղծագործություններից բաղկացած համերգը[98]: Իսկ Վահան Ումր-Շատի (9 հուլիսի, 1951) ստեղծագործական երեկոյի ընթացքում զեկուցումով հանդես է գալիս Խ.Թոռչյանը: Կոմպոզիտորի ստեղծագործությունների մասին արտահայտվում են Ա.Տեր-Ղևոնդյանը, Ա.Սաթյանը, Ա.Մանուկյանը, Ա.Հարությունյանը և Է.Միրզոյանը, ապա ելույթ են ունենում դաշնակահարուհի Ա.Ամբակումյանը, երգիչներ Վ.Մաթևոսյանը և Ա.Մուշկամբարյանը[99]:

1950թ. հոկտեմբերի 7-ին Կոմպոզիտորների միության դահլիճում տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների միության

---

[95] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 86: «Գրական թերթ», 10 ապրիլի, 1950, N 13:*

[96] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 106: Կոմպոզիտոր Ա.Տիգրանյանի հիշատակին նվիրված երեկո, «Սովետական Հայաստան», 11 փետրվարի, 1951, N 35:*

[97] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 128: "Коммунист", 21 февраля, 1952, N 44:*

[98] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 110: «Սովետական Հայաստան», 19 ապրիլի, 1951, N 87:*

[99] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 116: Հաշվետու ստեղծագործական երեկո, «Գրական թերթ», 17 հուլիսի, 1951, N 26:*

*վարչության V **պլենումը**[100], իսկ 1952թ. ապրիլի 21-23-ին՝ Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության վարչության VI **պլենումը**, որտեղ զեկուցումով հանդես է գալիս Ա.Սաթյանը[101]:*

Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության ստեղծագործական պլենումի սիմֆոնիկ համերգները տեղի են ունենում Հայֆիլհարմոնիայի դահլիճում 1952թ. հոկտեմբերի 27-ին[102] և 30-ին[103]:

Ա.Սաթյանի պաշտոնավարման հնգամյակում շեշտակիորեն աճում է հայ կոմպոզիտորների համամիութենական ճանաչումը: ՍՍՀՄ Պետական մրցանակների են արժանանում Ալեքսանդր Հարությունյանը՝ «Հայրենիք» կանտատի (15 ապրիլի, 1949)[104], Առնո Բաբաջանյանը՝ «Հերոսական բալլադի»[105] (15 մարտի, 1951) և Աշոտ Սաթյանը՝ «Արարատյան հովտի երգերը» շարքի[106] (20 մար-

---

[100] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 94: «Սովետական Հայաստան», 7 հոկտեմբերի, 1950, N 238: V пленум Союза композиторов Армении, "Коммунист", 11 октября, 1950, N 242:*

[101] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 132:* ***Саркисян А.*** *VI пленум правления Союза композиторов Армении, "Коммунист", 29 апреля, 1952, N 103:*

[102] *Ելույթ են ունենում Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Ռ.Ստեփանյան), Հայաստանի պետերգեցիկ կապելլան (դիրիժոր՝ Ա.Աբգարյան) և մենակատարներ Ա.Պետրոսյանն ու Ա.Թումունջյանը: Հնչում են Ռ.Ստեփանյանի Երկրորդ սիմֆոնիան, Գ.Եղիազարյանի «Ռապսոդիան», Գ.Զերոտարյանի «Սիմֆոնիկ պատկերները» և Է.Միրզոյանի «Կանտատը»: Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 138:* ***Թաշչյան Ս.,*** *Սովետահայ կոմպոզիտորների նոր սիմֆոնիկ ստեղծագործությունները, «Սովետական Հայաստան», 3 հոկտեմբերի, 1952, N 285:*

[103] *Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետերգեցիկ կապելլայի (դիրիժոր՝ Ա.Աբգարյան) կատարմամբ հնչում են Հ.Ստեփանյանի Սիմֆոնիան, Է.Աբրահամյանի «Պարային սյուիտը», Ղ.Սարյանի Վոկալ սիմֆոնիկ պոեմը և Վ.Կոտոյանի «Աշխարհի կառուցողը» վոկալ-սիմֆոնիկ պոեմը: Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 138:* ***Егиазарян Г.*** *За высокую идейность, мастерство, "Коммунист", 12 ноября, 1952, N 267:*

[104] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 64:* ***Թաղևոսյան Ալ.,*** *Կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյան, «Սովետական Հայաստան», 17 ապրիլի, 1949, N 90:* ***Мирзоян Э., Бабаджанян А.*** *Он воспел Родину, "Коммунист", 17 апреля, 1949, N 90:*

[105] *Տե՛ս* ***Арутюнян А., Мирзоян Э., Худоян А.*** *Талантливое произведение ("Героическая баллада"), "Коммунист", 31 марта, 1951, N 75:*

[106] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 130:* ***Ղևոնդյան Զ.,*** *Աշոտ Սաթյան, «Սովետական Հայաստան», 13*

տի, 1952) համար:

1951թ. Կարլովի Վարիում կայացած վեցերորդ համաշխարհային կինոփառատոնի ժյուրիի որոշմամբ մրցանակ է շնորհվում Աշոտ Սաթյանին «Սովետական Հայաստան» կինոֆիլմի երաժշտության համար[107]:

Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում բեմադրված «Հերոսուհին» օպերայի համար Հարո Ստեփանյանին, Միքայել Թավրիզյանին, Տաթևիկ Սազանդարյանին, Գոհար Գասպարյանին, Ավագ Պետրոսյանին և Վահրամ Գրիգորյանին շնորհվում է ՀՍՍՀ Պետական մրցանակ[108]:

*Միությունը շարունակում է իր բեղմնավոր գործունեությունը Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ն.Յա. Մյասկովսկուսան **Գրիգոր Եղիազարի Եղիազարյանի** (1908-1988)՝ որպես ՀԿՄ վարչության նախագահի, պաշտոնավարման տարիներին ևս[109]:*

*1954թ. նոյեմբերի 30-ին[110] և դեկտեմբերի 1-ին[111] տեղի են ունենում Հայաստանի սովետական կոմպոզիտորների IX **պլենումի** սիմֆոնիկ համերգները:*

---

*ապրիլի, 1952, N 90: **Сазандарян Т.** Песни Ашота Сатяна, "Коммунист", 27 марта, 1952, N 74:*

[107] ***Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 116: Новый успех советской культуры, "Коммунист", 7 августа, 1951, N 183:*

[108] ***Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 108: «Սովետական Հայաստան», 30 մարտի, 1951, N 74:*

[109] *Գրիգոր Եղիազարյանի մասին տե՛ս **Խուդաբաշյան Կ.,** Եղիազարյան Գրիգոր, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 3, Երևան, 1977, էջ 505: **Խուդաբաշյան Կ.,** Եղիազարյան Գրիգոր, Երևան, 1966:*

[110] *Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժորներ՝ Մ.Մալունցյան, Ի.Խարաջանյան), երգեցիկ խմբի ու մենակատարներ Ա.Սարաջյանի (երգ) և Է.Աբրահամյանի (դաշնամուր) կատարմամբ հնչում են Հ.Ստեփանյանի, Ղ.Սարյանի, Է.Աբրահամյանի և Գ.Եղիազարյանի գործերը: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 191: **Եղիազարյան Գ.,** Հայաստանի սովետական կոմպոզիտորների 9-րդ պլենումը, «Սովետական գրականություն և արվեստ», 1955, N 1, էջ 147-150:*

[111] *Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժորներ՝ Մ.Մալունցյան, Ի.Խարաջանյան), Հայաստանի պետերգեցիկ կապելլայի (գեղարվեստական ղեկավար՝ Ա.Աբգարյան, խմբավար՝ Է.Ծատուրյան) և մենակատարներ Ս.Շախիջանյանի (երգ) ու Լ.Այոյանի (ֆլեյտա) կատարմամբ հնչում են Բ.Սակիսարիի, Ա.Տեր-Ղևոնդյանի, Ա.Խուդոյանի, Ս.Ջրբաշյանի, Է.Բաղդասարյանի, Գ.Արմենյանի և Է.Հովհաննիսյանի գործերը: Տե՛ս **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 191: **Թադևոսյան Ա.,** Սովետահայ երաժշտության գեղարվեստական որակի բարձր մակարդակի համար, «Սովետական Հայաստան», 16 դեկտեմբերի, 1954, N 297:*

Նախորդ տարիներին ստեղծված առավել նշանակալից մասսայական էստրադային երգերի և խմբերգերի ցուցադրման համերգին (23-24 հոկտեմբերի, 1953) Շ.Տալյանի, Ա.Տեր-Աբրահամյանի, Ա.Թուխմանջյանի, Ս.Գալստյանի, Մ.Զոլախյանի, Լ.Մամաջանյանի, Ռ.Դանիելյանի, Ն.Խաչատրյանի, Հայաստանի ռադիոկոմիտեի վոկալ կվարտետի (ղեկավար՝ Կ.Զաքարյան) և ժողգործիքների անսամբլի (գեղարվեստական ղեկավար՝ Ա.Մերանգուլյան) կատարմամբ հնչում են Ա.Բաբաջանյանի, Ա.Հարությունյանի, Կ.Զաքարյանի, Ա.Սաթյանի, Է.Միրզոյանի, Ս.Զրբաչյանի, Է.Հովհաննիսյանի, Վ.Կոտոյանի, Արտ.Խաչատրյանի, Վ.Տիգրանյանի, Ա.Քոչարյանի ստեղծագործությունները: Քննարկմանը մասնակցում են Մ.Աղայանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Ե.Գիլինան, Ա.Հարությունյանը, Խ.Թոռջյանը, Ա.Տոնիկյանը և Գ.Եղիազարյանը[112]*:*

Հայ երաժշտությունը ներկայացվում է Հայաստանից դուրս. 1954թ. մայիսի 27-ին Բաքվի Մ.Մագոմաևի անվան ֆիլհարմոնիայում Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործական երեկոյի ընթացքում ելույթ են ունենում Ադրբեջանի Ու.Հաջիբեկովի անվան սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Մ.Մալունցյան), երգչուհի Տ.Սազանդարյանը և կոմպոզիտոր-դաշնակահար Ալեքսանդր Հարությունյանը[113]*:*

1955թ. դեկտեմբերի 10-17-ը Թբիլիսիում տեղի է ունենում ՍՍՀՄ կոմպոզիտորների միության երաժշտական քննադատության հանձնաժողովի V պլենումը՝ նվիրված անդրկովկասյան հանրապետությունների երաժշտության հարցերին: Պլենումը բացում է Վրաստանի կոմպոզիտորների միության նախագահ Անդրեյ Բալանչիվաձեն, այնուհետև ներածական խոսքով հանդես է գալիս ՍՍՀՄ կոմպոզիտորների միության քարտուղար Գեորգի Խուբովը: Վերջինս կանգ է առնում «...այն կարևոր խնդիրների վրա, որոնք դրված են Անդրկովկասի երաժշտագետների առաջ՝ սովետական երաժշտության փորձն ընդհանրացնելու, երաժշտական քննադատությունն ավելի համարձակորեն ծավալելու, կլասիկ և ժողովրդական ստեղծագործությունն ուսումնասիրելու բնագավառներում»[114]*: Զեկուցումներով հանդես են գալիս Ա.Ցուլուկիձեն, Շ.Ասլանիշվիլին, Գ.Զխիկվաձեն, Ա.Բաղալբեյլին, Է.Աբասովան, Ս.Գինզ-*

---

[112] *Տե՛ս* ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 162-163: Հայաստանի կոմպոզիտորների միությունում, «Գրական թերթ», 18 նոյեմբերի, 1953, N 42:*

[113] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 182:*

[114] *Երաժշտագիտական պլենում, «Սովետական արվեստ», 1956, N 1, էջ 50:*

բուրգը, Դ.Ժիտոմիրսկին: Զեկուցումների շուրջ բանավեճում ելույթ են ունենում Օ.Տակտակիշվիլին, Ա.Շավերզաշվիլին, Շ.Ազմայպարաշվիլին, Ի.Տուսկիան, Ա.Աբասովը, Ղ.Սարյանը և Բ.Զեյդմանը[115]:

Երաժշտական քննադատության հարցերին նվիրված զեկուցումներով Հայաստանից հանդես են գալիս Ե.Գիլինան, Ա.Բարսամյանը և Մ.Հարությունյանը: Երաժշտական ժառանգության մասին զեկուցում է Գ.Տիգրանովը, իսկ ֆոլկլորի մասին՝ Ռ.Աթայանը: Ելույթներով հանդես են գալիս Մ.Տերյանը, Մ.Բրուտյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Ղ.Սարյանը:

Պլենումը նշում է, որ անդրկովկասյան հանրապետությունների երաժշտագետները զգալի հաջողություններ են ձեռք բերել իրենց մասնագիտական աշխատանքում, մասնավորապես «երաժշտական ժառանգության ուսումնասիրման, ինչպես նաև սովետական երաժշտության մի քանի առանձին հարցերի մշակման ուղղությամբ»[116]:

Պլենումը միաժամանակ մատնանշում է այն իրողությունը, որ Անդրկովկասի երաժշտագետներն ընդհանուր առմամբ «...ետ են մնում երաժշտական-ստեղծագործական պրակտիկայից: Դեռևս անհրաժեշտ աշխատանք չի տարվում սովետական երաժշտության փորձի ընդհանրացման, սովետական երաժշտության ակտուալ պրոբլեմների ուսումնասիրության գծով: Երաժշտագետների զգալի մասը դեռևս շատ հեռու է կանգնած երաժշտական ստեղծագործության ժամանակակից կենսական հարցերից»[117]:

---

[115] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 226: Музыковедческий пленум в Закавказье, "Советская музыка", 1956, N 2, стр. 153:*

[116] *Երաժշտագիտական պլենում, «Սովետական արվեստ», 1956, N 1, էջ 50:*

[117] *Նույն տեղում:*

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԽԹԱՆՄԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ

1956թ. փետրվարի 10-16-ը տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների միության IV համագումարը: Համագումարի պատգամավորներն ու հյուրերը ծանոթանում են սովետահայ կոմպոզիտորների վերջին տարիների ստեղծագործություններին, որոնց մի մասը կատարվում է առաջին անգամ:

Համագումարը ցուցադրում է հանրապետության ստեղծագործող երաժիշտների աճը և միաժամանակ ի մի բերում հաշվետու շրջանում Միության վարչության կատարած աշխատանքը: Ինչպես նշում է ՍՍՀՄ կոմպոզիտորների միության քարտուղար Գեորգի Խուբովը. «Մենք կարծում ենք, և ես պատասխանատվության գիտակցությամբ կարող եմ հայտարարել, որ Հայաստանի կոմպոզիտորների կազմակերպությունը ամենաուժեղներից մեկն է մեր ամբողջ երկրում...»[118]:

Միևնույն ժամանակ համագումարը ցույց տվեց, որ «Հայաստանում նկատվում է երիտասարդ կոմպոզիտորների հախուռն աճ, որ կարող է օրինակ լինել բոլոր ռեսպուբլիկաների համար: Հայ երաժշտական երիտասարդությունը խորին հրճվանք է պատճառում մեզ: Նա իրոք տաղանդավոր է, և իրավացի չեն ընկերները, որ նրանց ուզում են հեռու պահել Բեթհովենի կամ Ռախմանինովի ազդեցությունից»[119]:

Կոմպոզիտորների միության վարչության աշխատանքների մասին հաշվետու զեկուցումով հանդես է գալիս վարչության նախագահ, կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը, որից հետո ծավալվում է մտքերի փոխանակությունը[120]:

Փետրվարի 10-ին Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Մ.Մալունցյան) և մենակատար-դաշնակահար Ալեքսանդր Հարությունյանի կատարմամբ հնչում են Ա.Այվազյանի, Ա.Հարությունյանի, Ղ.Սարյանի, Է.Հովհաննիսյանի, Ջ.Տեր-Թադևոսյանի և Ա.Աճեմյաի գործերը[121]: Փետրվարի 12-ին տղամարդկանց վոկալ

---

[118] *Տե՛ս* ***Խուբով Գ.,*** *Սոցիալիստական ռեալիզմն անհամատեղելի է միօրինակության հետ, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 12:*

[119] *Նույն տեղում, էջ 16:*

[120] *Տե՛ս Հայաստանի սովետական կոմպոզիտորների 4-րդ համագումարը, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 47-50:*

[121] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 229: «Սովետական Հայաստան», 10 փետրվարի, 1956, N35:*

կվարտետը, գործիքային կվինտետը (ղեկավար՝ Կ.Օրբելյան), մենակատարներ՝ կոմպոզիտոր Ալ.Հարությունյանը, երգիչներ Ա.Հարությունյանը, Է.Բաղդասարյանը և փողհար Հ.Մեսիայանը կատարում են Ա.Հարությունյանի «Սևանը», Ա.Բաբաջանյանի «Երևանը», «Նատաշայի երգը», «Սերենադը», Վ.Արարատյանի «Արևիկը», Ա.Մանուկյանի «Երգ Շահումյանի մասին», Կ.Օրբելյանի «Իմ Հայաստանը» և «Ինտերմեցցոն», Կ.Զաքարյանի «Վալսը», Ա.Աճեմյանի «Երիտասարդականը», Է.Հովհաննիսյանի «Վերադարձը» և Է.Բաղդասարյանի «Պարը»[122]: Փետրվարի 13-ի սիմֆոնիկ համերգին (մենակատար-դաշնակահար՝ Հակոբ Զարգարյան) հնչում են Բ.Սակիլարիի, Հ.Ստեփանյանի, Ա.Խուդոյանի, Ա.Ավետիսյանի և Է.Խաղագործյանի[123], իսկ փետրվարի 14-ի սիմֆոնիկ համերգին (դիրիժոր՝ Մ.Մալունցյան, մենակատարներ՝ երգչուհի Տ.Սազանդարյան և ֆլեյտահար Լ.Ալոյան)՝ Ա.Տեր-Ղևոնդյանի, Գ.Եղիազարյանի, Ա.Հարությունյանի, Ա.Դոլուխանյանի, Ա.Սաթյանի, Ղ.Սարյանի, Է.Միրզոյանի և Գ.Արմենյանի երկերը[124]:

Հայաստանի կոմպոզիտորների միության IV համագումարում կատարված ստեղծագործությունների քննարկումը տեղի է ունենում 1956թ. փետրվարի 15-ին: Ներածական խոսքով հանդես է գալիս Ս.Գասպարյանը, այնուհետև ելույթ են ունենում Ա.Բարսամյանը, Յու.Լևիտինը, Մ.Բրուտյանը, Լ.Խալաթյանը, Ա.Շավերզաշվիլին, Վ.Նախաբինը, Արտ.Խաչատրյանը, Էդ.Կզարթմյանը, Ս.Ալեսկերովը, Էդ.Փաշինյանը, Վ.Բորիսովը, Գ.Եղիազարյանը, Ա.Ստեպանովը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Ա.Բելազարասը, Բ.Զալդրանյանը, Մ.Աղայանը և Գ.Հայրապետյանը[125]:

Քննադատության և պրոֆեսիոնալիզմի հարցերին նվիրված ծավալուն ելույթով հանդես է գալիս ՍՍՀՄ կոմպոզիտորների միության քարտուղար, «Советская музыка» ամսագրի գլխավոր խմբագիր Գեորգի Խուբովը, ում ելույթը տպագրվում է «Սովետական արվեստի» 1956թ. 2-րդ համարում[126]: «Երկար տարիների ընթաց-

---

[122] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 229-230: «Սովետական Հայաստան», 12 փետրվարի, 1956, N37:*

[123] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 230: «Սովետական Հայաստան», 12 փետրվարի, 1956, N37:*

[124] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 230: На IV съезде композиторов Армении, "Коммунист", 14 февраля, 1956, N 38:*

[125] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 230:*

[126] *Տե՛ս* ***Խուբով Գ.,*** *Սոցիալիստական ռեալիզմն անհամատեղելի է միօրինակության հետ, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 12-17:*

քում առաջին անգամ ինձ վիճակվում է հանդես գալ իմ հայրենի քաղաքում և այն էլ Հայաստանի կոմպոզիտորների IV համագումարի ամբիոնից: Հայաստանի կոմպոզիտորների այս համագումարի ընթացքում ես շատ երաժշտական ստեղծագործություններ ունկնդրեցի, որոնց հիմքում ընկած են լուրջ ու արժեքավոր մտահղացումներ, բայց ինձ համար այնպես էլ անհասկանալի մնաց, թե ինչու համագումարի օրակարգի մեջ չկար մի տեսական զեկուցում, որ անշուշտ մեծ հետաքրքրություն կառաջացներ, աշխուժություն կմտցներ մեր աշխատանքում և օգտակար կլիներ: Ես ցավով եմ նշում այն փաստը, որ այստեղ, այս համագումարում չհնչեց քննադատության զրնգուն ձայնը: Ափսոս, որ մենք գրեթե չլսեցինք երաժշտության տեսաբաններին, քննադատներին»[127]:

Համագումարում խիստ քննադատության է ենթարկվում Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը, որը «հաճախ հոգատար վերաբերմունք չի ցուցաբերել դեպի նորաստեղծ օպերաներն ու բալետները»[128]:

Քննադատական խոսքեր են հնչում Վարչության հասցեին, որ համագումարի համերգների ծրագրում չկային «ո՛չ Պետական երգչախումբը, ո՛չ էլ Երգի-պարի վաստակավոր անսամբլը, որոնք հիանալի կերպով կարող էին ներկայացնել մեր ազգային երգչական կուլտուրայի կարևորագույն բնագավառը՝ խմբական երգը, մանավանդ, որ այդ կոլեկտիվների ռեպերտուարներում է, որ տեղ են գտել վերջին տարիներին ստեղծված մեր լավագույն խմբերգերը»[129]:

Խիստ քննադատության է ենթարկվում նաև մանկական երգի բնագավառը, որտեղ «չափազանց շատ են անճաշակ, պրիմիտիվ օրինակները... Մանկական երգը պետք է մանուկներին հետաքրքրող թեմաների շուրջ լինի, մանուկներին մատչելի միջոցներով գրված, և բոլորովին պարտադիր չէ, որ նա պատմի մանուկների մասին»[130]:

Արձանագրվում է նաև, որ Երևանից բացի, Հանրապետության մյուս քաղաքներում «...չի մղվում երաժշտական պրոպագանդա՝ ուղղված ժողովրդի ճաշակի բարձրացմանը և մեր կոմպոզիտորների կամերային ու սիմֆոնիկ ստեղծագործությունների մասսայականացման նպատակին: Կամերային համերգներ գրեթե տեղի չեն ունենում, սիմֆոնիկ համերգները չունեն հաճախորդների լայն

---

[127] Նույն տեղում, էջ 12:
[128] Հայաստանի սովետական կոմպոզիտորների 4-րդ համագումարը, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 47:
[129] Նույն տեղում, էջ 49:
[130] Նույն տեղում:

շրջան, չկա երաժշտական լեկտորիում: Առանձնապես քիչ են կատարվում երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները, և դրա հետևանքով ոչ միայն տուժում է մեր ժամանակակից արվեստի պրոպագանդայի գործը, այլև իրենք՝ երիտասարդ կոմպոզիտորները զրկվում են իրենց ստեղծագործությունները պրակտիկայում ստուգելու, ունկնդիրների կարծիքը լսելու կարևոր հնարավորությունից»[131]:

Համագումարը փաստեց, որ սովետահայ երաժշտության լավագույն նվաճումներից են վառ արտահայտված ազգային դիմագիծը և այն, որ «մեր կոմպոզիտորների մեծամասնությունը լավ տիրապետում է երաժշտական պրոֆեսիոնալիզմին»[132]: Վերջին տարիներին Հայաստանի կոմպոզիտորական կոլեկտիվը համալրվել էր «...օժտված և պրոֆեսիոնալ գրագետ երիտասարդ ստեղծագործողների մի ստվարանդամ ջոկատով (Ա.Աճեմյան, Ա.Ավետիսյան, Ս.Սամվելյան, Գ.Զթչյան, Է.Խաղագործյան և ուրիշներ), և նրանցից շատերն այսօր իրենց թարմ խոսքն են ասում մեր երաժշտական կյանքում»[133]:

Հայաստանի կոմպոզիտորների միության IV համագումարն ընտրում է վարչության նոր կազմ՝ բաղկացած 15 հոգուց: Նորընտիր վարչության նիստում վարչության նախագահ է ընտրվում ***Ղազարոս Մարտիրոսի Սարյանը*** *(1920-1998), պատասխանատու քարտուղար՝ երաժշտագետ Ալեքսանդր Թադևոսյանը[134]:*

Շուտով Ղ.Սարյանի խնդրանքով նրան ժամանակավորապես փոխարինում է ***Էդվարդ Միքայելի Միրզոյանը*** *(1921-2012), ով ղեկավարեց Միության աշխատանքները 35 տարի՝ իր «նախագահական» երկարակեցությամբ ու արդասավորությամբ գերազանցելով Հայաստանի կոմպոզիտորների միության նախորդ և հետագա բոլոր նախագահներին:*

Էդ.Միրզոյանի պաշտոնավարման տարիներին՝ 1956-1991թթ., Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության արդյունավետ աշխատանքի շնորհիվ ապահովվում են կարևորագույն և սկզբունքային հարցերի կոլեկտիվ քննարկումն ու լուծումը: Վարչության նիստերում քննության են առնվում Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության բոլոր ոլորտները՝ համագումարների, պլենումների, փառատոների, սիմպոզիումների, գիտա-

---

[131] *Նույն տեղում, էջ 50:*
[132] *Նույն տեղում:*
[133] *Նույն տեղում, էջ 49:*
[134] *Տե՛ս Հայաստանի սովետական կոմպոզիտորների 4-րդ համագումարը, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 50:*

կան կոնֆերանսների կազմակերպում, երաժշտության օրեր, Անդրկովկասի կոմպոզիտորների ավանդական հանդիպումներ Խորհրդային բանակի մարտիկների հետ, հանրապետական մանկապատանեկան երաժշտական շաբաթներ, մրցույթներ, հեղինակային և հոբելյանական երեկոներ, փոխանակային համերգներ, սեմինարներ, ստուգատեսներ: Հաստատվում են հանրապետության կյանքում նշանակալի իրադարձությունների հետ կապված միջոցառումների, ինչպես նաև Կոմպոզիտորների տան և պրոպագանդայի բյուրոյի[135] ու հանձնաժողովի[136] աշխատանքների ծրագրերը, առաջադրվում են միութենական և հանրապետական նշանակության մրցանակների թեկնածուներ, քննարկվում տեղի ունեցած միջոցառումների արդյունքները[137]:

Ակտիվ են գործում ստեղծագործական սեկցիաները (օպերային-սիմֆոնիկ և կամերային երաժշտության[138], երիտասարդական[139], երաժշտագիտական[140], էստրադային և ջազային երաժշտության[141] են) ու հանձնաժողովները (մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության[142], ժողովրդական ստեղծագործության[143], արտասահմանյան[144], ռազմաշեֆական[145] են): Սեկ-

---

[135] *Պրոպագանդայի բյուրոյի հիման վրա 1985թ. ստեղծվում է երաժշտական լրատվության և պրոպագանդայի կենտրոնը, որը ղեկավարել են Կ.Պետրոսյանը (1985-1989), Վ.Բաբայանը (1989-1990) և Վ.Կոտոյանը (1990-1991):*

[136] *Պրոպագանդայի հանձնաժողովը կազմակերպվել է 1985թ.՝ Ավետ Տերտերյանի նախագահությամբ: Հետագայում ղեկավարել են Կոնստանտին Պետրոսյանը (1986-1990) և Վ.Կոտոյանը (1990):*

[137] *Տե՛ս Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 5-6:*

[138] *Օպերային-սիմֆոնիկ և կամերային երաժշտության սեկցիան ղեկավարել են Ալեքսանդր Աճեմյանը (1975-1980), Լևոն Զաուչյանը (1980-1985), Երվանդ Երկանյանը (1985-1988) և Վահրամ Բաբայանը (1988-1991):*

[139] *Երիտասարդական սեկցիան ղեկավարել են Գրիգոր Եղիազարյանը (1976-1979), 1986-ից՝ Հայկ Մանվելյանը: 1983-ին Էմին Արիստակեսյանը ղեկավարել է Ստեղծագործ երիտասարդության հետ աշխատանքի սեկցիան:*

[140] *Երաժշտագիտական սեկցիան ղեկավարել են Կարինե Խուդաբաչյանը (1976-1982) և Ժաննա Զուրաբյանը (1982-1991):*

[141] *Էստրադային և ջազային երաժշտության սեկցիան ղեկավարել է Արամ Սաթյանը:*

[142] *Մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության հանձնաժողովը ղեկավարել են Ա.Օհանյանը (1975-1977), Գ.Արմենյանը (1977-1980), Էմմա Միհրանյանը (1980-ից):*

[143] *Ժողովրդական երաժշտական ստեղծագործության հանձնաժողովի նախագահն էր Մարգարիտ Բրուտյանը:*

[144] *Արտասահմանյան հանձնաժողովը 1979-ից ղեկավարել է Ա.Խուդոյանը:*

[145] *Ռազմաշեֆական հանձնաժողովի նախագահն էր Արամ Սաթունցը:*

ցիաները վեր են ածվում կարևոր կենտրոնների, որոնցում ընթանում էին Միության ստեղծագործական որոշակի աշխատանքները, նոր ստեղծագործությունների ունկնդրում, իսկ քննարկման ընթացքում դրանց մասին ձևավորվում էր պրոֆեսիոնալ կարծիք:

1970-ականների կեսերից հասունանում է Հայաստանի կոմպոզիտորների միության տեղեկատվական "Вестник"-ի հրատարակման գաղափարը: 1975-1991թթ. տարեկան երկու անգամ կազմված լրատվական "Вестник" տեղեկագիրն արձանագրում է Ստեղծագործական միության կարևոր իրադարձություններն ու փաստերը, լուսաբանում Միության, նրա վարչության, սեկցիաների, հանձնաժողովների, երաժշտական լրատվության կենտրոնի և կոմպոզիտորների տան[146] ստեղծագործական և կազմակերպական գործունեությունը:

Շուտով "Вестник"-ը դառնում է Միության կյանքի եթե ոչ բոլոր, ապա գոնե առավել նշանակալի կողմերն արտացոլող ինքնատիպ հայելի: Փաստորեն այսօր Հայաստանի կոմպոզիտորների միության արխիվների ընդհանուր առմամբ անմխիթար վիճակի պայմաններում "Вестник"-ների արժեքն ավելի է բարձրանում: Նրա էջերը ոչ միայն ճշգրիտ տեղեկություններ են պահպանում կատարված աշխատանքի վերաբերյալ, այլև հնարավորություն են ընձեռում հետևելու այն ժամանակների երաժշտական կյանքի հիմնական միտումներին, որոնք հստակ ընթերցվում են տողամիջում:

Է.Միրզոյանի ղեկավարության տարիներին տեղի են ունենում տարբեր, բայց գործնականում սերտորեն փոխկապակցված երկու գործընթացներ: Մի կողմից՝ Հայաստանի կոմպոզիտորների միությունը հաջողությամբ ինտեգրվում է համամիութենական կոմպոզիտորական կազմակերպության համակարգում (կառուցվածքային, կազմակերպական, ստեղծագործական), իսկ մյուս կողմից՝ առանձնանում իր ստեղծագործական ինքնատիպությամբ, ազգային ուրույն դիմագծով:

Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության մեջ կարևորվում է երկու հիմնական ոլորտ՝ Միության անդամների կոլեկտիվ գործունեությունը և կոմպոզիտորների ու երաժշտագետների անհատական աշխատանքը:

Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեությունը ծավալվում է մի քանի կարևոր ուղղություններով:

---

[146] *Երկար տարիներ Կոմպոզիտորների տան դիրեկտորն էր Մարտին Վարդազարյանը:*

Ա. Հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդումը Հայաստանում

Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած վեց համագումարները[147], բազմաթիվ պլենումները, փառատոները և մի շարք այլ միջոցառումներ մեծապես նպաստում են Հանրապետության երաժշտական կյանքի զարգացմանը և ժամանակակից հայ երաժշտության պրոպագանդմանը:

1957թ. դեկտեմբերի 15-22-ը տեղի է ունենում Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության հոբելյանական ստեղծագործական պլենումը՝ նվիրված Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 40-ամյակին[148], որը հանրագումարի է բերում Սովետական Հայաստանի կոմպոզիտորների ձեռք բերած նվաճումները, ինչպես նաև բացահայտում ու քննադատության ենթարկում նրանց ստեղծագործություններում և առհասարակ Հանրապետության երաժշտական կյանքում առկա թերությունները:

Պլենումին ընդառաջ տպագրվում է Է.Միրզոյանի «Հայաստանի կոմպոզիտորները մեծ տոնին» հոդվածը[149]:

Պլենումը ցույց տվեց, որ հայ երաժշտական ընտանիք վերջերս մուտք է գործել տաղանդավոր կոմպոզիտորների մի ստվար խումբ, որն իր հետ բերել է «տրադիցիաների ավելի խիզախ մեկնաբանություն, նորարարական հետաքրքիր դրսևորումներ»[150]:

Պլենումի մասնակիցների համար տրվում է վեց համերգ, որոնց ծրագրերը բացառապես կազմված էին սովետահայ կոմպոզիտորների նոր ստեղծագործություններից, իսկ Ա.Սպենդիարյանի

---

[147] Հինգերորդ (1962), Վեցերորդ (1968), Յոթերորդ (1973), Ութերորդ (25-31 հոկտեմբերի, 1979), Իններորդ (11-18 դեկտեմբերի, 1984), Տասներորդ (11-12 ապրիլի, 1991):

[148] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 295-296: Հայաստանի կոմպոզիտորների հոբելյանական պլենումը, «Սովետական Հայաստան», 17 դեկտեմբերի, 1957, N 294: Հայաստանի կոմպոզիտորների միության հոբելյանական պլենումը, «Սովետական Հայաստան», 26 դեկտեմբերի, 1957, N 302: Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության հոբելյանական պլենումը, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 3-8: К юбилейному пленуму Союза советских композиторов Армении (беседа с председателем правления Союза композиторов Армении Э.М.Мирзояном), "Коммунист", 13 декабря, 1957, N 291. На юбилейном пленуме Союза композиторов Армении, "Коммунист", 21 декабря, 1957, N 298. Юбилейный пленум Союза композиторов Армении, "Коммунист", 25 декабря, 1957, N 301:

[149] Տե՛ս **Միրզոյան Է.,** Հայաստանի կոմպոզիտորները մեծ տոնին, «Սովետական արվեստ», 1957, N 9, էջ 22-26:

[150] Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության հոբելյանական պլենումը, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 4:

անվան օպերայի և բալետի թատրոնում պլենումի մասնակիցները դեկտեմբերի 15-ին դիտում են Անդրեյ Բաբաևի «Արծվաբերդ» (դիրիժոր՝ Յուրի Դավթյան, երաժշտական ղեկավար՝ Մ.Թավրիզյան), դեկտեմբերի 19-ին՝ Վարդան Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» (դիրիժոր՝ Յու.Դավթյան) օպերաները, դեկտեմբերի 20-ին՝ Էդգար Հովհաննիսյանի «Մարմար» (դիրիժոր՝ Ռ.Ստեփանյան) և դեկտեմբերի 18-ին՝ Էդուարդ Խաչատրյանի «Սոնա» (դիրիժոր՝ Ռ.Ստեփանյան) բալետները, որոնք ընդունվեցին ջերմորեն:

Նորաստեղծ սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երկերին էին նվիրված Պլենումի համերգներից երկուսը:

Սիմֆոնիկ ստեղծագործություններից առավել բարձր գնահատականի են արժանանում Ալեքսանդր Հարությունյանի[151] և Ջիվան Տեր-Թադևոսյանի[152] Սիմֆոնիաները, որոնք իրենց վառ ինքնատիպությամբ շարունակում էին հայկական սիմֆոնիզմի լավագույն ավանդույթները և նոր ճանապարհներ հարթում սիմֆոնիկ երաժշտության հետագա զարգացման համար: Արժևորելով նոր սիմֆոնիաները՝ ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, կոմպոզիտոր Սերգեյ Ակսյուկը դրանք համարեց միութենական երևույթ և նկատեց, որ «Վերջին տարիների նոր սիմֆոնիաներից և ոչ մեկը այնքան ջերմություն, մարդկային զգացմունքների խորություն, ժամանակակից թեմայի այդպիսի լայն ընդգրկում չունի, որքան Հարությունյանի Սիմֆոնիան: Այդ իմաստով նա տեղ ունի Պրոկոֆևի 7-րդ և Մյասկովսկու 27-րդ սիմֆոնիաների կողքին»[153]:

Բարձր գնահատականի են արժանանում Ղազարոս Սարյանի՝ ազգային երաժշտական երանգով տոգորված «Հերոսական նախերգանքը», կոնցերտային ժանրի միակ նմուշը՝ Էդուարդ Բաղդասարյանի Ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար, վոկալ-սիմֆոնիկ ժանրը ներկայացնող՝ Լենինի հիշատակին նվիրված Անուշավան Տեր-Ղևոնդյանի Բալլադը, որի հիմքում Եղիշե Չարենցի «Մահվան քայլերգն» է, Կարո Զաքարյանի «Ժողովուրդների բարեկամության արևի տակ» ձոներգը տենորի, խառը երգչախմբի և նվագախմբի համար և Աշոտ Սաթյանի «Լեռների երգեր» վոկալ-սիմֆոնիկ սյուիտը՝ գրված մեներգիչների, խառը երգչախմբի և սիմ-

---

[151] *Տե՛ս* ***Կոպտև Սերգեյ****, Ալեքսանդր Հարությունյանի Սիմֆոնիան, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 15-18:*

[152] *Տե՛ս* ***Բերկո-Քաթանյան Մարինա****, Ջիվան Տեր-Թադևոսյանի Սիմֆոնիան, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 18-21:*

[153] *Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության հոբելյանական պլենումը, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 4:*

ֆոնիկ նվագախմբի համար[154]*:*

Դեկտեմբերի 22-ին՝ Պլենումում ցուցադրված ստեղծագործությունների քննարկման ժամանակ, «Հայաստանի կոմպոզիտորները Մեծ հոկտեմբերի 40-ամյակին» զեկուցումով հանդես է գալիս Միության վարչության նախագահ Էդվարդ Միրզոյանը, իսկ մտքերի փոխանակությանը մասնակցում են նաև Մոսկվայից, Լենինգրադից ու եղբայրական հանրապետություններից ժամանած հյուրերը[155]*:*

Պլենումի համերգներն ու ներկայացումները «...անկերկբա կերպով ցույց տվեցին հայ կոմպոզիտորների գաղափարական-գեղարվեստական աճը, հասունացող պրոֆեսիոնալ վարպետությունը: Եթե մինչև վերջերս էլ երաժշտական խոշոր ձևերը ետ էին մնում մեր երաժշտության ընդհանուր առաջընթացից և համարվում էին հայ կոմպոզիտորների ամենից նեղ տեղը, ապա այժմ, երբ հրապարակի վրա են երկու նոր բալետ, երկու նոր օպերա, երկու նոր սիմֆոնիա, և երբ կոմպոզիտորների մի մեծ խումբ աշխատում է նորանոր սիմֆոնիաների, օպերաների և բալետների վրա, կարելի է ասել, որ դրությունն արմատապես փոխվել է»[156]*:*

Հետագայում առանձին պլենումներ են նվիրվում սիմֆոնիկ երաժշտությանը (4-րդ պլենում, 5-10 ապրիլի, 1976, 18-23 ապրիլի, 1984 ևն), կամերային և խմբերգային երաժշտությանը (18-22 մայիսի, 1982 ևն), մասսայական ժանրերին (5-րդ պլենում, 12-15 հոկտեմբերի, 1977, 17-21 դեկտեմբերի, 1985 ևն), ժողովրդական ստեղծագործությանը (25-28 նոյեմբերի, 1987 ևն), մանկական երաժշտությանը (19-22 ապրիլի, 1988 ևն) ևն:

Այսպես, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության 4-րդ պլենումը՝ նվիրված սիմֆոնիկ երաժշտությանը, դարձավ հանրապետության երաժշտական կյանքի կարևոր իրադարձություն: Պլենումին մասնակցում էին հանրապետության առաջատար կոլեկտիվները՝ Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժորներ՝ Դ.Խանջյան, Է.Խաչատրյան), Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Ռաֆայել Մանգասարյան), Օպերայի և բալետի թատրոնի նվագախումբը (դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան), Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը (դիրիժոր՝ Հովհաննես Զեքիջյան) և մենակա-

---

[154] Տե՛ս **Տերյան Միքայել**, Սիմֆոնիկ նոր երկեր, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 9-14:

[155] Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության հոբելյանական պլենումը, «Սովետական արվեստ», 1958, N 2, էջ 3:

[156] Նույն տեղում:

տարներ Ս.Նավասարդյանը, Ս.Հախնազարյանը, Ֆ.Սիմոնյանը, Յու.Բալյանը, Օ.Գաբայանը և այլք: Պլենումի հինգ համերգների ընթացքում հնչում են Բ.Սակիլարիի Երկրորդ սիմֆոնիան, Հ.Զեքիջյանի վոկալ-սիմֆոնիկ պոեմը[157], Գ.Զթչյանի Ջութակի կոնցերտը, Գ.Եղիազարյանի երրորդ սյուիտը «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետից, Ս.Հովհաննիսյանի Սիմֆոնիետան, Ջ.Ասատրյանի «Երկու մանրանվագները սիմֆոնիկ նվագախմբի համար», Վ.Գրիգորյանի «Կանտատ-էպիտաֆիան», Ա.Սաթյանի Թավջութակի կոնցերտը, Ռ.Սարգսյանի Կանտատը, Գ.Հախինյանի Երկրորդ սիմֆոնիան, Ա.Աճեմյանի Կոնցերտ-ֆանտազիան չեփորի և նվագախմբի համար, Գ.Հովունցի «Կոնցերտային ինվենցիաները» դաշնամուրի և նվագախմբի համար, Է.Արիստակեսյանի Երկրորդ սիմֆոնիան, Լ.Աստվածատրյանի Սիմֆոնիան, Ա.Հարությունյանի Պոեմը թավջութակի և նվագախմբի համար, Տ.Մանսուրյանի «Երեք նաիրյան երգերը» Վ.Տերյանի խոսքերով, Ա.Տերտերյանի Երրորդ սիմֆոնիան են:

Պլենումը հանրագումարի բերեց սիմֆոնիկ երաժշտության ասպարեզում հայ կոմպոզիտորների նշանակալի նվաճումները և ցուցադրեց այդ ժանրի հետագա զարգացման նոր որակական հաջողությունները:

Այդ շրջանում Հայաստանի կոմպոզիտորների միությունը սերտորեն համագործակցում է հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվների և մենակատարների հետ: Օպերային թատրոնի հետ համագործակցության շնորհիվ Միության հերթական համագումարների և պլենումների ընթացքում հնարավոր է դառնում ներկայացնել 2-3, երբեմն 4 պրեմիերա: Իսկ Դավիթ Խանջյանը հանդես է գալիս իր սիմֆոնիկ համերգի ընթացքում հայ երաժշտության գոնե մեկ ստեղծագործության կատարման նախաձեռնությամբ:

Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության ընագավառներից էր Միության անդամների մասնակցությունը խորհրդային զորամասերում տարվող շեֆական աշխատանքին, բանակի մարտիկների և սահմանապահների հետ Անդրկովկասի կոմպոզիտորների ավանդական հանդիպումներին, որոնք մշտապես անց էին կացվում փետրվարի վերջին, հաջորդաբար Թբիլիսիում, Բաքվում և Երևանում:

---

[157] Հովհաննես Զեքիջյանը գրել է երկու վոկալ-սիմֆոնիկ պոեմ՝ «Ազատության զոդանջներ» կամ «Ջոն Արամ Խաչատրյանին»՝ Սիլվա Կապուտիկյանի խոսքերով (1963) և «Գարնանային անուրջներ»՝ Վահան Տերյանի խոսքերով (1975): Խոսքն, ամենայն հավանականությամբ, «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմի մասին է:

Այս բնագավառում հայ կոմպոզիտորների ծառայություններն արժանանում են բարձր գնահատականի. Ալ.Հարությունյանին շնորհվում է Ալեքսանդրովի անվան ոսկե, իսկ Ա.Սաթունցին՝ արծաթե մեդալներ:

Կարևորվում է մանուկների համար երաժշտությունը:

Դեռևս 1955 թվականին «Սովետական արվեստում» տպագրված իր «Մեր երաժշտական արվեստի հարցերից» հոդվածում Էդգար Հովհաննիսյանն առաջ էր քաշել մանկական երաժշտության կարևորության հարցը: «Մանկական երգը,- գրում է կոմպոզիտորը,- այն առաջին երաժշտական ստեղծագործությունն է, որին ծանոթանում է ապագա երաժիշտը կամ մեր ապագա ունկնդիրը, և որից սկսվում են նրա երաժշտական դաստիարակությունը, գեղարվեստական ճաշակի ձևավորումը: Այստեղից էլ հետևում է այն զգույշ և պատասխանատու վերաբերմունքը, որ մեր կոմպոզիտորները և գեղարվեստական ու կրթական հաստատությունները պետք է ցուցաբերեն դեպի մանկական երգը, ձգտելով սկզբից իսկ մանուկներին տալ հետաքրքիր, գեղեցիկ, բարձր ճաշակով գրված երգեր: Դրա հնարավորությունները մեզ մոտ կան, մնում է միայն հանդես բերել ցանկություն և նախաձեռնություն»[158]*:*

Ավանդական են դառնում մանկապատանեկան երաժշտության շաբաթները, որոնց մասնակցում են Հանրապետության լավագույն կատարողները. հրավիրվում են նաև ճանաչված կոլեկտիվներ մյուս հանրապետություններից: Այդ համերգները կազմակերպվում են գարնանային արձակուրդների օրերին՝ մարտին, և վերածվում իսկական տոնախմբության թե՛ Երևանի և թե՛ հանրապետության այլ քաղաքների և շրջկենտրոնների աշակերտության համար: Աճում է մանկական երաժշտության ժանրում ստեղծագործող կոմպոզիտորների թիվը: Նրանց շարքերը համալրվում են երիտասարդ հեղինակներով: «Ռ.Ամիրխանյանի, Է.Արիստակեսյանի, Ա.Լուսինյանի, Վ.Կոտոյանի, Է.Միհրանյանի, Ս.Նաղդյանի, Գ.Զեբոտարյանի, Գ.Զթչյանի, Ռ.Պետրոսյանի, Ա.Օհանյանի կողքին ակտիվորեն գործում են Ն.Ասլանյանը, Ս.Բաբաթորոսյանը, Վ.Բաբայանը, Ա.Իկիլիկյանը, Շ.Իսկանդարյանը, Ս.Լուսիկյանը, Ռ.Ղազարյանը, Խ.Մարտիրոսյանը, Ա.Պալյանը, Լ.Զաուշյանը, Է.Սադոյանը»[159]*:*

Մանկապատանեկան երաժշտության հանրապետական շաբաթների համերգներին, պրոֆեսիոնալ կատարողական կոլեկտիվ-

---

[158] ***Հովհաննիսյան Է.,*** *Մեր երաժշտական արվեստի հարցերից, «Սովետական արվեստ», 1955, N 4, էջ 11:*

[159] *Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 24:*

ներից ու մենակատարներից բացի, մասնակցում են նաև երաժշտական դպրոցների սաները, մանկական գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվները և Շաբաթների հյուրերը՝ ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից:

Կազմակերպվում են մանկական երգերի մրցանակաբաշխություններ: Այսպես, 1958թ. նոյեմբերի 21-ին մանկական երգերի մրցանակաբաշխությանը ներկայացված 74 ստեղծագործություններից երկրորդ կարգի մրցանակին արժանանում է կոմպոզիտոր Վ.Ումր-Շատը «Ծաղկաձոր» երգի համար, երրորդ կարգի մրցանակին՝ կոմպոզիտորներ Սոֆյա Սամվելյանը՝ «Աշուն» մանկական երգի և Յու.Գևորգյանը՝ «Խարույկի երգ»-ի համար[160]:

Ինչ խոսք, Միության առաջընթացի բոլոր փուլերում մեծ է եղել Արամ Խաչատրյանի դերը, անգնահատելի՝ Միությանը ցուցաբերվող նրա համակողմանի օգնությունն ու աջակցությունը: Այդ ընթացքում Միությունում իրականացված, մեծ հնչեղություն ձեռք բերած ու հետագայում բարի ավանդույթ դարձած մի շարք գործեր ու նախաձեռնություններ ծնունդ են առել նրա մատուցմամբ: Մշտապես մոտ կանգնած լինելով Միությանը և քաջատեղյակ նրա ստեղծագործական կյանքին՝ նա իր ջերմ ու հոգատար վերաբերմունքով էապես նպաստում էր Միությունում ստեղծագործական առողջ մթնոլորտի հաստատմանը, հայ կոմպոզիտորների մասնագիտական ներուժի դրսևորմանն ու զարգացմանը, երիտասարդ տաղանդների բացահայտմանը, օժտված ու հեռանկարային երիտասարդների մասնագիտական աճին: Չափազանցություն չի լինի ասել, որ սովետահայ երաժշտության պատրիարքի ազդեցությունը կրել և նրա քաջալերող ու հովանավորող հզոր ձեռքը զգացել են այդ տասնամյակներում ստեղծագործական ուղի ոտք դրած բոլոր հայ կոմպոզիտորները: 1960թ. Ա.Խաչատրյանն այցելում է Հայաստան: Հունիսի 1-ին նա Հայաստանի կոմպոզիտորների միության տանը հանդիպում է երիտասարդ ստեղծագործողների հետ[161], հունիսի 2-ին՝ Երևանի գիշերօթիկ երաժշտական դպրոցի սաների հետ[162], հունիսի 3-ին՝ օդային տրանսպորտի աշխատողների հետ

---

[160] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 334: Մանկական երգերի մրցանակաբաշխության արդյունքները, «Սովետական Հայաստան», 21 նոյեմբերի, 1958, N 270:*

[161] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 395: Встреча с любимым композитором, "Коммунист", 3 июня, 1960, N 131:*

[162] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 395: Արամ Խաչատրյանը փոքրիկների մոտ, «Ավանգարդ», 4 հու-*

Երևանի օդանավակայանի ակումբում[163]: Հունիսի 4-ին Հոկտեմբերյանում տեղի է ունենում կոմպոզիտորի հեղինակային համերգը[164]. նույն օրը նա ընտրվում է իտալական «Սանտա Չեչիլիա» երաժշտական ազգային ակադեմիայի պատվավոր անդամ[165]:

Հայաստանում 1984թ. լայնորեն նշվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը: Կես տարվա ընթացքում Հանրապետության ողջ տարածքում տեղի են ունենում նշանակալի իրադարձությանը նվիրված համերգներ, հանդիսավոր նիստեր: Հանդիսությունների եզրափակիչ ակորդը դարձավ երաժշտական արվեստի տոնը, որը կայացավ Երևանում 1984թ. հունվարի 23-25-ը:

Հունվարի 23-ին ՀՍՍՀ ԳԱ դահլիճում գումարվում է գիտական նստաշրջան, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Նստաշրջանը բացում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռուբեն Զարյանը, զեկուցումներով հանդես են գալիս Մ.Հարությունյանը՝ «Ա.Խաչատրյանն իր նամակների լույսի ներքո», Գ.Տիգրանովը՝ «Ա.Խաչատրյանը և արդիականությունը», Ն.Թահմիզյանը՝ «Ա.Խաչատրյանի երաժշտական աշխարհի ազգային տարրերը», Գ.Զեբոտարյանը՝ «Ա.Խաչատրյանը և ժամանակակից պոլիֆոնիայի պրոբլեմները», Ա.Գրիգորյանը՝ «Ա.Խաչատրյանի կոմպոզիտորական դպրոցը», Մ.Ռուխկյանը՝ «Ա.Խաչատրյանի մանկավարժական սկզբունքները», Ռ.Խարաջանյանը՝ «Արամ Խաչատրյանը և լատվիական երաժշտությունը» և Վ.Յուզեֆովիչը՝ «Ա.Խաչատրյանը և սովետական կոմպոզիտորական ստեղծագործությունը»[166]:

Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում հունվարի 24-ին տեղի ունեցած հանդիսավոր նիստի բացման խոսքում ՀԿԿ Կենտկոմի առաջին քար-

---

նիսի, 1960, N 67: **Աղամիրյան Հ.,** Արամ Խաչատրյանը Հայաստանում, «Սովետական Հայաստան», 5 հունիսի, 1960, N 131:

[163] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 395: **Աղամիրյան Հ.,** Արամ Խաչատրյանը Հայաստանում, «Սովետական Հայաստան», 5 հունիսի, 1960, N 131:

[164] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 395: **Աղամիրյան Հ.,** Արամ Խաչատրյանը Հայաստանում, «Սովետական Հայաստան», 5 հունիսի, 1960, N 131:

[165] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 395: А.Хачатурян – почетный член Итальянской академии "Санта Чечилия", "Коммунист", 7 июня, 1960, N 134:

[166] "Вестник", 1984, N 1, январь-июнь, стр. 6.

տուղար Կարեն Դեմիրճյանը նշում է. «Արամ Խաչատրյանի ողջ կյանքը ստեղծագործական սխրանք է, հայրենասեր արվեստագետի սխրանք, ով իր ողջ հզոր տաղանդը նվիրեց հարազատ ժողովրդի, նրա հերոսական սխրանքների, մեր մեծ սոցիալիստական Հայրենիքի փառաբանմանը»[167]:

Զեկուցումով հանդես է գալիս Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանը: «Արամ Խաչատրյանը սովետական երկրի մեծ քաղաքացի էր, սոցիալիստական իրականության մեջ էր նա տեսնում մարդկության ապագան: Նրա ողջ բազմակողմանի գործունեությունը ուղղված էր նրան, որպեսզի մոտեցնի նրա լուսավոր ապագան: Եվ այդ մեծ պատգամը նա փոխանցեց ապագա սերունդներին առաջին հերթին իր անմահ ստեղծագործությունների միջոցով, որոնք կապրեն դարեդար»[168]: Այնուհետև ելույթ է ունենում Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տ.Ն.Խրենենիկովը:

Նույն օրը Երևանում բացվում է Ա.Խաչատրյանի տուն-թանգարանը: Թանգարանի ստեղծումը հարգանքի տուրք էր ականավոր կոմպոզիտորի հիշատակին: *"Этот музей, -նշում է Տ.Ն.Խրենենիկովը,- создан с такой тщательностью и любовью, что невозможно без слез на глазах ходить по его залам, знакомиться с его экспонатами. Разрешите от музыкальной общественности нашей страны выразить горячую благодарность партийному и советскому руководству республики за создание такого музея. Сюда с благоговением будут ходить не только музыканты, но и несомненно все, кому дорого и доставляет радость творчество выдающегося композитора – Арама Хачатуряна"*[169]:

1984թ. հունվարի 28-ին շահագործման է հանձնվում ՀԿՄ «Դիլիջան» ստեղծագործական տան՝ Բեթհովենի անվան համերգային դահլիճը, որը նպատակ ուներ նպաստելու հանրապետության երաժշտական կյանքի հետագա վերելքին: Բացման օրն այստեղ են հավաքվում հանրապետության կուսակցական և սովետական ղեկավարության ներկայացուցիչները: Արարողությունը բացում է Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Է.Միրզոյանը, այնուհետև ելույթ է ունենում Տ.Խրենենիկովը: Տոնական համերգն սկսվում է Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայի ֆինա-

---

[167] Նույն տեղում, էջ 4:
[168] Նույն տեղում:
[169] Նույն տեղում, էջ 5-6:

լով՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի նվագախմբի, մենակատարներ Գ.Գասպարյանի, Օ.Գաբայանի, Վ.Հարությունյանի կատարմամբ, Հովհաննես Զեքիջյանի ղեկավարությամբ: Այնուհետև հնչում են Դ.Շոստակովիչի Հինգերորդ սիմֆոնիան, Տ.Խրենիկովի Դաշնամուրային Երրորդ կոնցերտը՝ հեղինակի մեկնաբանությամբ, և հատվածներ Ա.Խաչատրյանի «Սպարտակ» բալետից. սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում է Վ.Գերգիևը[170]:

Այդ օրերին՝ 1984-ին, Հայաստանի կոմպոզիտորների միությունը հիմնում է Արամ Խաչատրյանի անվան մրցանակ, որը պիտի շնորհվեր երկու տարին մեկ անգամ լավագույն ստեղծագործության համար: Արամ Խաչատրյանի անվան մրցանակի առաջին դափնեկիրը դարձավ Էդգար Հովհաննիսյանը: 1986-ին մրցանակը շնորհվում է Ա.Հարությունյանին՝ Ֆլեյտայի և լարային նվագախմբի կոնցերտի համար, իսկ 1988-ին՝ Է.Միրզոյանին՝ Ա.Խաչատրյանի հիշատակին նվիրված «Պոեմ-էպիտաֆիայի» համար:

Միությունը սերտ կապեր է պահպանում Սփյուռքի երաժշտական կազմակերպությունների և երաժշտական գործիչների հետ: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Հայաստանի կոմպոզիտորների միության համատեղ ջանքերով «...իրագործվում են մեր կոմպոզիտորների հանդիպումները, համերգները արտասահմանում, ինչպես նաև սփյուռքահայ երաժիշտների ելույթները մեր հանրապետությունում»[171]:

Կյանքի հետ արվեստի կապի ամրապնդման կարևոր ձևերից մեկը կոմպոզիտորների անմիջական շփումն է աշխատավոր ժողովրդի հետ: Հայաստանի կոմպոզիտորների միությունը շարունակում և ավելի խորացնում է այդ ավանդույթը, որը սկիզբ էր առել դեռևս 1948-ից, և ընդլայնում աշխարհագրությունը: Այսպես, 1957թ. մարտի 1-ին տեղի է ունենում Հայաստանի քաղաքային և գյուղական շինարարության մինիստրության մի շարք հիմնարկների աշխատողների հանդիպումը կոմպոզիտորներ Կ.Զաքարյանի, Ալ.Հարությունյանի, Է.Միրզոյանի և Գ.Ադամյանի հետ[172]: Սովետահայ կոմպոզիտորների հետ 1958թ. հունիսի 26-ին Երևանի

---

[170] *Նույն տեղում, էջ 8:*

[171] ***Միրզոյան Էդ.,*** *Մեծ երաժշտության ժամանակը, «Սովետական արվեստ», 1985, N 3, էջ 13:*

[172] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 272: Կարճ հաղորդումներ, «Սովետական Հայաստան», 2 մարտի, 1957, N 52:*

շինանյութերի մինիստրության երկաթբետոնե կառուցվածքների N 2 գործարանի կոլեկտիվի հանդիպման ժամանակ բացման խոսքով հանդես է գալիս Է.Միրզոյանը, որին հաջորդում է Խ.Թոռջյանի «Սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործությունների մասին» թեմայով զեկուցումը: Իսկ համերգային բաժնում իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս կոմպոզիտորներ Ա.Բաբաջանյանը, Է.Միրզոյանը, Աիդա Ավետիսյանը, Սոֆյա Սամվելյանը, Գեղունի Զթչյանը, Գ.Ադամյանը, երգչուհիներ Ռոզա Դանիելյանը և Անժելա Հարությունյանը՝ Զ.Զաքարյանի դաշնամուրային նվագակցությամբ[173]:

Սովետահայ երաժշտության նվաճումներին ծանոթացնելու նպատակով 1960թ. ապրիլի 25-ին Նոյեմբերյանի, Սպիտակի, Ալավերդու, Ստեփանավանի շրջաններ են մեկնում կոմպոզիտորներ Է.Միրզոյանը, Կ.Զաքարյանը, Հ.Ստեփանյանը, Է.Հովհաննիսյանը[174]: Նույն օրը տեղի է ունենում կոմպոզիտորներ Գ.Զթչյանի, Գ.Ադամյանի և Գ.Միրզոյանի հանդիպումը «Աթարբեկյանգէս»-ի շինարարների հետ շրջկենտրոնի կուլտուրայի տանը: Սովետահայ երաժշտության նվաճումների մասին էր Խ.Թոռջյանի զեկուցումը: Երգիչներ Ա.Հարությունյանը, Ա.Պերճյանը, Ս.Գալստյանը և Ռ.Դանիելյանը, Օ.Վագենհեյմի նվագակցությամբ, կատարում են Ա.Խաչատրյանի, Ա.Դոլուխանյանի, Ս.Զրբաշյանի, Է.Միրզոյանի, Ա.Բաբաջանյանի և Ա.Այվազյանի ստեղծագործությունները[175]:

Ապրիլի 28-ին Երևան են վերադառնում մի խումբ երաժիշտներ, որոնք համերգներով հանդես էին եկել Նոյեմբերյանում, Կողբում, Ալավերդիում, Ախթալայում, Ստեփանավանում, Սպիտակում, Թալինում՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ: Խմբում էին կոմպոզիտորներ Է.Միրզոյանը (ղեկավար), Հ.Ստեփանյանը, Կ.Զաքարյանը, Գ.Եղիազարյանը, Ե.Սարգսյանը, Էդ.Կզարթմյանը, Է.Աբրահամյանը, Է.Բաղդասարյանը, Ս.Զրբաշյանը, Վ.Կոտոյանը, Կ.Օրբելյանը, երաժշտագետ Ա.Թադևոսյանը, երգիչներ Գ.Գալաչյանը, Ռ.Դանիելյանը, Է.Բաղդասարյանը, Ս.Գալստյանը, թավջութակահար Գ.Ադամյանը, ջութակահար

---

[173] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 324:* ***Խուդոյան Ա.,*** *Արտադրության աշխատողները կոմպոզիտորների միությունում, «Երևան», 28 հունիսի, 1958, N 126:*

[174] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 390-391: Արվեստագետները և արտիստները շրջաններում, «Սովետական Հայաստան», 27 ապրիլի, 1960, N 98:*

[175] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 391: Արվեստագետները և արտիստները շրջաններում, «Սովետական Հայաստան», 27 ապրիլի, 1960, N 98:*

Հ.Վարդանյանը, դաշնակահարուհի Մ.Հարությունյանը[176]:

1960թ. նոյեմբերի 16-ին տեղի է ունենում սովետահայ մի խումբ կոմպոզիտորների հանդիպումը Ղափանի լեռնագործների հետ բանվորական ակումբում: Ներածական խոսքով հանդես է գալիս Ալեքսանդր Թադևոսյանը, ապա ելույթ են ունենում երգիչներ Ս.Կուրբանյանը, Ա.Թութունջյանը, Ս.Գալստյանը, Վ.Պերճյանը, ջութակահար Հ.Վարդանյանը[177]...

Կոմպոզիտորները հատուկ երգ են հորինում՝ նվիրված այն շրջանին, որտեղ կայանալու է հանդիպումը: Ալ.Հարությունյանի «Իջևան», Է.Հարությունյանի «Եղեգնաձոր» և Գ.Զթչյանի «Կամո» երգերը մեծ ոգևորությամբ են ընդունվում տեղաբնակների կողմից:

1981թ. Հայաստանի կոմպոզիտորների միությունում ստեղծվում է նկարահանումների ֆոնդ, որտեղ ընդգրկվում են հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների, հեղինակային երեկոների, սիմֆոնիկ երաժշտության պլենումների, համերգների, հայ կոմպոզիտորների ստեղծագործական երեկոների, համամիութենական պլենումների, խորհրդային երաժշտության փառատոների և այլ իրադարձությունների նկարահանմամբ 44 տեսաժապավեններ: Զուգահեռաբար հայկական և համամիութեանական ռադիոյում ստեղծվում են հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ, կամերային-գործիքային, խմբերգային, էստրադային, ժողովրդական գործիքների համար գրված ստեղծագործությունների ֆոնդային ձայնագրություններ:

Բ. Հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդումը արտասահմանում

Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության կարևոր ուղղություններից էր միջազգային կապերի ընդլայնումն ու ամրապնդումը[178]: Բազմաճյուղ կապեր են հաստատվում Մոսկվայի ու միութենական հանրապետությունների և արտասահմանյան երկրների կոմպոզիտորական կազմակերպությունների հետ. կազմակերպվում են փոխադարձ համերգներ, երաժշտության օրեր, հեղինակային համերգ-հանդիպումներ: Խոշոր միջոցառումներից էին

---

[176] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 391: Искусство в массы, "Коммунист", 3 апреля, 1960, N 103:

[177] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 407: Կոմպոզիտորները լեռնագործների մոտ, «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1960, N 270:

[178] 1981-ին ստեղծված ՀԿՄ լրատվական կենտրոնը (ղեկավար՝ Ս.Սարգսյան) մշտական կապեր է հաստատում Մշակութային կապերի հայկական ընկերության, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի, սոցիալիստական երկրների կոմպոզիտորների միությունների, արտասահմանյան հայկական մամուլի և կատարողների հետ:

հայկական երաժշտության օրերը Մոլդավիայում, Ուկրաինայում, Թուրքմենստանում, Ղազախստանում, Հյուսիսային Օսեթիայում, Ղարաբաղում, ինչպես նաև մոլդավական, թուրքմենական, դաղըստանյան երաժշտության օրերի անցկացումը Հայաստանում: Մշտական ու հարաճուն էր կապը Վրաստանի և Ադրբեջանի երաժիշտների հետ:

1958թ. մայիսի 11-24-ը Բաքվում բացվում է Անդրկովկասյան հանրապետությունների առաջին երաժշտական գարուն փառատոնը, որը շարունակվում է Երևանում և ավարտվում Թբիլիսիում[179]: Մայիսի 16-19-ը Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտական գարուն փառատոնի բացումն է, որտեղ բացման խոսքով հանդես է գալիս Ա.Շահինյանը, ապա ելույթ են ունենում Օ.Տակտակիշվիլին և Մ.Զարիևը: Հայաստանի պետսիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետերգեցիկ կապելլայի (ղեկավար՝ Ն.Մնգրյան), մենակատար-երգիչներ Ն.Հովհաննիսյանի, Ա.Պետրոսյանի, Ա.Թուքունջյանի և Ս.Վանիկյանի, ջութակահարուհի Ա.Ցիցիկյանի, փողհար Հ.Մեսիայանի կատարմամբ հնչում են Ջ.Տեր-Թադևոսյանի Առաջին սիմֆոնիան, Ալ.Հարությունյանի Կոնցերտը փողի համար նվագախմբի հետ, Է.Բաղդասարյանի «Ռապսոդիան» ջութակի համար նվագախմբի հետ և Ա.Սաթյանի «Արարատյան հովտի երգեր» վոկալ-սիմֆոնիկ սյուիտը[180]:

Մայիսի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում կայացած կամերային համերգի ընթացքում Կոմիտասի անվան կվարտետի (Ա.Գաբրիելյան, Ռ.Դավիդյան, Հ.Թալալյան, Ս.Ասլամազյան), կոմպոզիտորներ Է.Հովհաննիսյանի և Ա.Բաբաջանյանի, երգչուհի Ա.Թուքունջյանի կատարմամբ հնչում են Ա.Տեր-

---

[179] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 317: Երաժշտություն (Անդրկովկասյան երաժշտական և թատերական գարունը), «Սովետական արվեստ», 1958, N 6, էջ 19-28: «Անդրկովկասյան գարուն» երաժշտական ֆեստիվալ, «Երևան», 14 մայիսի, 1958, N 94: Ավարտվեց «Անդրկովկասյան գարուն» ֆեստիվալի առաջին էտապը, «Երևան», 15 մայիսի, 1958, N 95:*

[180] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 318:* ***Շահինյան Ա.,*** *Անդրկովկասյան երաժշտական գարուն, «Սովետական Հայաստան», 16 մայիսի, 1958, N 114: Անդրկովկասյան երաժշտական գարունը, «Սովետական Հայաստան», 17 մայիսի, 1958, N 115: Смотр творческих достижений, "Коммунист", 16 мая, 1958, N 114. Закавказская музыкальная весна, "Коммунист", 17 мая, 1958, N 115. Первый день, "Коммунист", 18 мая, 1958, N 116.* ***Барсегян С****. Закавказская музыкальная весна закончилась, "Коммунист", 29 мая, 1958, N 125:*

Ղևոնդյանի «Երեք վոկալիզը», Հ.Ստեփանյանի Կվարտետը, Կ.Զաքարյանի երկու երգը, Կ.Օրբելյանի N 3 Կվարտետը, Է.Հովհաննիսյանի Դաշնամուրային կվինտետը, Ա.Բաբաջանյանի «Պոլիֆոնիկ սոնատը» և Է.Միրզոյանի Կվարտետը: Կատարողներին շնորհակալության խոսք է ուղղում երաժշտագետ Ալ.Թադևոսյանը[181]:

Մայիսի 19-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Հայաստանի պետսիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Մ.Մալունցյան) համերգի ընթացքում դաշնակահար Առնո Բաբաջանյանի և ջութակահար Հակոբ Վարդանյանի մասնակցությամբ հնչում են Ա.Հարությունյանի Սիմֆոնիան, Ղ.Սարյանի «Սիմֆոնիկ պատկերները», Է.Միրզոյանի «Ինտրոդուկցիա և անընդհատ շարժումը» ջութակի և նվագախմբի համար և Ա.Բաբաջանյանի «Հերոսական բալլադը» դաշնամուրի համար նվագախմբի հետ[182]:

Մայիսի 24-25-ը Թբիլիսիում տեղի է ունենում Անդրկովկասյան երաժշտական գարուն փառատոնի ընթացքում լսված ստեղծագործությունների քննարկումը. զեկուցումով հանդես է գալիս Օթար Տակտակիշվիլին, իսկ ելույթներով՝ Գ.Տիգրանովը, Ֆ.Ամիրովը, Է.Աբբասովան, Դ.Դանիլովը, Է.Միրզոյանը, Պ.Խաչուան, Ա.Շավերզաշվիլին, Ս.Ակսյուկը, Յու.Կելդիշը, Ա.Կարպովը, Վ.Վինոգրադովը, Կ.Դանկևիչը, Ե.Տիկոցկին, Ա.Դոլժանսկին, Ա.Սոխորը, Վ.Կարպովիչուսը, Ա.Լապկովսկին[183]:

«Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտական գարուն» փառատոները դառնում են շարունակական՝ Հայաստանի կոմպոզիտորների միության կյանքում վերածվելով մեծ իրադարձության:

«Երաժշտական գարունից» ամիսներ անց՝ 1958թ. հոկտեմբերի 11-ին, Մոսկվայի կոմպոզիտորների միությունում տեղի է ունենում Հարո Ստեփանյանի ստեղծագործությունների ցուցադրումը. կատարվում են Երրորդ լարային կվարտետը, չորս պիես ֆլեյտայի և

---

[181] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 319: Երեկ կոմպոզիտորների տանը, «Սովետական Հայաստան», 18 մայիսի, 1958, N 116: Закавказская музыкальная весна, “Коммунист”, 18 мая, 1958, N 116:

[182] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 319: Закончился показ армянской музыки, «Коммунист», 21 мая, 1958, N 118. В последний вечер, там же:

[183] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 320: Երաժշտական գարնան օրերին, «Սովետական արվեստ», 1958, N 6, էջ 26: **Барсегян С.** Закавказская музыкальная весна закончилась, “Коммунист”, 29 мая, 1958, N 125:

դաշնամուրի համար, հինգ ռոմանս, դաշնամուրային պրելյուդներ, Սոնատ թավջութակի և դաշնամուրի համար[184]: Կոմպոզիտորի երկերի կատարմանը հաջորդած մտքերի փոխանակության ժամանակ ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար Սերգեյ Ակսյուկը, բնութագրելով Հարո Ստեփանյանի ստեղծագործությունը, նշում է, որ նա իր ուրույն տեղն ունի հայկական ժամանակակից երաժշտական կուլտուրայի մեջ, գրավում է ունկնդրին թարմ ու ինքնատիպ ձևերով, ժամանակի նրբին զգացողությամբ»[185]:

Մոսկվայում ՍՍՀՄ կոմպոզիտորների միության պլենումի 1958թ. դեկտեմբերի 4-ի համերգի ընթացքում կատարվում է Զիվան Տեր-Թադևոսյանի Սիմֆոնիան[186], իսկ դեկտեմբերի 9-ի համերգին՝ Գեղունի Զթչյանի ռոմանսները[187]: 1960թ. հունվարի 27-ին՝ Մոսկվայում ՍՍՀՄ կոմպոզիտորների միության «Երաժշտությունը և արդիականությունը» թեմայով պլենումի ժամանակ, կատարվում են Է.Հովհաննիսյանի Կվարտետը և Զ.Տեր-Թադևոսյանի Սիմֆոնիան[188]...

Միության անդամներն ակտիվորեն մասնակցում են արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների՝ փառատոների, կոնֆերանսների, հեղինակային համերգների, կոնգրեսների, կոլոկվիումների, մշակույթի օրերի, փոխադարձ հանդիպումների, հյուրախաղերի, մրցույթների ևն: Հայ կոմպոզիտորների գործերը հնչում են աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Ֆինլանդիայում, Լեհաստանում, Կուբայում, Արգենտինայում, Բելգիայում, Հունգարիայում, ԳՖՀ-ում, Անգլիայում, Կոնգոյում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում և այլուր: Նշենք «Հայ երաժշտություն-78» փառատոնը Լոնդոնում (6-13 օգոստոսի, 1978), հայ կոմպոզիտորների կամերային երաժշտության համերգը Վարշավայում (18 դեկտեմբերի, 1978) ևն: Հայ երաժշտագետները զեկուցումներով հանդես են գալիս Մեծ Բրիտանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, ԳԴՀ-ում, Լեհաստանում, Հարավսլավիայում ևն:

---

[184] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 330-331: **Г.Г.** Творческий отчет А.Степаняна, "Советская музыка", 1958, N 12, стр. 138-139:

[185] **Ափոյան Շուշանիկ,** Հարո Ստեփանյանի ստեղծագործական երեկոները, «Սովետական արվեստ», 1959, N 3, էջ 75:

[186] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 336:

[187] Նույն տեղում:

[188] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 382: Создать музыку, достойную нашей эпохи, "Коммунист", 28 января, 1960, N 23:

1976թ. աշնանը՝ սեպտեմբերի 23-30-ը, Հայաստանում կազմակերպվում է «Չեխական ժամանակակից երաժշտության շաբաթը», որի նպատակն էր «Հայաստանի հասարակայնությանը ներկայացնել Չեխիայի, Սլովակիայի, Մորավիայի երաժշտական մշակույթի նորագույն նվաճումները»[189]: Ամիսներ անց՝ Պրագայում, ի պատասխան «Հայաստանում ժամանակակից չեխական երաժշտության շաբաթի», անց են կացվում «Հայ երաժշտության օրեր»: Հայկական պատվիրակության կազմում ընդգրկվում է 17 հոգի, այդ թվում՝ կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանը (ղեկավար), Գրիգոր Եղիազարյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ավետ Տերտերյանը, Գագիկ Հովունցը, Էմին Արիստակեսյանը, Յուրի Ղազարյանը, Լևոն Զաուշյանը, Յուրի Հարությունյանը, դիրիժորներ Դավիթ Խանջյանը, Ռաֆայել Մանգասարյանը, դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, երգչուհի Օլգա Գաբայանը, դուդուկահար Ջիվան Գասպարյանը, ՀԿՄ Երաժշտական ֆոնդի դիրեկտոր Բաբկեն Սոսյանը[190]: Ինչպես նկատել է Էդ.Միրզոյանը. «մենք Պրագա էինք տարել երկու կամերային և մեկ սիմֆոնիկ համերգ: Համերգների հայտագրերը կազմված էին այնպես, որ ներկայացվեցին մեր ավագ, միջին և կրտսեր սերնդի կոմպոզիտորների գործերը, նմուշներն այն ժանրերի, որոնք ներկայումս բնորոշ են հայ կոմպոզիտորական ստեղծագործությանը: Ճիշտն ասած, ընտրություն կատարելը շատ դժվար է: Վերջին տարիներս հայ կոմպոզիտորները, ինչպես կամերային, այնպես էլ սիմֆոնիկ երաժշտություն շատ են գրել և հասկանալի է, ծրագրում հնարավոր չէր ընդգրկել բոլոր ոչ միայն ուշագրավ, այլև նույնիսկ ամենատաղանդավոր ստեղծագործությունները: Մեր միության հոգսն այն էր, որ Պրագայի երաժշտական հասարակությունը կարողանար փոքրիշատե ամբողջական գաղափար կազմել հայ երաժշտության այսօրվա մասին»[191]:

Հընթացս կամերային համերգների չեխ արտիստների կատարմամբ հնչում են Արամ Խաչատրյանի, Էդգար Հովհաննիսյանի, Գրիգոր Հախինյանի, Էմին Արիստակեսյանի, Տիգրան Մանսուրյանի, Յուրի Ղազարյանի, Լևոն Զաուշյանի, Յուրի Հարությունյանի, Ռուբեն Սարգսյանի և Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունները: «Հատկապես դժվար էր, իհարկե, վոկալիստների գործը: Բանն այն է, որ երգչուհիներ Յարմիլա Վրխոտովան Էմին Արիստակեսյանի «Հինգ շարական Սահակ Պարթևից» և Լիբուշե Սալաբո-

---

[189] *Հայ երաժշտության օրեր Պրագայում, «Սովետական արվեստ», 1977, N 7, էջ 13:*
[190] *Տե՛ս նույն տեղում:*
[191] *Նույն տեղում, էջ 15-16:*

վան Յուրի Հարությունյանի «Երեք իրիկնային երգը» երգեցին Հայերեն»[192]:

Օստրավայի սիմֆոնիկ նվագախումբը Ռաֆայել Մանգասարյանի ղեկավարությամբ կատարում է Ալ.Հարությունյանի «Տոնական նախերգանքը», ապա Տիգրան Մանսուրյանի «Երեք նաիրյան երգերը»՝ Օլգա Գաբայանի կատարմամբ, և Ավետ Տերտերյանի Երրորդ սիմֆոնիան: Իսկ երկրորդ բաժնում Դավիթ Խանջյանի ղեկավարությամբ նվագախումբը և Սվետլանա Նավասարդյանը կատարում են Գագիկ Հովունցի «Կոնցերտային ինվենցիաները»: Համերգի ավարտին հնչում է Գրիգոր Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետի երրորդ սյուիտը: «Հիանալի երաժշտությունը, ես չեմ վարանում ասել, անգերազանցելի կատարումը (երգչախմբի պարտիան հանձնարարված էր Պրագայի տղամարդկանց և Պրագայի Ֆիլհարմոնիայի շուրջ 100 հոգիանոց միացյալ երգչախմբին, խմբավարն էր Միրոսլավ Կոշլերը) մեծ հաջողություն ունեցավ: Եվ ընդհանրապես հայ երաժշտության համերգները Պրագայում լավ ընդունվեցին»[193]:

Այցի շրջանակներում հայ երաժիշտներին հյուրընկալում է ՁՍՍՀ կուլտուրայի մինիստր Գլուսակը. նա տեղեկացնում է, որ ստացվել են բազմաթիվ դրական կարծիքներ, դրվատական խոսքեր, և «ինքն էլ բաժանում է Պրագայի երաժշտական հասարակության ոգևորությունը մեր ելույթների առթիվ»[194]:

Աճում է հայ երաժշտության միջազգային ճանաչումը. հայ կոմպոզիտորները մրցանակներ են շահում մի շարք հեղինակավոր մրցույթներում: Ա.Հարությունյանի Շեփորի կոնցերտը ժնևում կայացած շեփորահարների միջազգային մրցույթում 1987 թվականին կատարվում է որպես պարտադիր ստեղծագործություն:

Մյուս կողմից՝ Հայաստանի կոմպոզիտորների միությունը հյուրընկալում է իր արտասահմանցի գործընկերներին Լեհաստանից, Ֆինլանդիայից, ԳՖՀ-ից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Կուբայից, Հարավսլավիայից...

1958թ. մարտին ՍՍՀՄ կոմպոզիտորների միության հրավերով Սովետական Միություն են ժամանում չեխոսլովակյան երաժիշտներ՝ Բռնո քաղաքի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր, դաշնակահար Յան Էրմլը, Բրատիսլավայի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր, ջութակահար Տիբոր Հաշպարեկը և Չեխոսլովակիայի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, կոմ-

---

[192] Նույն տեղում, էջ 16:
[193] Նույն տեղում:
[194] Նույն տեղում:

պոզիտոր Գուստավ Կրիժիվինկը: «Նրանք եղան Մոսկվայում, Լենինգրադում, որից հետո ցանկացան հյուր գալ Սովետական Հայաստան, որպեսզի ավելի մոտիկից ծանոթանան մեր ռեսպուբլիկայի կուլտուրային»[195]: Հյուրերը շրջում են Երևանի և Էջմիածնի տեսարժան վայրերում, հիանում մայրաքաղաքի ճարտարապետական կառույցներով, կանված ունկնդրում Երգի-պարի պետական անսամբլի համերգը: Հայաստանի կոմպոզիտորների միության վարչությունը կազմակերպում է ստեղծագործական հանդիպում չեխոսլովակյան արվեստակիցների հետ: Ծանոթանալով հայ պրոֆեսիոնալ արվեստի նմուշներին Չեխոսլովակիայի կոմպոզիտորների միության քարտուղար, կոմպոզիտոր Գուստավ Կրիժիվինկը խոստովանում է. «Մենք մեր ռեսպուբլիկայում լսել էինք Արամ Խաչատրյանի, Ալ.Հարությունյանի, Ա.Բաբաջանյանի և Գ.Չեբոտարյանի ստեղծագործությունները: Այժմ, այս սքանչելի դահլիճում, մենք լսեցինք ու հիացանք մյուս հայ կոմպոզիտորների գործերով: Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում վարպետորեն է օգտագործված հայ ժողովրդական երգային կոլորիտը. դրանք գրված են ստեղծագործական նոր ու թարմ ձևերով, բարձր պրոֆեսիոնալությամբ, խորապես ազգային են և, որպես այդպիսին, հարստացնում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև մյուս ժողովուրդների երաժշտական կուլտուրան»[196]: Այնուհետև պրոֆեսորներ Յան Էրմլը և Տիբոր Հաշպարեկը կատարում են չեխոսլովակյան դասական և ժամանակակից կոմպոզիտորների երկերը:

1958թ. ապրիլի կեսերին Հայաստանի կոմպոզիտորների միությունը հյուրընկալում է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության երաժիշտներին՝ կոմպոզիտոր Կարլ Էռնստ Օրթվայնին և երաժշտագետ-տեսաբան Վերներ Ռակվիցին: Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում նրանք հանդիպում են հայ կոմպոզիտորների հետ, ունկնդրում հատկապես վերջին շրջանի նրանց սիմֆոնիկ, կամերային և վոկալ ստեղծագործությունները, զրուցում, բանավիճում տեսական հարցերի շուրջ: «Երաժշտագետ-տեսաբան Վերներ Ռակվիցին մեծ գոհունակություն պատճառեցին հայ երաժշտական արվեստի ինքնատիպությունն ու ժամանակակից բարձր մակարդակը: Կոմպոզիտոր Օրթվայնը երեկոյի մասնակիցներին ծանոթացրեց իր մի քանի գողտրիկ ստեղծագործություններին»[197]:

---

[195] **Խուդոյան Ադամ,** *Չեխոսլովակյան երաժիշտները Երևանում, «Սովետական արվեստ», 1958, N 4, էջ 77:*

[196] *Նույն տեղում:*

[197] **Խուդոյան Ադամ,** *Գերմանական երաժիշտները Երևանում, «Սովետական*

Հայ կոմպոզիտորներն ու երաժշտագետներն ակտիվորեն մասնակցում են համամիութենական պլենումներին և այլ խոշոր միջոցառումների:

Գ. Երիտասարդների հետ տարվող աշխատանք

Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության ուշադրության կենտրոնում է գտնվել երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունը. իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ:

1956թ. մարտի 27-ին Ս.Գալստյանը, Է.Բաղդասարյանը, Ս.Կուրբանյանը կոմպոզիտորների համամիութենական II համագումարի կապակցությամբ հայտարարված Սովետական կոմպոզիտորների երգերի ու ռոմանսների լավագույն կատարողների մրցանակաբաշխության առաջին տուրում առաջնություն շահելուց հետո իրավունք ստացան մասնակցելու Մոսկվայում կայանալիք երկրորդ տուրին[198]:

1956թ. ապրիլի 8-ին Մոսկվայի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտում ուսանողների հետ տեղի ունեցած Սովետական կոմպոզիտորների միության երիտասարդական սեկցիայի կոմպոզիտորների հանդիպման ընթացքում կատարվում են Է.Հովհաննիսյանի դաշնամուրային կվինտետի երրորդ մասը և Ա.Բաբաջանյանի գործիքային պիեսները[199]:

Ապրիլի 10-11-ը Մոսկվայում ավարտվում է երիտասարդ կոմպոզիտորների համամիութենական ստուգատեսը: Պ.Ի.Չայկովսկու անվան կոնսերվատորիայի փոքր դահլիճում կայացած համերգների ընթացքում կատարվում են Կ.Օրբելյանի և Ջ.Տեր-Թադևոսյանի կվարտետները, Ա.Տերտերյանի ջութակի և դաշնամուրի սոնատը, Խ.Ավետիսյանի քանոնի կոնցերտը, Յու.Գևորգյանի մանկական պիեսները, Ա.Աճեմյանի և Է.Խաղաղաբերյանի երգերը, Է.Հովհաննիսյանի Դաշնամուրային կվինտետը[200]:

արվեստ», 1958, N 5, էջ 76:

[198] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 233: Մրցանակաբաշխության 1-ին տուրը, «Սովետական Հայաստան», 4 ապրիլի, 1956, N 80: **Հովսեփյան Գ.,** Լավագույն կատարողների մրցանակաբաշխություն, «Ավանգարդ», 7 ապրիլի, 1956, N 41: В Москву, на конкурс, "Коммунист", 29 марта, 1956, N 75:

[199] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 235: Встречи композиторов со слушателями, "Советская музыка", 1956, N 5, стр. 189:

[200] **Մազմանյան Ռ.,** Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 238: Смотр творчества молодых, "Коммунист", 11 мая, 1956, N 110:

Երիտասարդ տաղանդների բացահայտմանն ու խրախուսմանն էին միտված պարբերաբար անցկացվող մրցանակաբաշխությունները:

1957թ. մարտի 20-ին Երևանում ավարտվում է հանրապետական երիտասարդական առաջին փառատոնին նվիրված լավագույն երգի ու քայլերգի մրցանակաբաշխությունը: Առաջին մրցանակ ոչ ոքի չի շնորհվում: Երկրորդ մրցանակը շնորհվում է Ա.Հարությունյանին «Ֆեստիվալային քայլերգ» երգի համար, երրորդ մրցանակը՝ Է.Մերզոյանին «Ֆեստիվալային վալս» երգի համար: Խրախուսական մրցանակի է արժանանում Վ.Կոտոյանը «Լիրիկական-երիտասարդական» երգի համար[201]:

1957թ. ապրիլի 10-ին Երևանում ավարտվում է երաժշտական լավագույն ստեղծագործությունների հանրապետական մրցանակաբաշխությունը՝ նվիրված Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնին: Հայաստանի երիտասարդական փառատոնի դափնեկրի մեդալը և առաջին աստիճանի դիպլոմը շնորհվում են Ալեքսանդր Աճեմյանին՝ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված Ռապսոդիայի համար, Խաչատուր Ավետիսյանին (մեդալ և երկրորդ աստիճանի դիպլոմ)՝ ժողգործիքների անսամբլի համար գրված Սյուիտի համար[202]:

1957թ. մայիսի 25-26-ը Երևանի մարզադաշտում տեղի է ունենում Երիտասարդական հանրապետական առաջին փառատոնի բացումը: Մայիսի 30-ին Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնի անցկացման կազմկոմիտեն որոշում է դափնեկրի կոչում շնորհել նաև «երաժշտական ստեղծագործություն» անվանակարգում: Ալ.Աճեմյանին շնորհվում են ոսկե մեդալ և առաջին կարգի դիպլոմ, Է.Հովհաննիսյանին՝ ոսկե մեդալ և առաջին կարգի դիպլոմ, Կ.Օրբելյանին՝ արծաթե մեդալ և երկրորդ կարգի դիպլոմ, Ջ.Տերթադևոսյանին՝ արծաթե մեդալ և երկրորդ կարգի դիպլոմ, Խ.Ավետիսյանին՝ արծաթե մեդալ և երկրորդ կարգի դիպլոմ, Ա.Տերտերյանին՝ բրոնզե մեդալ և երրորդ կարգի դիպլոմ[203]:

Մոսկվայում 1957թ. հուլիսի 24-ին կայացած համամիութե-

---

[201] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 274: Ֆեստիվալային լավագույն երգի և քայլերգի մրցանակաբաշխություն, «Ավանգարդ», 26 մարտի, 1957, N 37:*

[202] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 276: Երաժշտական լավագույն ստեղծագործության մրցանակաբաշխություն, «Կայծ», 12 ապրիլի, 1957, N 44: Հանրապետական ֆեստիվալի լաուրեատները, «Ավանգարդ», 27 ապրիլի, 1957, N 51:*

[203] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 282-283:*

նական երիտասարդական փառատոնում Է.Հովհաննիսյանն արժանանում է առաջին մրցանակի՝ Դաշնամուրային կվինտետի համար, Կ.Օրբելյանը՝ երկրորդ մրցանակի Լարային կվարտետի համար, Ջ.Տեր-Թադևոսյանը՝ խրախուսական մրցանակի Լարային կվարտետի համար[204]: Օգոստոսի 8-ին Մոսկվայում կայացած երիտասարդական և ուսանողական համաշխարհային 6-րդ փառատոնի մրցանակաբաշխությանը դափնեկրի կոչման և ոսկե մեդալի է արժանանում Կոնստանտին Օրբելյանը Լարային կվարտետի համար, իսկ Արծաթե մեդալի՝ Էդգար Հովհաննիսյանը Դաշնամուրային կվինտետի համար[205]:

1959թ. մայիսի 8-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում Մոսկվայի և Հայաստանի երիտասարդ կոմպոզիտորների հանդիպումը Երևանի երիտասարդության հետ: Բացման խոսքով հանդես է գալիս Մ.Դավթյանը, ողջույնի խոսքով՝ Է.Միրզոյանը[206]: «Առաջին երեկոյին Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը, երիտասարդ, շնորհալի դիրիժոր Արամ Քաթանյանի ղեկավարությամբ, կատարեց Գրիգոր Հախինյանի «Աղավնավանք» սիմֆոնիկ պոեմը՝ գրված ըստ Հովհ.Թումանյանի համանուն լեգենդի, Ավետ Տերտերյանի «Հայրենիք» վոկալ-սիմֆոնիկ ցիկլը (խոսք՝ Հովհ.Թումանյանի և Հ.Շիրազի) և Ռոդիոն Շչեդրինի Սիմֆոնիան: Բոլոր ստեղծագործությունները կատարվում էին առաջին անգամ և ջերմ ընդունելություն գտան: Հաջորդ օրը Մոսկվայի հյուրերը երևանցիների հետ միասին մեկնեցին Դիլիջան: Այստեղ կայացավ հանդիպում, որ երկար կմնա նրա մասնակիցների հիշողության մեջ: Դիլիջանում տեղի ունեցած համերգին մասնակցեցին կոմպոզիտորներ Ա.Կոնդրատև-Բալտինը, Է.Հովհաննիսյանը, Ստ.Ջրբաշյա-

---

[204] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 286: Երիտասարդության համամիութենական ֆեստիվալի գեղարվեստական կոնկուրսում հաղթողները, «Սովետական Հայաստան», 5 հուլիսի, 1957, N 157:* ***Խանջյան Հ.,*** *Ֆեստիվալի մեր լաուրեատները, «Սովետական Հայաստան», 24 հուլիսի, 1957, N 173:* ***Հակոբյան Գ.,*** *Մեր պատվիրակները ֆեստիվալում, «Սովետական Հայաստան», 28 հուլիսի, 1957, N 177: Представители Армении – лауреаты конкурсов Всесоюзного фестиваля молодежи, "Комсомолец", 12 июля, 1957, N 83. Посланцы Армении – лауреаты фестиваля, "Комсомолец", 11 августа, 1957, N 96:*

[205] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 287: Գեղարվեստական մրցանակաբաշխություններում, «Սովետական Հայաստան», 10 օգոստոսի, 1957, N 188: «Սովետական Հայաստան», 25 օգոստոսի, 1957, N 201:*

[206] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 358: Հանդիպում երիտասարդ կոմպոզիտորների հետ, «Սովետական Հայաստան», 10 մայիսի, 1959, N 108:*

նը, Է.Միրզոյանը, Կ.Օրբելյանը, Գ.Զթչյանը, Ս.Սամվելյանը, ինչպես նաև արտիստներ Ա.Պետրոսյանը, Հ.Բաղալյանը, երգչուհիներ Ռ.Դանիելյանը, Ֆ.Խորենյանը, ջութակահար Հակոբ Վարդանյանը, թավջութակահար Մեղեա Աբրահամյանը, դաշնակահարներ Օլգա Վագենհեյմը և Մարիաննա Հարությունյանը»[207] : Հյուրերը Դիլիջանում մնում են երկու օր և համերգներ տալիս աշխատավորության համար: «Եվ ինչպես չհուզվեի,- գրում է ունկնդիրներից մեկը՝ մասնագիտությամբ որմնադիր բանվոր Վազգեն Ավագյանը,- իր իսկ Էդգար Հովհաննիսյանի կատարմամբ «Աղջիկների պարը» («Մարմար») կամ թե Մոսկվայի երիտասարդ կոմպոզիտոր Ա.Կոնդրատև-Բալտինի ուկրաինական երկու երգը չնորհալի երգչուհի Ֆ.Խորենյանի կատարմամբ ունկնդրելով»[208] :

Այնուհետև Երևանում՝ Կոմպոզիտորների տանը, տեղի է ունենում երկու կամերային համերգ. կատարվում են Ա.Վոլկոնսկու, Ա.Կոնդրատև-Բալտինի, Ս.Սավելևի, Է.Հովհաննիսյանի, Ս.Սամվելյանի, Ա.Ավետիսյանի, Ա.Աճեմյանի, Է.Խաղագործյանի, Կ.Օրբելյանի, Է.Հարությունյանի, Խ.Ավետիսյանի, Ա.Մանդակունու և այլոց կամերային ստեղծագործությունները:

Երկրորդ սիմֆոնիկ համերգը ղեկավարում է Մոսկվայից ժամանած դիրիժոր Ալբիս Ժուրայտիսը. համերգային ծրագիրը բաղկացած էր ռուս և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից: Հնչում են Ս.Սավելևի Սիմֆոնիկ պոեմը, Ա.Կոնդրատև-Բալտինի Կոնցերտը տավղի (մենակատար՝ Լ.Բատուրինա, Մոսկվա) և նվագախմբի համար, Գ.Կարամանովի Սիմֆոնիետան, ինչպես նաև Էդգար Հովհաննիսյանի Սիմֆոնիան: Մոքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողները «...բնութագրում են այն հաջողությունները, որոնց հասել են կոմպոզիտորներ Ռ.Շչեդրինը, Էդ.Հովհաննիսյանը, Ս.Սավելևը, Գ.Հախինյանը, դիտողություններ արեցին և խորհուրդներ տվեցին երիտասարդ կոմպոզիտորներին:

Կասկածից վեր է, որ նման հանդիպումները նպաստում են երիտասարդ երաժիշտների ոչ միայն ստեղծագործական մտերմությանը, այլև առաջընթացին»[209] :

Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության 1978թ. մարտի 10-ի նիստում հաստատվում է «Ստեղծագործական

---

[207] ***Արմենյան Գ.,*** *Գեղեցիկ նախաձեռնություն, «Սովետական արվեստ», 1959, N 6, էջ 56:*

[208] ***Ավագյան Վազգեն,*** *Մեր սրտին մոտ է լավ երաժշտությունը, «Սովետական արվեստ», 1959, N 6, էջ 56:*

[209] ***Արմենյան Գ.,*** *Գեղեցիկ նախաձեռնություն, «Սովետական արվեստ», 1959, N 6, էջ 56:*

երիտասարդության հետ աշխատանքի» հանձնաժողովի կազմը՝ Էմին Արիստակեսյանի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Ռ.Ամիրխանյանը, Ա.Բուդաղյանը, Վ.Հոչովսկին, Ե.Երկանյանը, Տ.Մանսուրյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Սարգսյանը, Լ.Զաուշյանը և Գ.Զեբոտարյանը: Հանձնաժողովն իր կազմակերպած միջոցառումների շնորհիվ պիտի խթաներ երիտասարդների ստեղծագործությունը, նրանց գործերի լայն պրոպագանդան:

Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությանն են նվիրվում ՀԿՄ վարչության 4-րդ (8-12 մայիսի, 1966) և 6-րդ (16-20 ապրիլի, 1979) պլենումները: Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությանն էր նվիրված 1988թ. փետրվարին նախատեսված ՀԿՄ պլենումը, որը, սակայն, տեղափոխվեց մի քանի անգամ և տեղի ունեցավ միայն 1990թ. հունիսի 22-25-ը՝ խորհրդանշական կերպով դառնալով Հայաստանի կոմպոզիտորների միության վերջին պլենումը...

1966թ. մայիսի 8-12-ը տեղի ունեցած Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության 4-րդ պլենումի ընթացքում կայանում են երկու սիմֆոնիկ և երեք կամերային համերգներ, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում ներկայացվում է Է.Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» բալետը (9 մայիսի): Առաջին սիմֆոնիկ համերգին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Վ.Այվազյան) և մենակատարներ Գ.Գալաջյանի, Հ.Սանդալչյանի և Լ.Զաուշյանի կատարմամբ հնչում են Ա.Մնացականյանի Երկրորդ սիմֆոնիան լարային նվագախմբի համար, Ա.Ավետիսյանի Կոնցերտ-պոեմը ձայնի և նվագախմբի համար, Տ.Մանսուրյանի Պարտիտը, Է.Արիստակեսյանի Կոնցերտը ալտի և նվագախմբի համար, Լ.Զաուշյանի Կոնցերտը դաշնամուրի և նվագախմբի համար և Յու.Ղազարյանի Սյուիտը «Աշխարհի ստեղծումը» բալետից: Իսկ երկրորդ համերգին (11 մայիսի) Համամիութենական ռադիոյի և հեռուստատեսության Մեծ սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ն.Ռախլին) և մենակատարներ Ի.Այդինյանի ու Յու.Բալյանի կատարմամբ հնչում են Յու.Գևորգյանի Սիմֆոնիան, Է.Հարությունյանի Կոնցերտը չեփորի և նվագախմբի համար, Գ.Զթչյանի կոնցերտը ձայնի և նվագախմբի համար և Ս.Շաքարյանի Կոնցերտը նվագախմբի համար:

Պլենումի կամերային համերգներին կատարվում են Ս.Շաքարյանի, Գ.Զթչյանի, Է.Հարությունյանի, Տ.Մանսուրյանի, Յու.Ղազարյանի, Գ.Հովունցի, Ա.Մնացականյանի, Է.Խաղագործյանի, ինչպես նաև ՀԿՄ երիտասարդական մասնաճյուղի անդամների կամե-

բային ստեղծագործությունները[210]*:*

1979թ. ապրիլի 16-20-ը տեղի ունեցած Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության 6-րդ պլենումի ընթացքում կայանում է երկու սիմֆոնիկ և երկու կամերային համերգ: Առաջին սիմֆոնիկ համերգին (16 ապրիլի) Հեռուստառադիոպետկոմի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Ռ.Մանգասարյան) և մենակատար Է.Մամաևի կատարմամբ հնչում են Ե.Երկանյանի Առաջին սյուիտը «Օրեսթեոս» բալետից, Լ.Զաուշյանի Դաշնամուրային երկրորդ կոնցերտի պրեմիերան և Ա.Անդրիկյանի Սկերցոն նվագախմբի համար (պրեմիերա): Երկրորդ համերգին (17 ապրիլի) Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր՝ Դ.Խանջյան), Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի, մենակատարներ Ֆ.Սիմոնյանի, Ա.Ադամյանի և Վ.Հարությունյանի կատարմամբ տեղի են ունենում Վահրամ Բաբայանի Երրորդ սիմֆոնիայի՝ ըստ Ավ.Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» պոեմի, և Էդուարդ Հայրապետյանի «1915» օրատորիայի պրեմիերաները, հնչում է Ռ.Սարգսյանի Թավջութակի կոնցերտը: Պլենումի կամերային համերգներին (18, 19 ապրիլի) կատարվում են Հ.Դելալյանի, Վ.Աճեմյանի, Է.Հայրապետյանի, Ա.Զոհրաբյանի, Կ.Պետրոսյանի, Հ.Մելիքյանի, Ա.Սաթյանի, Ռ.Սարգսյանի, Վ.Բաբայանի, Ա.Ոսկանյանի, Լ.Զաուշյանի և այլոց կամերային ստեղծագործությունները: Պլենումի շրջանակներում Կոմպոզիտորների տանը Վ.Աճեմյանը ցուցադրում է իր «Կիկոսի մահը» օպերան, Դավիթ Գիլանյանը՝ երգեհոնային մանրանվագները և Վ.Գրիգորյանը՝ «Ցեղասպանության զոհերի ռեքվիեմը» (19 ապրիլի): Կազմակերպվում են նաև Կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնի ուսանողների, ինչպես նաև Երևանի երաժշտական դպրոցների և երաժշտական ուսումնարանների կոմպոզիցիայի դասարանների սանների ստեղծագործություններից բաղկացած համերգներ[211]*:*

1980-ից սկիզբ են առնում անդրկովկասյան հանրապետությունների երիտասարդ կոմպոզիտորների երաժշտության ամենամյա ավանդական փառատոները, որոնք հերթով անց էին կացվում Երևանում, Բաքվում և Թբիլիսիում և եզրափակվում ստեղծագործական բանավեճերով:

1982թ. սեպտեմբերի 20-ին Թբիլիսիում տեղի է ունենում Հայաստանի երիտասարդ կոմպոզիտորների համերգը: 1987թ. Դիլիջանում՝ Կոմպոզիտորների ստեղծագործական տան Բեթհովենի ան-

---

[210] *Տե՛ս Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությանը նվիրված IV պլենում, ծրագիր, Լևոն Զաուշյանի անձնական արխիվ:*

[211] *"Вестник", 1979, N 1, январь-июнь, стр. 1-3.*

վան դահլիճում, կայանում է Անդրկովկասի երիտասարդ կոմպոզիտորների կամերային երաժշտության փառատոնը. դրա շրջանակներում գումարվում է գիտական կոնֆերանս երիտասարդ երաժշտագետների մասնակցությամբ, որի ընթացքում քննության են առնվում ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործության խնդիրները[212]:

Ավանդական են դառնում Մոսկվայի ու Հայաստանի երիտասարդ կոմպոզիտորների շաբաթները: Կարևոր էր երիտասարդ կոմպոզիտորների և երգի տեքստ ստեղծող բանաստեղծների համամիութենական սեմինարը, որը Հայաստանի կոմպոզիտորների միությունը ՍՍՀՄ կոմպոզիտորների միության և ՀամԼԿԵՄ Կենտկոմի հետ համատեղ անցկացրեց Դիլիջանում:

Ամեն տարի հրատարակվում են երիտասարդ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունների ժողովածուները: Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործական հաջողությունների վկայություններն են բազմաթիվ դիպլոմներն ու մրցանակները, որոնք նրանք ստանում են համամիութենական ստուգատեսներում և մրցույթներում:

1985թ. Երևանում կայանում է բուլղարացի և խորհրդային երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործական հանդիպումը:

1988թ. Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահի տեղակալ Լ.Զաուչյանի գլխավորությամբ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության պատվիրակությունը մասնակցում է ԱՄՆ-ում (Նյու Յորք, Բոստոն, Լոս Անջելես) կայացած խորհրդային և ամերիկյան երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործական հանդիպումներին:

Դ. Երաժշտագիտություն

Ակտիվ էր համագործակցությունը ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ: Երկար տարիներ Հայաստանի կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղարն էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ, հետագայում տնօրենի տեղակալ Գևորգ Գյոդակյանը, իսկ 1976-1982թթ. ՀԿՄ երաժշտագիտական սեկցիան ղեկավարում էր ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Կարինե Խուդաբաշյանը: ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և ՀԿՄ-ի ջանքերով գումարվում են Գեորգի Տիգրանովի ծննդյան 70-ամյակին (1978), Արմեն Տիգրանյանի ծննդյան 100-ամյակին (27 մայիսի, 1981), Քրիստափոր Քուշնարյանի ծննդյան 90-ամյակին (15 ապրիլի, 1981), Սպիրիդոն

---

[212] *Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 18-19:*

Մելիքյանի ծննդյան 100-ամյակին (29 դեկտեմբերի, 1981), Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 100-ամյակին (24 նոյեմբերի, 1983), Արամ Խաչատրյանի ծննդյան 80-ամյակին (23 հունվարի, 1984), Տիգրան Չուխաճյանի ծննդյան 150-ամյակին (29 ապրիլի, 1987), Կոմիտասի ծննդյան 120-ամյակին (18-20 նոյեմբերի, 1989) նվիրված և այլ գիտական նստաշրջաններ:

Կազմակերպվում են նաև համատեղ գիտական արշավախմբեր. 1959թ. հուլիսի 1-ին հայ ժողովրդական երաժշտություն գրի առնելու համար Արթիկի շրջան է մեկնում ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կողմից կազմակերպված արշավախումբը, որի կազմում էին Ալ.Թադևոսյանը, Մ.Մանուկյանը, Է.Արիստակեսյանը, Շ.Գրիգորյանը[213]:

1987թ. ապրիլին Հայաստանում լայնորեն նշվում է Տիգրան Չուխաճյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան գումարում են գիտական նստաշրջան, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս Կ.Խուդաբաշյանը՝ ««Արշակ Երկրորդ» օպերայի ժանրային ընորոշումը», Մ.Տեր-Սիմոնյանը՝ «Տ.Չուխաճյանի կամերային-գործիքային ստեղծագործությունը», Ն.Թահմիզյանը՝ «Տ.Չուխաճյանի ստեղծագործական գործունեությունը որպես հայերի ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ», Զ.Տեր-Ղազարյանը՝ «Արևելքը Տիգրան Չուխաճյանի ստեղծագործության մեջ», Ա.Գրիգորյանը՝ «Տ.Չուխաճյանի երաժշտության ազգային ինքնատիպության մասին»: Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում կայացած հոբելյանական երեկոյին բացման խոսքով հանդես է գալիս Ն.Թահմիզյանը, իսկ կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցմամբ՝ Է.Հովհաննիսյանը[214]:

Ձևավորվում է ավանդույթ, համաձայն որի Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած համերգներին ներածական խոսքով միշտ հանդես են գալիս երաժշտագետները:

Ե. Հայաստանի կոմպոզիտորների միության անդամների սոցիալական հարցերի լուծում

Կառուցվում ու շահագործման են հանձնվում Կոմպոզիտոր-

---

[213] ***Մազմանյան Ռ.,*** *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), էջ 362: Изучают музыкальный фольклор, "Коммунист", 2 июля, 1959, N 154:*

[214] *Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 27:*

ների միության առաջին և երկրորդ շենքերն ու «Դիլիջան» ստեղծագործական տունը: ՍՍՀՄ երաժշտական ֆոնդի հայկական բաժանմունքը Միության անդամներին և ապարատի աշխատակիցներին հատկացնում է բնակարաններ և հողամասեր, ապահովում հանգստյան տներում և առողջարաններում նրանց հանգստի կազմակերպումը, բուժօգնության մատուցումը:

Կենսականորեն շատ կարևոր էր ստեղծագործական և վարչական ամենօրյա աջակցությունը, որը ստանում էր Միությունը ՍՍՀՄ կոմպոզիտորների միությունից, ՍՍՀՄ երաժշտական ֆոնդից և, առաջին հերթին ՍՍՀՄ կոմպոզիտորների միության ղեկավար Տիխոն Խրենիկովից: Պետական բյուջեից գումարներ էին հատկացվում շռայլորեն:

Անհնար է չգնահատել արվեստի՝ պետական ապահովման համակարգի առավելությունները: Սովետական իշխանության 70 տարիները դարձան խորհրդային հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի արվեստի Ոսկեդարը[215]:

Կոմպոզիտորների միության անդամների գործունեության շնորհիվ աճում են Միության հեղինակությունը և նրա կշիռը հանրապետության մշակութային կյանքի առանց բացառության բոլոր ոլորտներում, երկրի առաջընթացի բազմաթիվ հիմնախնդիրների լուծման գործում:

Աճում է կոմպոզիտորների ստեղծագործական ակտիվությունը:

Միության շարքերը համալրվում են երիտասարդ տաղանդավոր կադրերով: Բարձրանում է թե՛ երիտասարդ և թե՛ փորձառու կոմպոզիտորների մասնագիտական մակարդակը:

Հայաստանի կոմպոզիտորների միությունը դառնում է ՍՍՀՄ կոմպոզիտորների առաջատար ջոկատներից մեկը: Այսպես, 1986թ. կայացած կոմպոզիտորների համամիութենական համագումարում Է.Միրզոյանն ու Ա.Տերտերյանն ընտրվում են ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության անդամներ են ընտրվում Է.Արիստակեսյանը, Գ.Գյոդակյանը, Գ.Եղիազարյանը, Մ.Հարությունյանը, Է.Հովհաննիսյանը, Է.Միրզոյանը, Լ.Զաուշյանը, Ղ.Սարյանը, Ա.Տերտերյանը, Կ.Օրբելյանը[216]:

Իր գոյության ողջ ընթացքում՝ 1936-1991թթ., Սովետական Միությունում ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում է

---

[215] *Տե՛ս* **Эдвард Мирзоян**, *Фрагменты, Ереван, 2005, стр. 70-71:*

[216] *Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 4:*

չնորհվել ընդամենը 98 կոմպոզիտորի, որոնցից 10-ը հայեր են[217]:

Հայկական կոմպոզիտորական դպրոցի խոշոր նվաճումներն ամենից առաջ պայմանավորված էին տաղանդավոր, ստեղծագործական առումով ինքնուրույն կոմպոզիտորների գործունեությամբ, որոնց անհատականությունը խարսխվում էր ազգային հիմքի վրա:

1990թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի կոմպոզիտորների միությունն ուներ 136 անդամ, այդ թվում՝ կոմպոզիտորներ՝ 93, երաժշտագետներ՝ 43: ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ էին 4-ը, ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ՝ 8-ը, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչներ՝ 25-ը, ՀՍՍՀ վաստակավոր արտիստներ՝ 3-ը, ՍՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիրներ՝ 2-ը, ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիրներ՝ 6-ը, Ա.Խաչատրյանի անվան մրցանակի դափնեկիրներ՝ 3-ը, ՀԼԿԵՄ մրցանակի դափնեկիրներ՝ 7-ը, արվեստագիտության դոկտորներ՝ 2-ը, արվեստագիտության թեկնածուներ՝ 33-ը, պրոֆեսորներ՝ 22-ը, դոցենտներ՝ 11-ը: Ազգային կազմը հետևյալն էր. հայեր՝ 132, ռուս՝ 1, քուրդ՝ 2, հրեա՝ 1[218]:

1991թ. ապրիլի 11-12-ը տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների միության 10-րդ համագումարը: Նախագահ է վերընտրվում Է.Միրզոյանը, առաջին տեղակալ՝ Լ.Զաուչյանը, տեղակալներ՝ Մ.Տեր-Սիմոնյանն ու Մ.Իսրայելյանը: Կատարվում են փոփոխություններ կառավարման մեխանիզմում. լուծարվում են վարչությունն ու քարտուղարությունը, սեկցիաներն ու հանձնաժողովները: Մնում են պրոպագանդայի և ստեղծագործական կապերի, ստեղծագործական երիտասարդության հետ աշխատանքի և վերստուգիչ հանձնաժողովները:

Էդ.Միրզոյանը Միության գլխավոր խնդիրն էր համարում՝ «Է՛լ ավելի արդյունավետ օգտագործել ստեղծագործական կազմակերպության բոլոր հնարավորությունները, ստեղծել ավելի շատ գաղափարասլաց ու գեղարվեստական բարձր մակարդակի ստեղծագործություններ, որոնք արտացոլեն մեր ժամանակի վեհությունը, մեր հասարակարգի էթիկական ու բարոյական բարձր իդեալները»[219]:

---

[217] *Հետաքրքիր է նկատել, որ Ադրբեջանն ուներ 7, Վրաստանը՝ 5, Լատվիան՝ 3, Լիտվան՝ 3, Էստոնիան՝ 4, Մոլդավիան՝ 1, Բելոռուսիան՝ 3, Ուկրաինան՝ 6, Ղազախստանը՝ 6, Ուզբեկստանը՝ 1, Թուրքմենիան՝ 2, Կիրգիզիան՝ 1, Տաջիկստանը՝ 0 ՍՍՀՄ ժողովրդական արտիստ կոմպոզիտոր, և Հայաստանն այդ կարևոր ցուցանիշով զիջում էր միայն Ռուսաստանին:*

[218] *Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 1:*

[219] ***Միրզոյան Էդ.,*** *Մեծ երաժշտության ժամանակը, «Սովետական արվեստ», 1985, N 3, էջ 13:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՏԵՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1990-ականներին տեղի ունեցավ մարդկության պատմության մեծագույն ողբերգություններից մեկը. փլվեց աշխարհի գերտերություններից մեկը՝ հզոր Խորհրդային Միությունը: Փլվեց... ու փլատակների տակ հայտնվեց նաև երբեմնի շեն ու բարգավաճ մեր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը: Տնտեսական, սոցիալ-հոգեբանական և հոգևոր օրեցօր սաստկացող ու խորացող ճգնաժամի պայմաններում երկիրն ընկղմվեց տևական խավարի մեջ: Եվ քայքայիչ ուժգին հարվածները զարկեցին նաև Կոմպոզիտորների միությանը: Երբեմնի կենսունակ ու հեղինակավոր այդ կառույցը, որը տասնամյակներ շարունակ լուրջ դեր էր կատարել Հայաստանի երաժշտական-հասարակական ու մշակութային կյանքում, ստիպված էր լավագույն դեպքում քարշ տալ իր խղճուկ գոյությունը:

Եվ այդ ինքնատիպ ու կարևոր կառույցը, որը 1932թ. հիմնադրվել ու հետագա շուրջ յոթ տասնամյակների ընթացքում զարգացել էր բացառապես պետական հովանավորության և օժանդակության շնորհիվ, ծառայել հենց հարազատ երկրին և ապահովել հայրենական կոմպոզիտորական արվեստի վերելքն ու միջազգային ճանաչումը, մատնվեց անտերության:

Պետությունը երես դարձրեց նրանից:

Շուտով հայ կոմպոզիտորներն ստանում են առաջին բարոյական հարվածը. գործածությունից դուրս է նետվում Արամ Խաչատրյանի հեղինակած ՀՍՍՀ պետական հիմնը: Այսինքն՝ պետական մակարդակով անտեսվում է պրոֆեսիոնալիզմը, չի լսվում Հայաստանի կոմպոզիտորների միության հեղինակավոր խոսքը: Կանցնեն տարիներ, և Արամ Խաչատրյանի հիմնի հետ կապված երկրորդ բարոյական հարվածը հենց Միությունը կհասցնի իրեն. 2006թ. տեղի ունեցած մրցույթում ՀԿԵՄ-ն արդեն ի՛նքը հանդես կգա Արամ Խաչատրյանի հիմնի դեմ:

Դա հետագայում: Իսկ մինչ այդ...

Անկախության հետ սկիզբ առած արտագաղթի օրեցօր ահագնացող ալիքի հետ կոմպոզիտորների և երաժշտագետների մի մասը հեռանում է հայրենիքից, մյուս մասը, տեսնելով կոմպոզիտորի և երաժշտագետի վարկանիշի սրընթաց անկումը հասարակության շրջանում և խուսափելով կիսաքաղց գոյության հեռանկարից, հեռանում է երաժշտությունից:

ՀԿՄ վարչության՝ 1990թ. մարտի 23-ի նիստում Է.Միրզոյանը տեղեկացնում է միութենական դոտացիոն ֆինանսավորման

դադարեցման մասին. սկիզբ են առնում Միության համար դժվարին ժամանակները:

1991թ. դեկտեմբերի 17-ին Կոմպոզիտորների միության արտահերթ համագումարն ընդունում է Էդ.Միրզոյանի հրաժարականը և նախագահ ընտրում **Ռոբերտ Բաբկենի Ամիրխանյանին** (ծնվ. 1939), ով պաշտոնավարեց 22 տարի՝ իր նախագահական երկարակեցությամբ զիջելով միայն Էդ.Միրզոյանին: Սակայն եթե միրզոյանական 35-ամյակը նշանավորեց ՀԿՄ ծաղկումը, ապա այժմ սկսվում է Միության հեղինակության և դերի շեշտակի անկման, Միության գոյատևման շրջանը: Հետընթացի այս տարիներին Միությունում գերիշխող են դառնում քայքայման գործընթացները: Հիասթափված ՀԿԵՄ նախագահի եռամյա գործունեությունից և 1994թ. սեպտեմբերի 17-ին հրավիրված արտահերթ համագումարի արդյունքներից՝ Միության վեց անդամներ մեկ տարով՝ մինչև հերթական համագումարը, սառեցնում են իրենց անդամակցությունը. Լևոն Զաուշյանը հիմնադրում է Հայկական երաժշտական համաժողովը՝ հասարակական կազմակերպություն, որի նպատակն էր հայ ժամանակակից դասական երաժշտության զարգացումն ու տարածումը Հայաստանում և արտասահմանում[220]:

Հետևողականորեն վերացվում են միրզոյանական ավանդույթները: Այդ համատեքստում խզվում է նաև երկարամյա ու արդասավոր համագործակցությունը երաժշտագիտական կարևոր կենտրոնի՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ:

Նշեմ ընդամենը երեք փաստ: 1984թ. հրավիրված ՀԿՄ 9-րդ համագումարի Նախագահության կազմում ընդգրկված էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը (ի դեպ, մասնագիտությամբ թատերագետ և ոչ թե երաժիշտ) և փոխտնօրեն, երաժշտության բաժնի վարիչ, երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը (ի դեպ, ՀԿՄ վարչության քարտուղար)[221]: 1987թ. ապրիլին Հայաս-

---

[220] Համաժողովը սկզբնավորման առաջին տարիներից առ այսօր ծավալել է բուռն համերգային գործունեություն ոչ միայն Հայաստանում, այլև Բելգիայում, Վրաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, մի կողմից պրոպագանդելով հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, մյուս կողմից՝ մշակութային երկխոսություն ստեղծելով վերոնշյալ երկրների ու հայ երաժիշտների միջև: Լ.Զաուշյանի ջանքերով թողարկվել է բացառապես հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրություններից բաղկացած 9 խտասալիկ: Համաժողովի գործունեության կարևորագույն ուղղություններից է ստեղծագործությունների լույսընծայումը. հրատարակվել է ավելի քան 30 ժողովածու:

[221] Տե՛ս Президиум IX съезда композиторов Армении (35 человек), Արամ Սաթունցի անձնական արխիվ, մեքենագիր 2 թերթ:

տանում լայնորեն նշվում է «Հայ երաժշտության դասական, հայ օպերային արվեստի հիմնադիր Տիգրան Չուխաճյանի» ծննդյան 150-ամյա հոբելյանը, որի կապակցությամբ «գիտական նստաշրջանը կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան»[222]: 1989թ. նոյեմբերի 18-20-ը Երևանում կայացավ գիտական նստաշրջան՝ նվիրված Կոմիտասի հոբելյանին (կազմակերպիչներն էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Երևանի պետական կոնսերվատորիան, Հայաստանի կոմպոզիտորների միությունը)[223]:

Ռ.Ամիրխանյանի առաջարկով Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերանվանվում է Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության: ՀԿԵՄ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպում է «Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը» միջազգային երրորդ գիտաժողով-փառատոնը (17-30 նոյեմբերի, 2003)[224], «Ժողովրդական ստեղծագործություն և կոմպոզիտորական արվեստ» միջազգային գիտաժողով-փառատոնը (2 հոկտեմբեր - 18 նոյեմբերի, 2005)[225], ինչպես նաև «Ավետ Տերտերյան – 75. ավանդույթ և նորարարություն» միջազգային գիտաժողով-փառատոնը (17-30 հոկտեմբերի, 2005)[226], որոնց աշխատանքներին մասնակցում են երաժշտագետներ նաև Ռուսաստանից, Վրաստանից, Գերմանիայից և Իրանից:

ՀԿԵՄ-ը ձգտում է դառնալ Հայաստանում երաժշտագիտական կենտրոն, բայց ապարդյուն, քանզի Հայ երաժշտագիտության կենտրոնը եղել է, է ու կլինի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը՝ իր երաժշտության բաժնով:

Եվ այնուամենայնիվ, կոմպոզիտորների միությունը գոյատևեց ու պահպանվեց: Պահպանվեցին Կոմպոզիտորների տան շենքը և «Դիլիջան» ստեղծագործական տունը, 2001թ. ստեղծվեց Հայ երաժշտության գանձարան-ընտրանին, որտեղ ներառվեցին Հայ երաժշտության պատմության ականավոր գործիչների մասին ամ-

---

[222] Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 27:

[223] Տե՛ս Հայաստանի կոմպոզիտորների X համագումարը. համագումարից համագումար, 1984-1990, Արմեն Բուդաղյանի անձնական արխիվ, էջ 28:

[224] Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը, Երևան, 2004, 156 էջ:

[225] Ժողովրդական ստեղծագործություն և կոմպոզիտորական արվեստ, միջազգային գիտաժողով-փառատոն, Երևան, 2006, 168 էջ:

[226] «Ավետ Տերտերյան – 75. ավանդույթ և նորարարություն», միջազգային գիտաժողով-փառատոն, Երևան, 2005, 176 էջ:

փոփ տեղեկություն պարունակող գրքույկը և նրանց ստեղծագործություններով 4 պնակ:

1994-ից վերականգնվեցին Միության գարնանային և աշնանային համերգաշարերը, տպագրվեցին Միության անդամների բազմաթիվ ստեղծագործություններ: 1996-ին Միության շենքում գործող ձայնագրման ստուդիայում ձայնագրվում են Միության անդամների ստեղծագործությունները, 1994-ից արտասահմանյան բարերարների աջակցությամբ կազմակերպվում են հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ամենամյա մրցանակաբաշխություններ:

Ամենամյա մշակութային համագործակցության ծրագրեր են իրականացվում ՀՀ պաշտպանության նախարարության հետ, այդ թվում՝ մասնակցություն Հայոց բանակի կարևորագույն տոներին և հավաքներին, հանդիպումներ և համերգներ զինվորական մասերում, գործիքի նվիրում Վազգեն Սարգսյանի անվան զինակադեմիային և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

*2013թ. հոկտեմբերի 26-27-ին տեղի ունեցած Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության համագումարում Միության նախագահ է ընտրվում **Արամ Արամի Սաթյանը** (ծնվ. 1947), ում ղեկավարությամբ վերջին չորս տարիներին, որը շատ կարճ ժամանակահատված է կազմակերպության 85-ամյա պատմության մեջ, Հայաստանի կոմպոզիտորների միությունը շարունակում է գրել իր տարեգրության հերթական էջերը՝ փորձելով վերականգնել տասնամյակներ առաջ կորսված իր երբեմնի համբավն ու բարձր հեղինակությունը:*

Այս կարճ ժամանակահատվածում Միությունն ստացել է նոր շնչառություն:

Վերականգնվեց Միության անունը՝ Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության փոխարեն՝ Հայաստանի կոմպոզիտորների միություն:

Վերստեղծվեցին Միության սեկցիաներն ու հանձնաժողովները, որոնք այսօր գործում են ակտիվ ու արդյունավետ:

«Դիլիջան» ստեղծագործական տունն անվանակոչվեց Էդվարդ Միրզոյանի անունով (2013), ում ղեկավարությամբ է քայլել Կոմպոզիտորների միությունն իր 85-ամյա ճանապարհի 35 տարիները:

Ստեղծվեց Հայաստանի կոմպոզիտորների միության ինտերնետային կայքը՝ www.composers.am հասցեով (2013):

Ստեղծվեց Հայաստանի կոմպոզիտորների միության հրատարակչությունը (2014):

ՀԿՄ պատմության մեջ առաջին անգամ հիմնարկվեց Հայաստանի կոմպոզիտորների միության «Հայ կոմպոզիտոր» հանդեսը (2017):

Շարունակաբար հիմնանորոգվում են «Դիլիջան» ստեղծագործական տան քոթեջները:

Ա.Սաթյանի ղեկավարությամբ Հայաստանի կոմպոզիտորների միությունը ձեռնամուխ է եղել հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդման գործին ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

ՀՀ Առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո Հայաստանի կոմպոզիտորների միությունը 2014թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը կազմակերպեց «Հայ ժամանակակից երաժշտության փառատոնը», որի նպատակն էր ներկայացնել հայ ժա-

մանակակից երաժշտության համայնապատկերն ու պրոպագանդել հայ երաժշտությունը:

Փառատոնի ընթացքում հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվները՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ և Հայաստանի պետական կամերային երգչախումբը՝ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ, մենակատարներ ոչ միայն Հայաստանից, այլև Իսրայելից, Չինաստանից և Շվեյցարիայից: Քառօրյա փառատոնի ընթացքում կայացած համերգներից երկուսը սիմֆոնիկ էին, իսկ երեքը՝ կամերային:

Փառատոնը դարձավ յուրատեսակ ստուգատես, որտեղ ներկայացվեց 21-րդ դարի հայ կոմպոզիտորական մտքի համայնապատկերը: Ընդ որում պրեմիերաների կողքին հնչեցին նաև ունկնդրին արդեն ծանոթ և ժամանակի քննությունը բռնած ստեղծագործություններ: Ժամանակակից հայ կոմպոզիտորական դպրոցը Փառատոնի ընթացքում ներկայացավ ոճական բազմազանությամբ, ինչն արդի հայ երաժշտության առանձնահատկություններից է: Ոճական բազմազանության կողքին ակնհայտ էր ժանրային բազմազանությունը ևս:

Փառատոնի կազմակերպման ու բարձր մակարդակով անցկացման գործում դժվար է գերագնահատել Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանի անձնական ջանքերը: Փառատոնը, որն, ասես, Ա.Սաթյանի պաշտոնավարման մեկամյակի յուրօրինակ հաշվետվությունը դարձավ, ցույց տվեց, որ Հայաստանի կոմպոզիտորների միության ղեկը հուսալի ձեռքերում է, և ազդարարեց Կոմպոզիտորների միության յուրահատուկ վերածնունդը. այդ մասին նշվեց նաև Փառատոնին հաջորդած ստեղծագործական քննարկման ժամանակ:

Փառատոնի սիմֆոնիկ համերգների ընթացքում ներկայացվեցին սիմֆոնիկ երաժշտության գրեթե բոլոր ժանրերը՝ սիմֆոնիա, սիմֆոնիկ պոեմ, կոնցերտ: Հանդիսատեսը հնարավորություն ունեցավ ևս մեկ անգամ հանդիպելու արդի հայ սիմֆոնիզմի փայլուն ներկայացուցիչների՝ Վահրամ Բաբայանի և Արամ Սաթյանի, սիմֆոնիկ ստեղծագործություններին: Ջերմ ընդունելության արժանացավ Վահրամ Բաբայանի Ութերորդ սիմֆոնիան (1998, պրեմիերան՝ 2013)՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ և Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի բարձրարվեստ կատարմամբ:

Կոմպոզիցիոն կուռ կառուցվածքով և գործիքային անսամբլների համուտ կիրառությամբ հնգամաս Սիմֆոնիայում հեղինակը շարունակում է իր նախորդ սիմֆոնիաներում կարմիր թելի պես անցնող մարդ-բնություն, մարդ-տիեզերք թեման: Արամ Սաթյանի՝ արդեն տասնամյակը բոլորած և իր վառ կերպարայնության ու տեմբրային դրամատուրգիայի շնորհիվ ունկնդիրների կողմից արդեն սիրված «Համլետ» սիմֆոնիկ պոեմը (2004), որը նախկինում կատարել են դիրիժորներ Կարեն Դուրգարյանը, Ռուբեն Ասատրյանը, Մերուժան Սիմոնյանը, հնչեց երիտասարդ տաղանդավոր դիրիժոր Սերգեյ Սըմբատյանի նոր ու համոզիչ մեկնաբանությամբ: Անդրադարձ եղավ նաև երաժշտական թատրոնին՝ հնչեցին հատվածներ Էդուարդ Սադոյանի «Նարեկացի, ձայն առ Աստված» բալետից՝ մասնակցությամբ Գայանե Գեղամյանի և Զայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի երգչախմբի:

Կամերային ստեղծագործություններից աչքի ընկան Տիգրան Մանսուրյանի «Զուգահեռ երգերը» սոպրանոյի, դաշնամուրի և լարային նվագախմբի համար (2012, մենակատարներ՝ Իրինա Զաքիյան և Արթուր Ավանեսով) և Էդուարդ Հայրապետյանի «Կամերային երաժշտությունը» (2010, պրեմիերան՝ 2012):

Փառատոնի առավել հաջողված պրեմիերաներից էր Զոհրաբ Փարեմուզյանի «Հինգ շարժուն պիեսները» «20 դաշնամուրային պիեսներ» շարքից՝ հեղինակի կատարմամբ: Առաջին անգամ կատարվեց նաև Դավիթ Գիլանյանի «Praeludium»-ը երգեհոնի համար (2012, մենակատար՝ Աննա Բակունց): Իսկ խմբերգային արվեստը ներկայացրին Ստեփան Բաբաթորոսյանի «Մենակյացը և գամփռ շունը», Սոֆա Աղնաուրյանի «Հոյ մարալը», Շուշանիկ Իսկանդարյանի «Խաղաղության երգը»:

Փառատոնն ուներ համահայկական ընդգրկում. հնչեցին արտասահմանում ապրող և ստեղծագործող հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ունկնդրի ջերմ հավանությանն արժանացավ ֆրանսաբնակ Արթուր Ահարոնյանի «Ջոնաթանի բալլադը» սիմֆոնիկ-խորեոգրաֆիկ պոեմը, որի պրեմիերան տեղի էր ունեցել 10 տարի առաջ՝ 2004-ին, Ֆրանսիայում և արժանացել առաջին մրցանակի: Հայաստանում առաջին անգամ հնչեց ԱՄՆ-ում բնակվող Կոնստանտին Պետրոսյանի՝ թավջութակի և նվագախմբի համար գրված «Վոկալիզը» (մենակատար՝ Արամ Թալալյան):

Փառատոնի հայտնություններից էր տարբեր ժանրերում հաջողությամբ ստեղծագործող հայուհի կոմպոզիտորների ստեղծագործական ակտիվությունը: Կամերային երաժշտության գողտրիկ նմուշներ են Ջեննի Ասատրյանի «Արևածագ» երաժշտական պատկերը լարային նվագախմբի և դաշնամուրի համար (2007), Սվետ-

լանա Ալեքսանյանի «Խորալ-մեդիտացիան» լարային նվագախմբի համար (2008), որը հեղինակը նվիրել է իր Ուսուցչի՝ Ղազարոս Սարյանի հիշատակին, Նարինե Զարիֆյանի Կոնցերտ-էլեգիան ակուստիկ կիթառի և կամերային նվագախմբի համար (մենակատար՝ Հակոբ Ջաղացպանյան), Վարդ Մանուկյանի «Խոստովանություն» սիմֆոնիան լարային նվագախմբի և տամ-տամի համար (2011, պրեմիերան՝ 2011)՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Հնչեցին նաև Նաիրա Դիվանյանի Լարային երկրորդ կվարտետը (2003) և Անահիտ Կոստանյանի՝ Միսաք Մեծարենցի քնարական բանաստեղծությունների հիման վրա գրված «Երեք երգը» լիրիկո-դրամատիկ սոպրանոյի և փայտյա-փողային կվարտետի համար (2002):

Կարևոր էր երիտասարդ կոմպոզիտորների մասնակցությունը: Հանդիսատեսի ջերմ ընդունելությանն արժանացավ Գևորգ Հովհաննիսյանի՝ ֆլեյտայի, տիմպանիի, բոնգերի, վիբրաֆոնի և թավջութակի համար գրված «Էսքիզային կոնտրաստների» (2013) պրեմիերան: Հնչեցին Վահան Տերյանի «Հորս» բանաստեղծության հիման վրա գրված Դավիթ Բալասանյանի «Սիրո քարոզիչ» երկսեռ a cappella խմբերգը (2001) և Իրինա Խաչատրյանի «Երաժշտությունը» սիմֆոնիկ նվագախմբի համար (2002): Կամերային համերգներից մեկում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի ուսանողների՝ Լևոն Զաուշյանի, Վարդան Աճեմյանի, Ստեփան Ռոստոմյանի, Արամ Սաթյանի, Աշոտ Զոհրաբյանի սաների, հայ կոմպոզիտորական դպրոցի վաղվա հերթափոխի ստեղծագործություններն էին:

Փառատոնի ընթացքում հնչեցին նաև ավագ սերնդի կոմպոզիտորների գործերը՝ Գագիկ Հովունցի դաշնամուրային «Սիմֆովալսը» (մենակատար՝ Տաթևիկ Մարտիրոսյան), Ստեփան Շաքարյանի «Քրիստոսի ծնունդը» սյուիտը, Արեգ Լուսինյանի «Պահպանիչ աղոթք» խմբերգը են:

Փառատոնն ուներ միջազգային ընդգրկում. Իսրայելից ժամանած տրոմբոնահար Դենիս Վուլլը կատարեց իսրայելաբնակ Նուբար Ասլանյանի Կոնցերտը տրոմբոնի և նվագախմբի համար, իսկ ջութակահար Բորիս Լիվշիցը (Շվեյցարիա) և դաշնակահարուհի Ռեն Դժեան (Չինաստան)՝ Միխայիլ Կոկժաևի Կրկնակի կոնցերտը ջութակի, դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

Փառատոնին հատուկ շուք հաղորդեցին տպագրական բարձր մակարդակով հրատարակված գրքույկները, որոնցում զետեղված էին կատարվող ստեղծագործությունների վերաբերյալ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ երաժշտագետների կազմած համառոտ բնութագրերը:

2015թ. հոկտեմբերի 20-27-ը կազմակերպվեց հայ ժամանակակից երաժշտության երկրորդ փառատոնը՝ «Խաչատրյանը և մեր ժամանակները» խորագրով՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: Փառատոնի ընթացքում հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, Կոմիտասի անվան լարային քառյակը, Արամ Խաչատրյանի անվան լարային քառյակը, մենակատարներ: Եռօրյա փառատոնի ընթացքում կայացած համերգներից մեկը սիմֆոնիկ էր, իսկ երկուսը՝ կամերային:

ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ 2016թ. ապրիլի 8-ից 25-ը կազմակերպվեց հայ ժամանակակից երաժշտության երրորդ՝ «Պրեմիերա» փառատոնը՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: Վեց համերգների ընթացքում հնչեցին շուրջ 40 կոմպոզիտորների գործեր:

«Պրեմիերան» մեկ անգամ ևս արձանագրեց մեր կատարողական արվեստի բարձր մակարդակը: Հընթացս Փառատոնի՝ հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների բարձրարժեք մեկնաբանություններով ու պրոֆեսիոնալ բարձրակարգ կատարումներով հանդես եկան հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվները՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Հարություն Արզումանյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախումբը՝ Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական կամերային երգչախումբը՝ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ, Երևանի կամերային երգչախումբը՝ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ, Արամ Խաչատրյանի անվան լարային քառյակը (գեղարվեստական ղեկավար՝ Վաչե Հովեյան), ինչպես նաև մենակատարներ ոչ միայն Հայաստանից, այլև Իսրայելից: Խոսքը, մասնավորապես Հայֆայի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր կլարնետահար Ջեֆֆ Հովվարդի մասին է, ում կատարմամբ հնչեց Նուբար Ասլանյանի Կլարնետի (in B) և նվագախմբի եռամաս կոնցերտի պրեմիերան, որը կոմպոզիտորն ավարտել է 2015թ. դեկտեմբերի 23-ին և նվիրել հենց կլարնետահարին: Ի դեպ, հավատարիմ ծրագրային ստեղծագործություններում ժողովրդական մեղեդիներ օգտագործելու իր սկզբունքին, Ն.Ասլանյանը Կոնցերտի երրորդ մասում կիրառել էր «Հով արեք, սարեր ջան» երգի ելևէջները, որն էլ հնչեց օտարազգի երաժշտի կատարմամբ:

«Պրեմիերա» փառատոնի ընթացքում կայացած վեց համերգ-

ներից երեքը սիմֆոնիկ էին, իսկ երեքը՝ կամերային:

Ներկայացվեցին սիմֆոնիկ երաժշտության գրեթե բոլոր ժանրերը՝ սիմֆոնիա, սիմֆոնիետա, նախերգանք, կոնցերտ: Ունկնդիրը հնարավորություն ունեցավ ևս մեկ անգամ ունկնդրելու հայ սիմֆոնիզմի փայլուն ներկայացուցիչների՝ Էդվարդ Միրզոյանի և Վահրամ Բաբայանի սիմֆոնիկ ստեղծագործությունները: Ջերմ ընդունելության արժանացան 26-ամյա Էդ.Միրզոյանի «Տոնական նախերգանքը» (1947)՝ Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի կատարմամբ, որն առաջին անգամ հնչել է 1947թ. Մոսկվայում, ՍՍՀՄ Ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ (դիրիժոր՝ Ա.Ստասևիչ) և Վահրամ Բաբայանի Հինգերորդ սիմֆոնիան մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար (1981)՝ Հարություն Արզումանյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի բարձրարվեստ կատարմամբ: Ի դեպ, Սիմֆոնիայի պրեմիերան տեղի էր ունեցել 1984թ. Երևանում, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ (դիրիժոր՝ Վալերի Գերգիև):

Ապրիլյան փառատոնի հայտագրերում կարևոր տեղ գրավեցին 2015-ին գրված և Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված սիմֆոնիկ գործերի պրեմիերաները՝ Ստեփան Սուքիասյանի "Litania"-ն (Աղոթք առ սուրբ Կույս Մարիամ) սոպրանոյի, բարիտոնի, երկսեռ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար՝ գրված իտալացի բանաստեղծ, կինոռեժիսոր և գրող Պիեռ Պաոլո Պազոլինիի համանուն պոեմի հիման վրա (հայերեն թարգմանությունը՝ Իտալիայում ՀՀ նախկին դեսպան Գագիկ Բաղդասարյանի), Միխայիլ Կոկժաևի "Lux Aeterna" Ռեքվիեմը՝ երգչախմբի և նվագախմբի համար՝ լատինական տեքստերով: Առաջին անգամ հնչեց Արեգ Լուսինյանի Երկրորդ սիմֆոնիան (1988)՝ ռեքվիեմը Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

«Պրեմիերա» փառատոնի սիմֆոնիկ երկրորդ համերգի երկրորդ բաժնում տաղանդավոր դիրիժոր, արվեստագիտության թեկնածու Սերգեյ Սմբատյանի մեկնաբանությամբ, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ հնչեցին պրոֆեսոր Վարդ Մանուկյանի «Խոստովանություն» սիմֆոնիան լարային նվագախմբի և տամ-տամի համար (2011), որը հեղինակի վկայությամբ ի սկզբանե մտահղացվել է որպես հիշատակ Հայոց եղեռնի զոհերի, «Սասունցիներ» Ռապսոդիան՝ ալտի և լարային նվագախմբի համար (2008), որը բազմիցս կատարվել է Հայաստանում, Ռուսաստանում և Եվրոպայի տարբեր երկրներում, և որի կատա-

րումը մենակատար Վաչե Հովեյանը նվիրեց սահմանին կանգնած տղաներին, ինչպես նաև Կրկնակի կոնցերտը ալտի, ջութակի և լարային նվագախմբի համար (2013): Տաղանդավոր ալտահար, արվեստագիտության թեկնածու Վաչե Հովեյանի ելույթը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ վարչական աշխատանքը մեծ հաջողությամբ կարելի է զուգակցել կատարողական գործունեության հետ. նա փառատոնի համերգներին հանդես եկավ և՛ որպես փայլուն մենակատար, և՛ որպես անսամբլիստ՝ Արամ Խաչատրյանի անվան լարային կվարտետի ալտահար:

Փառատոնում ներկայացված կամերային ստեղծագործություններից աչքի ընկան Աշոտ Զոհրաբյանի N 3 "Stanzas in August" լարային կվարտետի («Ստանցաներ օգոստոսին», 2015, Ղազարոս Սարյանի անվան լարային քառյակի կատարմամբ) և Վարդան Աճեմյանի՝ պիկոլո-ֆլեյտայի, տուբայի, վիբրաֆոնի, կոնտրաբասի և դաշնամուրի համար գրված Կվինտետի (1998, կատարեցին Արուս Աճեմյանը, Գևորգ Ավետիսյանը, Հարություն Հաջինյանը, Ազատ Գրիգորյանը և Լուսինե Հայրապետյանը) հայաստանյան պրեմիերաները:

Ուրախալի էր, որ ժամանակակից կոմպոզիտորների գործերը նվագում են երիտասարդ կատարողները, ովքեր դրա շնորհիվ հաղորդակից են դառնում ժամանակակից հայ երաժշտությանը: «Պրեմիերայի» հայտնությունը դարձավ երիտասարդ տաղանդավոր դաշնակահարուհի, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Արտեմյանի ելույթը, ով պրոֆեսիոնալ բարձր մակարդակով (ի դեպ, կատարեց առանց նոտաների) և իր յուրովի մեկնաբանությամբ ներկայացրեց Լևոն Զաուշյանի՝ արդեն կատարողական հարուստ կենսագրություն ունեցող և դաշնակահարների կողմից քանիցս կատարված Դաշնամուրային երրորդ՝ «Պատկերներ առանց ցուցահանդեսի» սոնատը:

Փառատոնն ուներ համահայկական ընդգրկում. հնչեցին նաև արտասահմանում ապրող և ստեղծագործող հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ունկնդրի ջերմ ընդունելությանն արժանացան Կոնստանտին Պետրոսյանի Սոնատը մենանվագ ֆլեյտայի համար (2014, պրեմիերա, կատարող՝ Արտաշես Գրիգորյան) և «Հայրենի ղողանջներ» շարքից երեք՝ «Թամզարա», «Սոնա յար» և «Էսօր ուրբաթ պիտեր» a cappella խմբերգերը (2003):

Ուրախալի է, որ հայ կոմպոզիտորները ստեղծագործում են նաև մանուկների և պատանիների համար ևս. խոսքը Մարտին Վարդազարյանի «Ալբոմ պատանեկության համար» դաշնամուրային շարքի մասին է, որից երկու պիեսների կատարմամբ հանդես եկավ հենց հեղինակը:

«Պրեմիերա» փառատոնում անվանի կոմպոզիտորների երկերի կողքին հնչեցին երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները ևս: Հանդիսատեսի հավանությանն արժանացավ Գևորգ Հովհաննիսյանի «Օրորոցային» երգը (2015)՝ գրված Հ.Շիրազի քնարական բանաստեղծության խոսքերով, սոպրանոյի և դաշնամուրի համար, որի՝ հայկական վիոլայի և դաշնամուրի համար փոխադրությունը կատարեցին Գրիգոր Առաքելյանն ու Անահիտ Դիլբարյանը, ինչպես նաև Իրինա Խաչատրյանի Սոնատը կլարնետի և դաշնամուրի համար (1995, կատարողներ՝ Սուրեն Խորոցյան և Նաիրա Իսրայելյան), որն առաջին անգամ հնչել է Աբգար Մուրադյանի և հեղինակի կատարմամբ, Բելա Հովհաննիսյանի Սիմֆոնիան, Ժիրայր Շահրիմանյանի «Սիմֆոնիետտան», Աննա Հակոբջանյանի *a cappella* խմբերգը ևն: Ակնհայտ է, որ իրենց հասունությամբ և լրջությամբ նրանք մեր կոմպոզիտորական դպրոցի արժանի հերթափոխն են, խոստումնալից և հուսալի ապագան:

Փառատոնի կարևոր առանձնահատկություններից էր տարբեր ժանրերում հաջողությամբ ստեղծագործող հայուհի կոմպոզիտորների ստեղծագործական ակտիվությունը: Պրեմիերաներից աչքի ընկան Սվետլանա Ալեքսանյանի «Մթնշաղը» Բայրոնի խոսքերով, մեցցո-սոպրանոյի և դաշնամուրի համար (2014, կատարեցին Արփինե Աղջոյանը և հեղինակը), Անահիտ Կոստանյանի Մշակումը դուդուկի և լարային նվագախմբի համար, Նարինե Զարիֆյանի Տանգո-ռապսոդիան ալտի և լարային նվագախմբի համար, ինչպես նաև Գայանե Կեսոյանի չորս ռոմանները:

«Պրեմիերա» փառատոնի հինգ համերգների ընթացքում հնչած բոլոր ստեղծագործությունների կատարումները նվիրվեցին այն հայորդիներին, ովքեր իրենց կյանքի գնով անառիկ են պահում մեր սահմանները: Փառատոնի եզրափակիչ՝ վեցերորդ համերգը խմբերգային էր: Այն տեղի ունեցավ ապրիլի 25-ին, երբ լրացավ Հայոց մեծ եղեռնի սուրբ զոհերի նահատակության 101 տարին և մեկ օրը ու նվիրվեց նրանց անթառամ հիշատակին: Հնչեցին թուրքական յաթաղանին զոհ գնացած 31-ամյա Դանիել Վարուժանի տեքստերով Ջեննի Ասատրյանի «Ցորյանի ծովեր» և Էդվարդ Սադոյանի «Անդաստան» խմբերգերը, ինչպես նաև Աշոտ Ղազարյանի «Մաղթանքներն ու աղոթքները», Արմենուհի Կարապետյանի, Սոֆյա Միքայելյանի, Աննա Ազիզյանի և Ստեփան Բաբաթորոսյանի խմբերգերը:

Երևանի կամերային երգչախմբի կատարմամբ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ կատարվեց Երվանդ Երկանյանի *"Ave Maria"*-ն (2015), որը հեղինակը, ի նշան երախտագիտության, ձոնել է Վատիկանում Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված

պատմական Պատարագը մատուցած Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ին:

Փառատոնին հատուկ շուք հաղորդեցին տպագրական բարձր մակարդակով հրատարակված գրքույկները, որոնցում զետեղված էին կատարվող ստեղծագործությունների վերաբերյալ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ երաժշտագետների կազմած համառոտ բնութագրերը:

Վերջին շրջանում Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության ուշադրության կենտրոնում է աշխատանքը երիտասարդ ստեղծագործողների բացահայտման և խրախուսման ուղղությամբ (ՀԿՄ երիտասարդական մասնաճյուղի ղեկավար՝ Աշոտ Ղազարյան): Դրա վկայությունն են ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացվող Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթները (2014, 2015, 2016, 2017), որոնց մասնակցում են ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի 8-18 տարեկան պատանի ստեղծագործողները: Ավանդաբար Մրցանակաբաշխությանը ներկա է գտնվում Երևանի փոխքաղաքապետ Արամ Սուքիասյանը, ով հանձնում է պատանիներին բարձր պարգևները:

Կարևոր նշանակություն ունեն Երիտասարդ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ամենամյա փառատոները (2014, 2015, 2016):

2017թ. մայիսի 24-ին մեկնարկեց Երիտասարդ հայ կոմպոզիտորների կամերային երաժշտության հերթական փառատոնը, որն անց կացվեց Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադրման 85-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Հընթացս «Դեբյուտ» խորագիրը կրող փառատոնի չորս համերգների հնչեցին երիտասարդ հայ կոմպոզիտորների ավելի քան 30 ստեղծագործություններ:

«Դեբյուտ» փառատոնի ընթացքում տեղի ունեցավ նաև ՀԿՄ անդամ ամենաերիտասարդ արվեստագիտության թեկնածուի՝ Լիլիթ Արտեմյանի՝ որպես համերգավարի, դեբյուտը. վերականգնվում է նախկինում ձևավորված այն ավանդույթը, համաձայն որի ՀԿՄ համերգները վարում էին ՀԿՄ անդամ երաժշտագետները:

Փառատոնի առաջին համերգին՝ մայիսի 24-ին, ելույթ ունեցավ տարբեր երաժիշտներից կազմված էլեկտրոակուստիկ փորձարարական անսամբլը: Մայիսի 31-ին՝ ՀԿՄ դահլիճում կայացած փառատոնային երկրորդ համերգը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների մասնակցությամբ էր, իսկ հունիսի 21-ին՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, հնչեցին երիտասարդ կոմպոզիտորների յոթ կամերային ստեղծագործություններ:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հյուրընկալ համերգասրահում սեպտեմբերի 30-ին Փառատոնային չորրորդ՝ եզրափակիչ համերգի ընթացքում տեղի ունեցավ Հայկական Բարեգործական Ընդհանուր միության Նյու Յորքում գտնվող կատարողական արվեստների բաժնի տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ԱՄՆ-ում, Կանադայում, Հայաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Կանարյան կղզիներում, Չեխիայում, Բուլղարիայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Կոլումբիայում, Կուբայում, Սիրիայում և Լիբանանում բազմաթիվ մենահամերգներով հանդես եկած նյու յորքաբնակ դաշնակահար-կոմպոզիտոր Հայկ Արսենյանի դաշնամուրային «Պոեմի» (2001) հայաստանյան պրեմիերան՝ հեղինակի կատարմամբ[227]:

Մինչ այդ տեղի ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության կազմակերպած Սայաթ-Նովայի անվան կոմպոզիտորական միջազգային մրցույթում հաղթող ճանաչված ստեղծագործությունների ժողովածուի շնորհանդեսը. ժողովածուն ներկայացրեց Հայկ Արսենյանը:

Հաջորդիվ հնչեցին Աննա Զաքարյանի «Արևամուտի ցոլքերը» լարային քառյակի համար (2015)՝ Ղ.Սարյանի անվան լարային քառյակի կատարմամբ (Էրիկ Մանուկյան, Անի Ադիկյան, Ելենա Հայրապետյան և Դավիթ Պիչիկյան), կոմպոզիտոր Շուշան Սարգսյանի «Սիրո երգերը»[228] (2010) մեցցո-սոպրանոյի և դաշնամուրի համար՝ գրված Անդրանիկ Տերտերյանի խոսքերով (կատարեցին Գրետա Բաղինյանը և Անահիտ Դիլբարյանը), կոմպոզիտոր և դաշնակահար Արփինե Կալինինայի «Remind me not» («Մի հիշեցրու») դրամատիկ բալլադը (2016)՝ գրված Ջորջ Բայրոնի խոսքերով տենորի և դաշնամուրի համար, հատուկ ՀՀ վաստակավոր արտիստ Պերճ Քարազյանի ձայնի համար և նվիրված նրան՝ որպես ստեղծագործության առաջին կատարողի (կատարեցին Պ.Քարազյանը և հեղինակը) ու Սամվել Գանտրայյանի Լարային կվարտետը՝ Ղ.Սարյանի անվան լարային քառյակի կատարմամբ:

Այս փառատոնը հատկանշվեց ոչ միայն երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ, այլև մի շատ

---

[227] *Պոեմի պրեմիերան տեղի է ունեցել Կրեմլում՝ Մոսկվայում կայացած «Աշխարհի ազգեր» միջազգային երաժշտական փառատոնի ժամանակ, ցուցադրել ու բեմադրել է Այովայի համալսարանի պարային բաժինը 2006-ին, Դուարտե պարային ընկերությունը՝ Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում 2007-ին:*

[228] *Ստեղծագործությունը գրվել է 2010թ. հունիսի 23-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում կայացած կոմպոզիտորի հեղինակային համերգի համար և հնչել Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ, որից հետո կատարվել է աշխարհի տարբեր երկրներում:*

կարևոր իրադարձությամբ: Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ ՀԿՄ նախագահի սենյակում էր գտնվում Կոմիտասի կոստանդնուպոլսյան բնակարանի աշխատասենյակի մանրակերտը, որը պատրաստել էր Կ.Պոլսում Կոմիտասի կազմակերպած «Գուսան» երգչախմբի անդամ Արամ Աստվածատրյանը՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, 1969-1970թթ.:

Եվ ահավասիկ 2017թ. սեպտեմբերի 30-ին ՀԿՄ նախագահ Արամ Սաթյանը մանրակերտը նվիրաբերեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտին՝ ի պահ հանձնելով թանգարան-ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու Նիկոլայ Կոստանդյանին:

Շարունակելով կոմիտասյան թեման՝ ավելորդ չենք համարում նկատել, որ Հայաստանի կոմպոզիտորների միությունը դեռևս 1982թ. սահմանել էր Կոմիտասի անվան մրցանակ, որը շնորհվում էր սփյուռքահայ կոմպոզիտորներին: Մրցանակին արժանացել են Համբարձում Պերպերյանը (ԱՄՆ) և Ալիս Թերզյանը (Արգենտինա):

Ի դեպ, Համբարձում Պերպերյանին Կոմիտասի մրցանակը շնորհվել էր Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ 1972թ. Չարենցի համանուն ստեղծագործության հիման վրա (տեքստը՝ հայերեն և անգլերեն) գրված «Requiem Aeternam»-ի (Կոմիտասի հիշատակին) համար, որը 1975-ին կատարվել է Դետրոյտում, ամերիկյան պրոֆեսիոնալ երգչախմբի կատարմամբ և արժանացել ջերմ ընդունելության: «Requiem»-ը հնչել է նաև Երևանում, հեղինակի ղեկավարությամբ: Ի դեպ սա առաջին ռեքվիեմն է աշխարհիկ տեքստով: «Requiem Aeternam»-ը 1980-1981 համերգաշրջանում ամերիկյան և անգլիական երգչախմբերով ու նվագախմբով կատարվել է ԱՄՆ-ում ու Անգլիայում: «Requiem Aeternam»-ի նոտաները 1982-ին կոմպոզիտորն իր մակագրությամբ նվիրել է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին[229]:

Այսօր Միությունն արդյունավետորեն համագործակցում է սփյուռքահայ և արտասահմանյան կառույցների հետ:

ԱՄՆ-ի Ռոդ Այլնդ նահանգում արդեն 20 տարի գործող «Հայկական երաժշտական փառատոն» հայկական մշակութային կազմակերպությունը, որը ղեկավարում է կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսյանը, կազմակերպել է բազմաթիվ համերգներ, այդ թվում՝ Ալեքսանդր Աճեմյանին և Խաչատուր Ավետիսյանին նվիրված համերգները Բոստոնում, ԱՄՆ-ում պրոպագանդելով ժամանակակից հայ երաժշտությունը: Ինչպես նկատում է Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի

---

[229] *Requiem Aeternam, ԳԱԹ, Հ.Պերպերյանի ֆոնդ, N 14:*

երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանը, *«По инициативе Председателя Союза композиторов Армении Арама Сатяна, сопредседателя иностранной комиссии Союза композиторов Армении Константина Петросяна и директора Армянского музея в Бостоне Перча Чекиджяна в 2014 году в Бостоне, Нью-Йорке и Провиденсе прошел фестиваль современной армянской камерной музыки, на котором прозвучали новые сочинения 15 армянских композиторов. Концерты вызвали большой интерес бостонской аудитории, и было решено устраивать такие концерты совместно и периодически. Так, с 2014 по 2017 гг. в Армянском музее Бостона состоялись 14 совместных концертов армянской музыки. «У нас большие планы, - говорит руководитель этой акции Константин Петросян. – Мы хотим приглашать к участию в таких концертах видных музыкантов Армении и Диаспоры»»*[230].

Ի դեպ, հայ երաժշտության պրոպագանդման գործը մեծ թափ էր ստացել դեռևս 1985-1989թթ., երբ Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտական լրատվության և պրոպագանդայի նորաստեղծ կենտրոնը ղեկավարում էր Կոնստանտին Պետրոսյանը: *«И вот, 25 молодых организаторов, в лице Левона Чаушяна и Константина Петросяна, взялись расширять круг творческих связей и включить в него страны Восточной Европы - Чехословакию, Венгрию, Польшу, Югославию, ГДР. В музыкальных центрах этих стран проводились славные музыкальные фестивали, на которых звучала музыка талантливых молодых композиторов Европы и России, а теперь и Армении. Задачи по установлению творческих контактов с зарубежными странами, с республиками Советского Союза не заслоняли для них задач местного значения. Левон Чаушян и Константин Петросян организовывают циклы выездных концертов, охватывая все районы Армении, проводят разного рода музыкальные мероприятия. Целый каскад концертов, конкурсов, фестивалей вовлекал в те годы население Армении в активную культурную жизнь. Это было просветительское движение огромного масштаба. Благодаря такой активной работе Союза композиторов в армянских провинциях возрос интерес к классической музыке, к Комитасу, к творчеству современных армянских композиторов. В каждом районном центре создавались музыкальные школы и даже,*

---

[230] ***Рухкян Маргарита****, Константин Петросян. Мастер своего дела, рукопись.*

музыкальные училища, для них строились прекрасные здания из туфа»[231].

Փարիզի «Արարատ» գիտության միջազգային ակադեմիայի հետ համատեղ, որը ղեկավարում է Էդուարդ Բարսեղյանը, 2017թ. հունիսի 15-17-ը կազմակերպվեց «Առաջավոր Ասիայի երաժշտական ազգաբանություն» խորագրով միջազգային գիտաժողով-փառատոնը: Իսկ վերջերս ՀԿՄ նախագահ Արամ Սաթյանն ու ՀԿՄ անդամներ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, կոմպոզիտոր Միխայիլ Կոկժաևը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, երաժշտագետ Լիլիթ Երնջակյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր, երաժշտագետ Նելլի Ավետիսյանը և երաժշտագետ Գոհար Շագոյանն ընտրվեցին Փարիզի «Արարատ» գիտության միջազգային ակադեմիայի թղթակից անդամներ:

Հայաստանի կոմպոզիտորների միության զարգացման հայեցակարգի առաջնահերթություններից է միջազգային շփումների ու համագործակցության վերահաստատումը, ԱՊՀ երկրների կոմպոզիտորների միությունների և առաջին հերթին Ռուսաստանի և Վրաստանի, ինչպես նաև Չինաստանի կոմպոզիտորների հետ ավանդական կապերի լայնածավալ վերականգնումը: «Համագործակցություն» նախագծի շրջանակներում կայացել են հայ և ռուս երիտասարդ կոմպոզիտորների փոխադարձ համերգները, հայ-վրացական և հայ-չինական համերգները:

Այսպես՝ 2016թ. հուլիսի 9-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգասրահում տեղի ունեցավ հայ-չինական ժամանակակից երաժշտության համերգը, որին ակտիվ մասնակցություն ունեցան ՀԿՄ անդամներ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատողներ՝ արվեստագիտության թեկնածուներ, միջազգային մրցույթների դափնեկիրներ Լիլիթ Արտեմյանն ու Հովհաննես Մանուկյանը: 2016թ. հոկտեմբերին Չինաստանում տեղի ունեցավ պատասխան համերգը՝ չին երաժիշտների կատարմամբ հնչեցին Արամ Սաթյանի, Լևոն Զաուշյանի և Սվետլանա Ալեքսանյանի ստեղծագործությունները:

Հայ-վրացական մշակութային համագործակցության շրջանակներում Հայաստանի կոմպոզիտորների միությունը ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ 2017թ. օգոստոսի 15-26-ը Դիլիջանի Էդվարդ Միրզոյանի անվան կոմպոզիտորների ստեղծագործական տանն անցկացրեց հայ և վրացի երիտասարդ կոմպո-

---

[231] Նույն տեղում:

զիտորների և կատարողների երաժշտական ճամբար, որի նպատակն էր երկու երկրների երիտասարդ արվեստագետների միջև ստեղծել փորձի փոխանակման, մշակութային կապերի ամրապնդման, ինչպես նաև հետագա համատեղ նախագծերի մշակման համար մեկ միասնական հարթակ: 12 օրվա ընթացքում մասնակիցների համար կազմակերպվեցին հանդիպումներ և վարպետության դասեր հայաստանաբնակ և սփյուռքահայ անվանի կոմպոզիտորների և կատարողների հետ: Նախագծի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի հետ:

Կայացավ «Տարվա լավագույն ստեղծագործություն - 2016» մրցանակաբաշխությունը 4 անվանակարգերում՝ «Սիմֆոնիկ երաժշտություն», «Կամերային երաժշտություն», «Խմբերգային երաժշտություն» և «Երաժշտագիտություն»[232], որի արդյունքներն ամփոփվեցին 2017թ. ապրիլի 15-ին: Համաձայն ժյուրիի[233] որոշման՝ «Երաժշտագիտություն» անվանակարգում հաղթող ճանաչվեց Մարգարիտա Ռուխկյանը՝ Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում լույս տեսած հոդվածների համար, «Խմբերգային երաժշտություն» անվանակարգում՝ Աննա Հակոբջանյանը և Գևորգ Հովհաննիսյանը, «Կամերային երաժշտություն» անվանակարգում՝ Աշոտ Զոհրաբյանը՝ Լարային երրորդ կվարտետի համար, «Սիմֆոնիկ երաժշտություն» անվանակարգում՝ Վահրամ Բաբայանը՝ Հինգերորդ սիմֆոնիայի համար:

Վերականգնվում ու զարգանում է համագործակցությունը Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի միջև:

Միությունն արդեն իր թիկունքում զգում է պետական կառույցների շնչառությունը: ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կյանքի են կոչվել մի շարք ծրագրեր:

Վերջին տարիներին Հայաստանի կոմպոզիտորների միության կողքին է Երևանի քաղաքապետարանը, անձամբ քաղաքապետ Տարոն Մարգարյանը: Ի դեպ, ՀԿՄ-ը ստեղծագործական միություններից միակն է, որը երեք ներկայացուցիչ ունի Երևան քաղաքի օրենսդիր մարմնում՝ Երևանի ավագանիում[234], որոնցից երկուսը՝

---

[232] *Ի դեպ, դեռևս 1987թ. սահմանվել էր Հայաստանի կոմպոզիտորների միության ամենամյա մրցանակը, որը տրվում էր երաժշտագետներին՝ երաժշտագիտական լավագույն աշխատանքի (հոդված, հետազոտություն, դասախոսական-լուսավորչական գործունեություն) համար:*

[233] *Ժյուրիի կազմում էին Տիգրան Մանսուրյանը, Մարտին Վարդազարյանը, Ստեփան Ռոստոմյանը, Կոնստանտին Պետրոսյանը և Ալինա Փահլևանյանը:*

[234] *Աննա Աստրյան, Երվանդ Երզնկյան, Մարտին Վարդազարյան:*

Մարտին Վարդազարյանն ու Երվանդ Երզնկյանը, Երևանի պատվավոր քաղաքացիներ են:

Դժվար է գերագնահատել Հայաստանի կոմպոզիտորների միության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի մշակութային կյանքում: Մեր երաժշտական արվեստի կարևոր արժեքներից մեկը դարձած կազմակերպությունը տասնամյակներ շարունակ եղել է ու պիտի կրկին դառնա հայ երաժշտական մշակույթի ամուր ողնաշարը, որը պիտի իր շուրջը համախմբի ոչ միայն պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին ու երաժշտագետներին, այլև կատարողներին՝ ակտիվորեն մասնակցելով Հայաստանում երաժշտության ասպարեզում պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

Պետության հովանավորությամբ և հայ երաժշտարվեստի նվիրյալների մի քանի սերունդների անձնուրաց ջանքերի շնորհիվ ստեղծված, կայացած ու զարգացած մեր Կոմպոզիտորների միությունն այսօր էլ, բոլորելով ծննդյան 85-րդ տարեդարձը, երիտասարդ է իր ժրաջան կոլեկտիվով և դեպի ապագա է գնում ստեղծագործական կենսահաստատ ծրագրերով ու բազում նշանակալի նախաձեռնություններով: Դրա վկայությունն է նաև երիտասարդ կոմպոզիտորների և երաժշտագետների հոսքը Միություն:

Այսօր՝ իր ծննդյան 85-ամյակի շեմին, Միությունն ապրում է ստեղծագործական լիարյուն կյանքով: Այստեղ են միավորված մեր առաջատար կոմպոզիտորներն ու երաժշտագետները, այդ թվում՝ ՀՀ ժողովրդական յոթ արտիստներ[235], ՀՍՍՀ վաստակավոր մեկ արտիստ[236], ՀՍՍՀ արվեստի վաստակավոր երկու գործիչներ[237], ՀՀ արվեստի վաստակավոր քսանվեց գործիչներ[238], ՀՀ մշակույթի վաստակավոր չորս գործիչներ[239], ՀՀ պետական մրցանակի վեց

---

[235] *Ռոբերտ Ամիրխանյան, Վլադիկեն Բալյան, Երվանդ Երզնկյան, Տիգրան Մանսուրյան, Մելիք Մավիսակյան, Գեղունի Զթչյան, Մարտին Վարդազարյան:*

[236] *Ռուբեն Ալթունյան:*

[237] *Գագիկ Հովունց, Արմեն Սմբատյան:*

[238] *Ռուբեն Ալթունյան, Վարդան Աճեմյան, Աննա Ասատրյան, Աննա Արևշատյան, Վահրամ Բաբայան, Արմեն Բուդաղյան, Յուրի Գալստյան, Ռոմեն Դավթյան, Երվանդ Երկանյան, Լիլիթ Երնջակյան, Աշոտ Զոհրաբյան, Մարտուն Իսրայելյան, Արեգ Լուսինյան, Միխայիլ Կոկժաև, Էդուարդ Հայրապետյան, Յուրի Հարությունյան, Խաչատուր Մարտիրոսյան, Մհեր Նավոյան, Ստեփան Շաքարյան, Արքաս Ոսկանյան, Լևոն Զաուշյան, Կարինե Ջաղացպանյան, Ստեփան Ռոստոմյան, Մարգարիտա Ռուխկյան, Էդուարդ Սաղոյան, Արամ Սաթյան, Ալինա Փահլևանյան:*

[239] *Նելլի Ավետիսյան, Էդգար Գյանջումյան, Սվետլանա Սարգսյան, Քնարիկ Փիլոսյան:*

դափնեկիրներ[240], արվեստագիտության բոլոր տասը երաժշտագետ դոկտորները[241] և արվեստագիտության տասնչորս թեկնածուներ, արվեստագիտության բոլոր մասնագիտությունների գծով գիտական աստիճանաշնորհման 016 «Արվեստագիտություն» մասնագիտական խորհրդի ԺԷ.00.02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ բոլոր անդամները:

Մեզ մնում է ի սրտե շնորհավորել Հայաստանի կոմպոզիտորների միության վարչությանը, խորհրդին, բոլոր անդամներին նշանակալի իրադարձության՝ Միության հոբելյանի կապակցությամբ և մաղթել ստեղծագործական նորանոր նվաճումներ՝ հանուն հայկական երաժշտական արվեստի հետագա առաջընթացի:

Այս առիթով նշեմ, որ Հայաստանի կոմպոզիտորների միության հոբելյանական ամենամեծ նվերը 2017թ. սեպտեմբերի 16-ին մեկնարկած Հայ ժամանակակից երաժշտության 4-րդ փառատոնն է, որն անց է կացվում ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Բազմաժանր փառատոնի տասը համերգների ընթացքում կներկայացվեն ավելի քան 80 կոմպոզիտորների գործեր. սիմֆոնիկ, կամերային և երգչախմբային գործերի կողքին կհնչի էստրադային և մանկական երաժշտություն, անդրադարձ կլինի մոնոօպերայի ժանրին ևս: Կլինեն շատ ու շատ պրեմիերաներ:

CODA

Հայաստանի կոմպոզիտորների միության սիրելի՛ բարեկամ:

Շնորհակալ եմ, որ համբերատար ընթերցեցիր Հայաստանի կոմպոզիտորների միության համառոտ պատմությունը, ինձ հետ միասին հետևեցիր նրա անցած բեղմնավոր ուղուն, ուրախացար նվաճումների և ձեռքբերումների, վշտացար կորուստների համար ու ինձ հետ միասին հաստատ հավատում ես նրա խոստումնալից ապագային:

Զգիտեմ՝ արդյոք գտա՞ր քո բոլոր հարցերի պատասխանները, արդյոք կարողացա՞ լիարժեք ներկայացնել Միության անցած արդյունաշատ ուղին՝ խորհրդանշական 85 էջերում: Զգիտեմ: Զէ՞ որ սա առաջին փորձն էր, բայց ոչ երբեք վերջինը: Միությունը շարունակում է իր արդասավոր գործունեությունը՝ հանուն հայ երաժշտության առաջընթացի, ի շահ երաժշտարվեստի զարգացման: Բնականաբար հետագայում նորից անդրադարձ կլինի Միության

---

[240] Ռուբեն Ալթունյան, Վարդան Աճեմյան, Ռոբերտ Ամիրխանյան, Երվանդ Երկանյան, Տիգրան Մանսուրյան, Արզաս Ոսկանյան:

[241] Աննա Ասատրյան, Աննա Արևշատյան, Լիլիթ Երնջակյան, Իրինա Զոլոտովա, Ժաննա Զուրաբյան, Մհեր Նավոյան, Կարինե Ջաղացպանյան, Մարգարիտա Ռուիկյան, Նազենիկ Սարգսյան և Սվետլանա Սարգսյան:

պատմությանը է՛լ ավելի լրացված, առավել հարստացված: Ու թող իմ այս անդրանիկ փորձը հետագայում օգնի, հիմք դառնա ամբողջական ու լիակատար պատմության շարադրման համար՝ առանձին գրքի տեսքով, որտեղ ավելի հանգամանորեն կլուսաբանվեն նրա անցած ուղին և ձեռքբերումները, կնախանշվեն հետագա անելիքները:

* * *

Ուզում եմ խորին երախտագիտություն հայտնել բոլոր նրանց, ում աջակցությամբ լույս աշխարհ եկավ այս գիրքը:

Շնորհակալանքի խոսքերս Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր ***Արամ Արամի Սաթյանին՝*** *գրքի ստեղծման գաղափարի համար:*

Երախտիքի խոսքերս Հայաստանի կոմպոզիտորների միության վետերան-անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր ***Արմեն Գևորգի Բուդաղյանին*** *և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս* ***Աննա Ռոբերտի Ամիրխանյանին՝*** *ուսումնասիրության համար ինձ արժեքավոր նյութեր տրամադրելու համար:*

Շնորհապարտ եմ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դաշնակահարուհի ***Լիլիթ Ռոբերտի Արտեմյանին*** *և սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դիզայներ* ***Մարտին Վարդանի Հարությունյանին,*** *Հայաստանի կոմպոզիտորների միության աշխատակիցներ* ***Աստղիկ Զավենի Մելքոնյանին*** *և Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, կոմպոզիտոր* ***Էդմոնդ Էդուարդի Մակարյանին,*** *ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության խմբագիր* ***Ազատուհի Լյուդվիկի Սահակյանին՝*** *ցուցաբերած աջակցության համար:*

Խորին շնորհակալանքի խոսքերս գրքիս առաջին ընթերցողին, թանկագին հորս՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի պրեզիդենտ, Երևանի հյուսիսային համալսարանի պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր ***Գրիգոր Եգորի Ասատրյանին՝*** *արժեքավոր խորհուրդների համար:*

Եվ, իհարկե, սրտագին երախտագիտություն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր ***Արարատ Վլադիմիրի Աղասյանին****, ում ղեկավարած արվեստագիտական օջախում ծնվեց այս աշխատությունը...*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախերգանք *8*

Հայաստանի կոմպոզիտորների միությունն. հիմնադրումը և կայացումը *11*

Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերելքի ճանապարհին *27*

Հայրենական երաժշտարվեստի առաջընթացի խթանման դիրքերում. Հայաստանի կոմպոզիտորների միության պատմության ծաղկման շրջանը *41*

Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության գոյատևումն ու պահպանումը *74*

Հայաստանի կոմպոզիտորների միությունը Վերածննդի ուղիներում. *78*

Coda *93*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
-85-

АННА АСАТРЯН
СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ
-85-

ANNA ASATRYAN
COMPOSERS UNIUN OF ARMENIA
-85-

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի
Շապկի դիզայնը՝ արվեստագիտության թեկնածու
Մարտին Հարությունյանի

Հրատ. պատվեր № 805
Ստորագրված է տպագրության՝ 28.10.2017թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24